ՕԳՈՍՏՈՍ 1864 ԹՈՒԿԱՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ԳԱՍՏՐԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՁԱԽՄՈՐԳՈՒԹԵԱՄԲ.

(Շարունակութիւն.)

ՈՒԹԵՐՈՐԴ ՑՕԴՈՒԱԾ.

ԿՈՄՍ ՀՈՒՊՕՆ.

Ա՛ի անձրևային խաւար երեկոյ էր: Ոչինչ աստղ փայլում չէր երկնակամարի վերայ: Հողմը հալածում էր իւր առաջև ամպերը, աղմկալից շաչուլումբ ծառերի կատարների միջից և սուլումբ կոմական ամրոցի գըՆացքներում: Ծանր կաթիլներ անձրևի ճայթմամբ զարկումէին դէպ ի պատուհանքը այն սենեկի, ուր մանկոհ և տրտում նստած էր աղնուատոհմիկ գէորգը վառուն լապտերի մօտ: Նա վաստակած գլուխը հաստատել էր դատարկ ձեռի վերայ և անդարձ աչքով դուրս էր նայում լուսամուտների շառաչուն ապակիներից դէպ ի մուքը:

Յանկարծակի մի լսելութիւն օդի դուրս քարշեց պատուհանի մի թևը, անձրևի շիթերը թաց արեցին սենեակը, լապտերի լոցը հանդիպելով հողմի շնչին, տարուբերուեցաւ այս կողմ, այն կողմ և մօտ էր շիջանելու: Նոյն միջոցին սուրհանդակի եղջիւրի զուարթ հնչիւնքը լսելի եղան իւր մանածուխիւններից դուրս խլուած երիտասարդին, շառաչեց մի սայլի աղմկային ընթացք և գէորգը վեր թռած շտապեցաւ դէպ ի բաց պատուհանը, ականջ դրեց ուշի ուշով և աշխատութեր լայնարաց աչքերով թա-

փանցել գիշերի թանձր խաւարի մէջ։ Սուրհանդակի եղջիւրի ձայները հընչումէին աւելի մօտ ու մօտ, վազող ձիանքի սմբակների թնդիւնը խառնուեցաւ դոցա հետ, և սակաւ րոպէք յետոյ դադարեցաւ մի բարձր, ծանր բեռնաւորուած և ամրափակ ճանապարհասայլ ամրոցի դարպասի առաջև։ Դուռները բացուեցան։ Ծառայք և լապտերներ մօտ վազեցին ամենայն կողմից, շտապով բաց արեցին սայլի դուռը, դուրս թեքեցին փոքրիկ սանդուղքը և օգնեցին մի տղամարդի դուրս ելանելու սայլից, որ խոր փաթաթուած էր մի ճանապարհային վերարկուի մէջ։ Ճրագների լոյսը պայծառաւորեց լուսաւորեց օտար դէմքը։ Գէորգը ահափետուեցաւ այն խաւար, անդարձ և անշարժ կրեսից, ո՛ տեսան նորա աչքը։

«Ո՛վ Աստուած», հառաչեց Գէորգը, «այս չէ Կոմս Վալտերի քաղցր և սիրալից դէմքը»։

Հառաչելով և ճնշուած սրտով դարձեալ փակեց նա պատուհանը, ցած թողեց վարագոյրները և անհանգիստ անց ու դարձ արեց սենեկի մէջ։ Նորա խռոված սիրտը դուրս թափուեցաւ հատուկտիր խօսքերով, անկապ ասացուածներով։

«Ուրեմն սա է Կոմս Հուգօն», ասաց նա քթի տակին։ «Սա է իմ մօրեղբայրը, որ ես երբէք տեսել չեմ, որ ես երբէք պիտի տեսնել չէի։ Ի՛նչպէս կ՛ընդունէ նա ինձ։ Ի՛նչ հոգաբարձութիւն կ՛առնէ իմ համար։ Երկմիտ եմ, եթէ կարող էի ես սիրել նորան։ Երկիւղ ունիմ, մի՛ գուցէ նա վարուէր իմ հետ կոշտ և խորշեցուցիչ կերպով։ Թո՛ղ լինի, ինչ որ լինուի։ Ճակատս դէմ կը դնեմ նորան։ Կոմս Վալտերի կտակը պիտի անպատճառ գտանուի, և այնուհետև ես կը լինիմ այն տէրը, որ հրամայելու էր այս տեղ։ Ոչ առանց պատերազմի թոյլ կը տամ իմ ամենևին օտար մօրեղբօրս արտաքսել ինձ իմ իրաւունքից։ Անվեհեր պիտի պահպանեմ ձեռքս, ինչ որ ես համարուիմ իմ սեփականութիւն»։

Փայլատակող աչքերով և հպարտ շարժողութեամբ պատպիսի խօսքեր քթի տակին ասումէր Գէորգը։ Բայց անբաղդը. նա խրոխտալով պարծենումէր մի իրաւունքով, որ դեռ ևս կարօտ էր ապացուցութեան, մի իրաւունքով, որ չունէր ոչինչ հաստատութիւն, ոչինչ հիմք, բայց միայն մի եօթնամեայ երեխայի խօսքեր և ասացուածք։ Այո՛, եթէ յաջողուած լինէր նորան գտանել կտակը, կամ թէ յառաջ բերել տակաւին կենդանի եղած վկան։ Բայց առանց դոցա——նա ունէր սակաւ ինչ յուսալու։

Դուռը բացուեցաւ, և փոքրիկ Բերթան ներս սողաց սենեկի մէջ։ «Անծանօթ քեռին եկել է», ասաց նա։ «Ես տեսայ նորան։ Ո՜հ, նորա կերպարանքը պինդ էս մնայլ է, պինդ էս խոժոռ։ Ես դողումեմ նորանից, երբ մտածումեմ նորա վերայ։

Ու երեխան որպէս թէ պաշտպանութիւն որոնելով, փաթաթուեցաւ երիտասարդին, որ և ինքը, թէև տակաւին չէր խոնարհուած նորա ամլատանութիւնը, չէր կոտրած նորա հպարտութիւնը, կարօտ էր պաշտպանութեան։

«Հանգի՛ստ եղիր, Թերթա», ասաց նա։ «Արտաքին ցոյցը խաբէական է։ Մի սև մօրուք, մի մուայլահայեաց աչք չեն խստասրտութեան ապացոյց։ Գուցէ Կոմս Հուգօն մի բարի և մեղմասիրտ մարդ է, միանք և տեսանենք, թէ ինչ կ'որոշէր մեր մասին։ Որպէս և իցէ, ես միւսմեմ միշտ նորա քաւեր որդին, նորա արենակից ազգականը, և դու մի բարի, չքաւոր, անօգնական երեխայ ես, որ նա իշխելու չէր դուրս ձգել դէպ ի փողոցը։ Եթէ նա կը վարուի իմ հետ բարութեամբ և քաղցրութեամբ, ես կ'աշխատեմ սիրել Նորան։ Իսկ եթէ կը լինի կոշտ և մեծամիտ, ապա ճակատս դէմ կը դնեմ Նորան և վկայութիւն կը բերեմ մեր լուսահոգի բարերարի կտակը։ Մենք կը տեսանենք արդէն, ինչ որ լինելու էր»։

«Հո՜, Գէորգ», պատասխանեց Թերթան, «ես երկիւղ ունիմ ապագայից։ Խնդրումեմ քեզանից, եղի՛ր հեզ և համբերող։ Դու գիտես արդէն, որ բոլոր ծառայքը սիրում չեն քեզ, և եթէ նոքա բամբասանք քեզ կոմսի առաջև, այնուհետև գուցէ դժուարանալու էր քո կացութիւնը։ Չնազանդի՛ր, իմ սիրելի Գէորգ։ Կտակը տակաւին գտանուած չէ, և քանի որ դա յայտնուած չէր, կոմս Հուգօն միւսմէ հրամայող այս տեղ։ Սանձահարի՛ր քո անձը, Գէորգ, սանձահարի՛ր քո մեծամտութիւնը և մի՛տ բեր, որ այսուհետև չկայ մի հայրական քեռի, որ քեզ պաշտպանելու էր։

Երեխան խոսեց լաւ ու խելացի կերպով և աղնուատոհմիկ Գէորգը ապշած կը լինէր իւր անձը շատ տառապանքից, եթէ ականջ դրած լինէր այն փոքրիկ աղջկայ խնդրանքին։ Բայց խոնարհութիւն և տեղատուութիւն օտար էին նորա բնաւորութենից և նա իրօխտալով պարծենումէր իւր կարծիքական իրաւունքով։ Ցհաճութեամբ բարի պիշեր ասաց նա փոքրիկ աղջկան և հեռացրեց նորան իւրեանից, որ ինքը կարողանայ ազատօրէն անձնատուր լինել իւր մտածութիւններին։ Մինչև կէս գիշեր անց ու գարձ էր առնում նա իւր սենեկի մէջ։ Կտակը շատ խոր նստած էր նորա գլխում, և նորա սիրտը այնպէս վկայումէր դորա հաւատութիւնը, որպէս թէ գրած ու դրոշմած ունէր ձեռնումը։

Բայց վա՜յ նորան, որ այդ թուղթը չունէր ձեռնում. և՛ս աւելի վա՜յ, որ իրօխտալով պարծենումէր դորանով և հիմնումէր դորա վերայ պահանջողութիւնք։ — Վերջապէս նա որոնեց իւր անկողինը և մոռացաւ մտածութիւնը, յոյսեր և դիտաւորութիւնը, երբ որ քնի աստուածը տարածեց իւր թևերը նորա աչքերի վերայ։

Մինչ աղնուատոհմիկ Գէորգը իւր մծատուր գալոցքը որոճումէր իւր մտքի մէջ, կոմս Հուգօն նստած էր իւր հանգուցեալ եղբօր սենեկումը և և յարմարութեամբ ու ախորժելի կերպով հանգստացել էր։ Շատ ծառաներ և նոցա մէջ նորա անցած օրերի ընկերակիցը կանգած էին նորա չորս կողմ, սպասումէին նորա հրամաններին և խոնարհութեամբ ուշադիր էին նորա ակնարկութեանը։ Նա չարժանացրեց նորանց ոչինչ հայեացքի, պլ հաստատումէր իւր սիրտը փոքր ինչ զօրաւոր կերակրով և մի սրուակ թոնդ գինիով, յետ ճանապարհի դժուարութիւններին։ Վերջապէս նա ձեռնոցը ձգեց սեղանի վերայ, շրջեց երեսը և նշանացի առնելով հրամայեց

ծառաներին հետևանալ։ Միայն առաջին օրերի սենեկային սպասաւորը կոմս Վալտերի պիտի մնար։

«Ինձ ասել են», խօսքը վեր կալաւ կոմսը, «թէ իմ քոյր որդի Գէորգը այս ամրոցումն կենում է։ Ինչո՞ւ եկել չէ նա իւր մեծարանքը ցուցանելու ինձ»։

Սենեկային սպասաւորը յառաջեց պատասխանել։ Նա չգիտէր թէ կոմսը ինչ դիտաւորութիւնք ունի աղնուատոհմիկ Գէորգի մասին և այդ պատճառով չհամարձակուեցաւ ոչ պաշտպանել նորան և ոչ իսկ զանգատել նորա վերայ։

«Հապց ասա՛ դու աղատ ու արձակ», խօսքը յառաջ տարաւ կոմսը։ «Պատմութեն, թէ նա մի հպարտ և մեծամիտ յիմար էր։ Ճշմարի՞տ է այդ։ Ես կամիմ իմանալ ստոյգը»։

«Այդպէ՛ս», մնածեց իւր մէջ սենեկային սպասաւորը. «ողորմած տէրը չէ այնքան բարեմիտ դէպ ի աղնուատոհմիկ մանուկը։ Ուրեմն, թող մէք օրինաւոր աղենք կերակուրը մինչև նա կը դրուէր սեղանի վերայ»։

«Այո՛, այո՛, ողորմած տէր», ասաց ապա ծառան բարձրաձայն, «հըպարտ, իշխանամիտ և հրամանասէր է այդ աղնուատոհմիկ մանուկը։ Եթէ մարդ իսկոյն չլցուցանէ նորա հաճոյքը, նա անյապաղ դէպ ի գետին կը զարկէր նորան։ Այդպիսի դիպուածք շատ պատահել են։ Ա՛օտերուսն ահա նորա և այգեպանի մէջ, որ պահպանութեր միայն Ձեր իրաւունքը և պաշտպանութեր Ձեր սեփականութիւնը»։

«Ի՛նչպէս էր այդ բանը, ի՛նչպէս պատահեց դա», հարցրեց կոմսը։

«Այսպէս ահա. աղնուատոհմիկ Գէորգը արձակ հանարձակ շրջութեր տնկարանի մէջ և քաղեց ամենալաւ պտուղները և ամենագեղեցիկ ծաղիկները։ Այս բանը կամէր այգեպանը արգելել և մեծարական կերպով հասկացրեց երիտասարդին, թէ նա վարվութեր անիրաւացի, եթէ կամէր աւերել ամենայն բան, և թէ Դուք, տէր Կոմս, դժուար թէ հաւան կը գտնուէիք այդպիսի արարքի։ Ի՞նչ է, ձայն տուեց ապա երիտասարդը, ի՞նչ է. Կոմս Հուգո՞ն (ներեցէ՛ք, մեծապատիւ պարոն, որ ես այդպէս պարզաբար բերան եմ առնում Ձեր մեծութեան անունը) — ինձ ի՞նչ կոմս Հուգօն։ Ես այս տեղ ունիմ հրամայելու իմ քեռու կտակի ըստ թեամբ, և այդ կտակը շուտով կը գտանուի։ Զգուշացէ՛ք, անզգամներ, մի՛ գուցէ զարկեմ ու ծակեմ ձեր գագաթը»։

Երբ որ սենեկային սպասաւորը այս ստից ու ճշմարտից միախառնած պատմութիւնը արել էր, լուեց նա և զննեց կոմսի կերպարանքը զողունի հայեացքով։ Ոչ առանց դիտաւորութեան յիշել էր կտակը, որ արգէն յառաջուց զրկէ Գէորգից նոր կալուածատիրոջ ամենայն շնորհը։ Թէպէտ Գէորգը և մանաւանդ փոքրիկ Ռոբերտ երբէք խօսած չէին ծառաների հետ կտակի մասին, բայց նորա ծածուկ ականջ էին դրել նոցա և այդպէս յայտնուած էր բանը։

Կոմս Հուգօն կնջուեց ճակատը և շիներ իւր սև ընչացքը։ «Այդպէ՛ս, այդպէ՛ս», ասաց նա, «աղնուատոհմիկ Գէորգը ինդրում է իմ կալուածը և

կամէր հեշտ ու թեթեւ իւրացնել իմ սեփականութիւնը։ Ինչ է շատախօսում նա մի կտակի մասին. տխմար»։

Վենեկային սպասաւորը, նոյնը, որոյ վերայ Գէորգը միանգամ արձակել էր շունը, ժպտեցաւ նենգութեամբ և ասաց. «Ահա, այդ երիտասարդը պնդում ամենևին կամակորութեամբ, թէ հանգուցեալ ողբմած պարոնը կտակ էր արել և նորան կարգել էր ժառանգ։ Նա համարում Ձեզ իւր սեփականութեան յափշտակողը, իւր անձը այս գեղեցիկ կամ սութեան օրինաւոր տէրը։ Արդեօք ճշմարիտ է նորա ասածը, այդ կարող չեմ դատել։ Սակայն թուում ինձ, որպէս թէ փոքր ինչ հաւանականութիւն կար նորա ասածի մէջ։ Տարիք ու օրեր յառաջ, բարի, ողորմած տէրը հրաւիրեց իւր մօտ դատարանի պաշտօնակալը, առանձնացաւ նոցա հետ այս սենեկի մէջ, և այդ մի ամբողջ ժամ մնաց նոցա հետ միասին։ Թէ ինչ սահմանադրութիւն արուեցաւ այդ տեղ, կարող չեմ ասել. միայն թէ դրսում, դրան առաջև արդարև լսեցի երբեմն խօսքս կտակ և դորա հետ կից անունս աղնուատոհմիկ Գէորգ. և շատ կարելի է, որ հանգուցեալ պարոն Կոմսը իւր վերջին տնօրէնութիւնը արել է իւր քեռորդու օգտի համար։ Աղնուատոհմիկ Գէորգը պիտի տեղեկութիւն ստացած լինի այդ մասին. պատճառ, նա մի քանի օր յառաջ վեր ի վայր է քրքրել բոլոր սենեակը և որոնել է կտակը»։

«Ախպէս է արել նա», հարցրեց Կոմսը։ «Ուրեմն այժմ պարտ է մեզ փակել նորա ճանապարհը։ Ես կարող չեմ այդպիսի մեծամիտ, հպարտ, քիթը բարձրացնող տղաների համբերել։ Ես կը կարգեմ նորան տարեկան թոշակ մի քանի հարիւր թալեր և կ'ուղարկեմ ուսումնարան, որ նա ուսանի մի բան։ Ինձ հարկաւոր չեն ոչինչ օրսախնդիր շուներ իմ սեփականութեան մէջ։ — Հեռացէք»։

Ախպէս խօսեց նա դէպ ի սենեկային սպասաւորը, և սա բարի գիշեր մաղթելով շտապեց դէպ ի բաց։

Հաղիւ թէ հեռացած էր սպասաւորը, վեր թռաւ Կոմս Հուգօն աթոռից, փակեց դուռը նորա քամակից և այնուհետև սկսաւ ինքը որոնել կտակը։ Նորան հաւանական երևեցաւ, որ իւր եղբայրը ժառանգութենից զրկել է նորան, մանաւանդ երբ որ կշռում էր բոլոր հանգամանքը գործի։ Նա դիտէր, որ իւր եղբայրը չէ սիրել և ամենևին անփոյթ է արել նորան, սկսեալ այն ժամանակից, երբ որ ինքը իւր անյաջող թղթախաղութեամբ կորցրել էր իւր բոլոր գոյքը և ստիպուած էր առանձնանալ հին անտառապետի մէջ։ Սորա հակառակ, քեռորդին վերջին տարիներում հեռացած չէ իւր քեռու կողքից, շաղոփորթել է նորան, մինչև նորա կեանքը փրկել է անգամ, իսկ քեռին պահել է նորան ամենևին իբրև իւր որդի, տուել է նորան ամենայն ազատութիւն, քնքշութեամբ աւերել է նորան, վարուած է նորա հետ իբրև իւր ապագայ ժառանգի հետ։ Քանի որ Կոմս Հուգօն մտածում էր այս հանգամանքի վերայ և համեմատում դոցա հետ սենեկային սպասաւորի տուած տեղեկութիւնքը, նոյնքան ևս տակաւ երկբայում էր,

Թէ արդարև պիտի մի վիճակական գրուածք գտանուի, որ վերաբերի իրեան։

Ինչպէս մի քանի օր յառաջ քուերորդին, նոյնպէս ինքը սկսաւ այժմ վեր ի վայր առնել բոլոր պահարանները և գրասեղանի արկղները, և աշխատութիւն գտանել, եթէ կային ծածուկ ամփոփարաններ։ Բայց նա հանգստացաւ, ոչինչ չգտանելով, ինչպէս ազնուատոհմիկ Գէորգը ոչինչ գտել չէր, և աւելի խորազդ սրտով, քան թէ նա, գնաց իւր ննջարանը, որ ճանապարհի նեղութիւններից յետոյ հանգիստ առնու։

Միւս առաւօտուն մտածեց նա, թէ ինչպէս պիտոյ էր նորան վարուիլ իւր քուերորդու հետ։

«Նորան իսկոյն հեռացնելով ամրոցից, պիտի շատ խօսք ու ղրկոյց յառաջացնէի և վատ անուն ճարէի ինձ», մտածումներ նա։ «Աւելի լաւ էր, եթէ, ինչպէս երեկ ասել եմ, կարգէի նորան մի փոքրիկ տարեկան թոշակ և ուղարկէի նորան որևիւ կարելի էր հեռի դէպ ի օտար աշխարհ։ Այսպիսի կերպով ապահով կը լինէի նորանից և գոնեայ հանգստացած կը լինէի այն բանով, որ նա կարող չէր այնուհետև որոնել յիշեալ կտակի թուղթը»։

Կտակի վերայ մտածելով կոմսը, զգոյնը թռչումէր երեսից։ Նա զգումէր մի ծածուկ երկիւղ այդ բանից, և սիրտը դողումէր այն կասկածանքից, գուցէ մի օր ստիպուած լինէր այն պատուական կալուածը թող տալ իւր քուերորդուն։

Նա հնչեցրեց զանգակը և հրամայեց սենեկային սպասաւորին կանչել Գէորգը։

Սենեկային սպասաւորը գնաց շուտով, և առանց կոճկելու դուռը, առանց ողջոյն տալու, ներս մտաւ Գէորգի սենեակը և յայտնեց նորան կարճ ու խոշոր խօսքերով կոմս Հուգոյի հրամանը։ Կոպտութիւնը այդ սպասաւորի, որ մի քանի շաբաթ յառաջ նորա աչքի հայեացքից դողում ու սարսափումէր, շարժեց նորա մեղքը։ «Ասացէք քեռուս, թէ ես շուտով կ'երևիմ», խօսեցաւ նա։ «Բայց որպէս զի դու դարձեալ չմոռանաս, թէ ինչ յարգանք պարտ էր քեզ մատուցանել ազնուատոհմիկ Գէորգին, քեզ, սեղանի վերայ ամեն գնող ու վեր կաշնող անպիտան ծառայիդ, կամիմ ես մի յիշատակ տալ ճանապարհիդ ուղեկից»։

Այս խօսքերն ասելով, նետեց նա շտապով մօտից հեռացողի քամակից մի կօշկահան փայտի կտոր այնպիսի սաստկութեամբ, որ նա անպատճառ սպանած կը լինէր նորան, եթէ նետուածը դիպած լինէր նորան։ Ծառան չպասեց ազնուատոհմիկ տղայի բարկութեան երկրորդ արտաքսողութեանը, այլ շուտով դարձաւ դէպ ի կոմս Հուգօն, որ սարսափ չափազանց խօսքերով, տաք տաք պատմէ ազնուատոհմիկ Գէորգի նոր չարագործութիւնը։ Կոմսը մխիթարեց այդ մարդը։

«Հանդարտեցէք», ասաց նա, «ազնուատոհմիկ Գէորգը այսուհետև ձեզ չարչարելու և անարգելու չէ։ Ես կը կապեմ նորա անզգամ մարմնան ճանապարհը»։

Ա՛ինչ այս, մինչ այն, Գէորգը հագնուած, և հին հպարտութիւնը և-բեսի և կերպարանքի վերայ, ներս մտաւ Հուգոյի, իւր քեռու առանձնա-սենեակի մէջ: Կարճ ողջունատուութենից յետոյ ազգականների աչքերը փորձողապէս և քննողապէս բևեռուեցան միմեանց կերպարանքի վերայ: Գէորգի հայեացքը դէպ ի ասպարէզ դուրս կանչող, վստահ ու հաստատ էր, կոմսի աչքը նայուածքը նոյնպէս հպարտ, բայց մի փոքր երկիւղաբար, և մի թուղպ հաւաքուեցաւ նորա ճակատի վերայ: Վերջապէս ցած նստաւ նա, նշանացի արեց Գէորգին նստելու հանդէպ նորան և սառցային պաղութեամբ և թշնամական ոճով խօսեց այսպէս.

«Ներեմ դուք իմ քաւերորդին էք, որ ես երբէք տեսել չեմ մինչև այսօր: Մի լերդ տղայ էք երևում ինձ: Ափսոս, որ լրութիւնը անց կե-նալու չէ իմ մօտ: Ես լսել եմ արդէն, թէ որպիսի անմիտ գործերով պար-տաւոր էք կացուցել ձեր անձը, քանի որ կենդանի էր իմ թոյլ եղբայրս, որ չունէր այնքան զօրութիւն սանձահարելու ձեզ: Դուք անարժանապէս վարուած էք ծառաների և տան տղաների հետ, որովհետև չունէիք ոչինչ երկիւղ պատժից: Ես խրատ եմ տալիս ձեզ այսուհետև հրաժարուիլ պղ-պիսի գործերից, եթէ կարող չէիք մի մեզմ սաստողութեան տանել: Ես չգիտեմ խաղ առնել այդպիսի բաների մէջ: Ուշադիր եղիք ասածիս, իմ տղայ»:

Ընդնուատոհմիկ Գէորգի սիրտը ուռաւ կատաղութենից և բարկու-նից, լսելով այս արհամարհական և սպառնալից խօսքերը, և նա մտածու-մէր, թէ պիտի խեղդուի: Արիւնը վազեց դէպ ի երեսը և ներկեց նորան մուգ կարմիր գունով: Բայց իսկոյն դորանից յետոյ գունաթափուեցաւ նա և դարձաւ սպիտակ որպէս պատի կիրը: Նա դողաց: Ոչ թէ ահից ու եր-կիւղից, ո՛չ. այլ ներքին խռովութենից:

«Յառաջ քան թէ Դուք կը սպառնայիք ինձ, իմ քեռի», վերջապէս բերան բացեց նա, «մտածեցէք, արդեօք կարո՞ղ էիք Դուք լսուցանել Ձեր սպառնալիքը: Ես թէպէտ տակաւին մանուկ էի, սակայն գիտեմ հան-դիպել անիրաւութիւնների և վրէժխնդիր լինել նոցա: Եւ դուշացէք զրգռելուց ինձ: Շատ հեշտ կարող էր պատահել, որ Դուք մի օր բռնէիք իմ տեղը, իսկ ես Ձերը, և ես իշխանութիւն ստանայի հալածելու Ձեզ այս ամրոցից, որ Դուք այսօր երևելութեամբ իբրև ձեր սեփականութիւն: Տակաւին չէ հասել բոլոր օրերի երկոն, և ճշմարտութիւնը պիտի յայտ-նուի, երբ որ եկած էր ժամանակը»:

Մի մռայլ տպաւորութիւն պլանդակեց կոմս Հուգոյի խոժոռ և մռայլ երեսը, Գէորգի խօսքերից: Նորա աչքերը թափուեին թշնամական և դաւաճան կայծակներ, և նա ժողովեց խաւար յօնքերը իբրև մի փոթորկի թուղպ:

«Լռի՛ր, լռի՛ր, անմի՛տ տղայ դու: Մի զրգռիր իմ զայրոյթս, ապա թէ ոչ, ջարդ ու փշուր կ'առնեմ քեզ», ձայն տուեց նա որոտագին: «Դու իմ ողորմութեան, իմ գթասրտութեան հացկերդ, դու, այդ թշուառ, ման-կահասակ սինկքորդ, համարձակվո՞ւմես սպառնալ ինձ: Ես կանուխ արդէն

քո Թուենաւոր ատամներդ դուրս քարշել կը տամ։ Դու պիտի ծառայական պաշտօն լցուցանես, ես կը հագցնեմ քեզ սպասաւորի հանդերձ, շուներ կ'արձակեմ վրադ, եթէ դարձեալ միանգամ համարձակուիս դու այդպէս հանդիպել ինձ, որպէս այսօր։ Գնա, հեռացիր. գնա քո սենեակը։ Շատով կը լսես դու, թէ ինչպէս որոշել եմ քո վիճակը։ Գնա, ասումեմ քեզ»։

Կոմսը վեր թռաւ տեղից և ցոյց տուեց երիտասարդին դուռը։

«Ես երթումեմ», ասաց Գէորգը հաստատ ձայնով, թէպէտ տակաւին մի զարհուրելի դունատութիւն պատել էր նորա երեսը։ «Ես երթումեմ, բայց ոչ թէ հնազանդելով Ձեր հրամանին, որ ինձ արհամարհելի է, այլ որովհետև իմ յատուկ կամքս է։ Բարեաւ մնացէք, քեռի։ Այսուհետև իմ ու Ձեր մէջ թշնամութիւն ու պատերազմ է։ Մի կարծէք, թէ ես մի ժամ ևս յապաղելու էի այն տեղ, ուր իմ հետ վարուած էին ոչ իբրև Ձեր քուերորդու հետ, այլ իբրև ամենանուաստ ախոռածառայի հետ։ Բարեաւ մնացէք և մտաբերեցէք այս ժամն։ Մի օր դարձեալ կը տեսանենք միմեանց, բայց այլապէս, քան թէ այժմ։ Թշնամութիւն, թշնամութիւն և պատերազմ կը լինի այսուհետև իմ ու Ձեր մէջ»։

Դարձեալ մի շատ կատաղի հայեացք ատելութեան ձգեց Գէորգը իւր քեռու, բարկութենից այլանդակուած, երեսի վերայ և ապա դուրս վազեց խելագարի նման։ Կոմս Հուգօն փորձ չիորձեց յետ պահելու նորան։ Նա զգումէր, որ կարողանալու չէր կոտրել աղնուատոհմ մանուկի ապառաժի պէս ամուր վճռականութիւնը և ախտաւոր կամակորութիւնը։ Այո՛, նա զգումէր իւր անձը թեթևացած իբրև մի բեռնից, երբ որ պատանին թողել էր սենեակը։ Զօրեղ տագնապը դողացել էր տակաւ երիտասարդի եբեսից։

Գէորգը վազեց դէպ ի իւր սենեակը, ժողովեց մի ալծաթափամար, իւր հանգուցեալ քեռու պարգեւածը, իւր ունեցած չունեցածը դրեց մի արկղի մէջ և հաստատապէս որոշել էր թողուլ քեռու ամրոցը և փորձելու իւր բաղդաւորութիւնը աշխարհի վերայ։ Նա չվախենց ոչինչ արտասուք. այո՛ նա բաղդաւոր էր համարում իւր անձը, որ այնպէս շուտով ճակատագրի վճիռը հասել էր նորան։ Փոխանակ այն երկիւղալի ակնկալութեան, որ աւելի, քան թէ որ և իցէ միւս բան, տանջել էր նորան, ստացել էր նա այժմ հաւաստութիւն։ Նա գիտէր, որ այսուհետև ոչինչ ակնկալելի բան չունէր իւր քեռուց, բայց ի ատելութենից և հալածանքից և թէ կորոշ էր նա զինուորուիլ դորա ընդդէմ։ Նա մտածում չէր ապագայքի վերայ, կամ եթէ մտածումէր, երկիւղ չունէր դորանից։ Նա կարծումէր, թէ ունի բաւական զօրութիւն իւր մէջ քաջութեամբ պատերազմելու ընդդէմ աշխարհի հեղեղին։

Տակաւին չէր աւարտել նա ճանապարհի պատրաստութիւնը, և ահա արտասուալից աչքերով ներս մտաւ փոքրիկ Բերթան և հառաչելով պատմեաց նորա վրդն։

ՈՉ, Գէորգ», ձայն արձակեց նա, «օրպիսի ահաւոր բան է, որ դու կամիս թողուլ ինձ։ Ինչո՞ւ դու չհետևեցար ինձ. ինչո՞ւ չաշխատեցիր դու մեղմացնել քո քեռու սիրտը։ ՈՎ Աստուած, ինչպէս կը լինի քո վիճակը դուրսում, աշխարհի բաց հրապարակի մէջ»։

«Լ՛ուռ, լո՛ւռ, Ռ՛երթա, իմ բարի մանուկ», պատասխանեց Գէորգը։ Մի՛ լար և մի՛ վախեցիր։ Ես մանուկ եմ, առոյգ և առոյգ։ Ինձ դժուար լինելու չէր ուր և իցէ պատսպարել իմ անձը։ Միայն թէ դու մի՛ մոռացիր ինձ և եթէ կտակի թուղթը գտած էիր, վե՛ր կալ դորան և պահի՛ր և ոչ ում չցուցանես, բայց միայն ինձ։ Կամի՞ս դու այսպէս ընթանալ»։

«Լ՛ո՛, ես կամի՛մ այդպէս ընթանալ», պատասխանեց Ռ՛երթան։ «Երբէք մոռանալու չեմ քեզ։ Եւ եթէ կարող ես դու, երբեմն տո՛ւր ինձ տեղեկութիւն քո մասին»։

Գէորգը խոստացաւ, գնեակ տարին միանգամ հարց ու խնդիր առնել փոքրիկ աղջկայ մասին և ապա հրաժարուեցաւ նորանից։ Երկար միջոց սեղմեց նա դողդողագին արտասուող երեխան իւր կուրծքի վերայ, դրոշմեց համբոյրներ նորա շրթունքի վերայ և շտապմամբ հեռացաւ։ Մի ախոռածառայի, որ նորան աւելի անձնանուէր էր էր, քան թէ միւս ծառաները, պատուէր տուեց ճանապարհի արկղը հասուցանելու մօտակայ քաղաքը, ուր կամէր նա սպասել դորան։ Այնուհետև հրաժարուեցաւ իւր մինչև այժմ եղած վառաւոր բնակարանից և առանց յետ նայելու ուղղեց գնացքը դէպ ի մօտակայ քաղաքը, սիրտը վանական յոյսերով լի։ Նա առանց արգելքի հասաւ այն տեղ, իջևանեցաւ հիւրանոցում և սկսաւ ծանրութեամբ մտածել, թէ ինչ բանի պիտոյ էր նորան ձեռնարկել։

Շատ ու շատ զանազան պիտաւորութիւններից յետոյ, որ յղանալով նորա մէջ նոյնպիսի ջերմութեամբ ըմբռնուեցան, որպիսի արագութեամբ բաց թողուեցան, երբ որ աւելի մօտից կշռել էր նորանց, վերջապէս որոշեց գնալ մօտակայ մայրաքաղաքը և այն տեղ թողուլ դիպուածին հոգաբարձու լինել իւրեան։ «Այդ տեղ կը գտանուի արդէն մի պաշտօն, որ պատշաճաւոր էր ինձ», ասումէր նա իւր մէջ, և շատ անհանգիստ չլինելով կերաւ իւր ճաշն հացը, որ բերեցին նորա սենեակը։

Ա՛շխից յետոյ բերեցին նորա ճանապարհի արկղը և Գէորգը տեղեկութիւն առաւ առաւել պատեհ միջոցի մասին, երբ կարելի էր հասանել մայրաքաղաքին։ «Այսօր երեկոյին, լինն ժամին կ՛ուղևորուի սուրհանդակը դէպ ի այն տեղ», ասաց նորան բարեմիտ տանուտէրը, և Գէորգը դիմեց դէպ ի սուրհանդակի դիւանատունը, վճարեց արծաթը իւր տեղի համար սուրհանդակի կառքում, երեկոյին, պատշաճաւոր ժամուն գնաց այն տեղ իւր կապոցով և բոլոր գիշերը արշաւեց կառքով դէպ ի մայրաքաղաքը։ Ամեն մի րոպէում աւելի հեռանում էր նա այն տեղից, ուր բաղդը առանց նորա զուշակութեան արդէն ծիծաղել էր քաղցր երեսով դէպ ի նա։

Եթէ սուրհանդակը մի ժամ յետոյ ճանապարհ ընկած լինէր, աներկբայելի էր, որ Գէորգը այնպէս շուտով տեսած լինելու չէր մայրաքաղաքը։

—

ԻՆՆԵՐՈՐԴ ԳՕԴՈՒԱԾ·

ՓՈՔՐԻԿ ԲԵՐԹԱՆ ԳՏԱՆՈՒՄԻ ՄԻ ԳԻՏՑ·

Հազիւ թէ գէորգը թողել էր ամրոցը, կոմս Հուգօն ուղարկեց ծառաներից մինը փոքրիկ Բերթայի մօտ և նորան կանչել տուեց իւր մօտ։ Անբաղդ մանուկը շուտով սրբեց արտասուքը, փչեց իւր թաշկինակի վրայ, տաքացած տեղը սեղմեց լացից կարմրացած աչքերի վերայ, աշխատեց այսպէս իւր տրտմութեան հետքը թագուցանել կոմսից։ Ապա դողալով գնաց նա իշխանի մօտ։ Նորա սիրտը գրեթէ դադալի կերպով տրոփումէր ծանր քայլափոխութեան մէջ, և նա լի էր ահով ու երկիւղով։ Վախկոտութեամբ և դողալով ոտք կոխեց նա կոմսի սենեկի մէջ։

«Երի՛ այս տեղ, իմ մանուկ», ասաց կոմսը այնպիսի մեղմութեամբ և քաղցրութեամբ, որպէս կարող էր. «արի՛ այս տեղ և պատմիր թէ ի՛նչպէս մինչև այսօր եղած է քո վիճակը։ Մի՛ վախիր և լաց մի՛ լինիր։ Ես ցաւեցնելու չեմ քեզ, և դու կարող ես նայնպէս, կամ ևս առաւել երջանիկ ապրել իմ մօտ, քան թէ յառաջ, եթէ դու պարզմտութեամբ կը պատմես ինձ, ինչ որ դու գիտես, կամ թէ կարծումես իմ հանգուցեալ եղբօր կտակի մասին։ Խօսի՛ր և ոչինչ մի՛ թագուցանիր ինձանից»։

Ներթան մի րոպէ յողդողդուեցաւ և երկմիտ էր, արդեօք համարձակ էր նորան ասել ամենայն ինչ։ Բայց նորա սիրտը ընդդէմ էր ստութեանը, և նա մի քանի րոպէ ուշը վերան ժողովելով, պատմեց անկեղծաբար և ճիշդ, ինչ որ գիտէր Լիշատակարանի մասին։ Կոմս Հուգօն լսումէր նորան մեծ ուշադրութեամբ։

«Ուրեմն իմ եղբայրը այս սեղանի մէջ է դրել Թուղթը», հարցրեց նա վերջապէս, երբ որ լսել էր գործի բոլոր ընթացքը։ «Ա՛յնու ամենայնիւ», ասաց նա քթի տակին, «կարելի չէ գտանել կտակը, և եթէ դա եղած է, պիտի գարձեալ ոչնչացրած լինի»։

Ընհանգիստ անց ու դարձ էր առնում նա սենեկի մէջ և խորասոյզ եղած իւր մտածութիւնների մէջ, շուտով մոռացաւ փոքրիկ Բերթան, որ գնաց նստաւ իւր հին պատսպարանում, վարագոյրների քամակում։ Երեխայի պարզ խօսքերից վերահասու էր եղած, որ իւր եղբայրը կամք ու դիտաւորութիւն է ունեցել զրկել նորան ժառանգութենից և իւր կոմսական աշխարհը թողուլ իւր քուերը որդուն։ Այս բանը զայրացնումէր նորան, և որովհետև նա սարսափումէր մտածելով, մի գուցէ կորած կտակը գարձեալ յայտնուի, նա առ ի սրտէ ուրախ էր, որ իւր քուերորդին, ինչպէս նա յոյս ունէր, յաւիտեան թողել է ամրոցը։ «Թէ այսպէս, թէ այնպէս», կամաց ասումէր նա քթի տակին, «կալուածի տէրը ես եմ, ուրեմն իրաւունքն իմն է։ Ես եմ առաւել մեծաւոր ժառանգաւորը և պիտի զրկանք պատահած լինէր ինձ, եթէ իմ ժառանգութիւնս յափշտակած լինէին ինձանից։ Եթէ կը գտանեմ կտակը, և ո՛վ, եթէ ոչ ես կարող էի գտանել նորան,

եթէ դա կայ ստուգութեամբ, պնուհետև յապաղելու չէի ոչնչացնել դրան։ Այդ անպիտան Գէորգը չպիտի վայելէ, մինչ ես կարօտութեան մէջ էի։ Նա չպիտի հրամայէ այն տեղ, ուր ես աստուածային իրաւունքով տէր ու իշխան եմ։

Ընանց ուշադիր լինելու Բերթաին, որ նորա ամեն մի կամաց, քթի տակին ասած խօսքը լսել էր, հեռացաւ վերջապէս սենեկից, փակեց յետքից դուռը, ցած գնաց, որ իւր նոր կալուածին աւելի մօտ ծանօթանայ։ Երբ որ նորա քայլերի ձայնը հեռուում ցնդուեցաւ, Բերթան դուրս եկաւ իւր թագստարանից։

«Ո՛չ, ոչ», ասաց նա, «անհաճոյ կը լինէր Աստուածուն, որ մի բարձի թողի արած, դէպ ի աշխարհի հրապարակը դուրս ձգած որը ղկուէր։ Եթէ ոչ ոք հոգատար չէ նորան, գոնեայ ես կը լինիմ»։

Նա մօտեցաւ գրասեղանին և ընտեց նորան։ Բանալին դրած էր ծածկումը։ «Ես ստուգութեամբ գիտեմ», սկսաւ նա խօսել ինքն իւր հետ, «որ կոմս Վալտերը այս տեղ պահեց կորած թուղթը։ Այս արկղի մէջ դրեց նորան, և անտարակոյս դա պիտի դեռ ևս նորա մէջ լինի։ Եթէ ես միանգամ հետազօտէի և որոնէի այդ բանը։ Կարծեմ թէ յանցանք լինելու չէր։ Իմ կամքս այն է միայն, որ իրաւունքը իրաւունք մնար և ոչ անիրաւութիւնը և ստութիւնը նեռմացնէին ճշմարտութիւնը։ Ես կը բանամ»։

Նա համարձակութեամբ բացեց Բերթան գրասեղանի պահարանը և ոտնեց նորան մանրամասնաբար։ Ամեն մի թուղթ ջոկ ջոկ քննեց նա։ Ամեն մի թերթ դուրս հանեց և դրեց մի կողմ։ Բայց արկղը արդէն գրեթէ դատարկուած էր, բայց նորա փափագելի բանը տակաւին գտնուած չէր. և ահա նկատեց նա ամենևին յետնակողմում մի քանի այլ թուղթեր։ Նա պարզեց ձեռքը այն տեղ, որ դուրս քարշէ նորանց։ Բայց նորա ձեռքը չհասան. վասն որոյ դուրս քարշեց բոլոր արկղը և դրեց նորան մի աթոռի վրայ։ Եւ վերջին գրուածքը վեր ի վայր որոնեց նա, բայց անօգուտ։ Հառաչելով բարձրացրեց նա ծանր արկղը, որ գարձեալ ներս սողացնէ սեղանի մէջ։ Բայց այդ բանը արժէր նորան շատ աշխատութիւն. պատճառ, արկղը շատ ծանր էր։ Աղջիկը գործ դրեց իւր բոլոր ոյժը, բայց յանկարծ արկղը դուրս պրծաւ նորա ձեռքից և ծանր ու դղրդագին վայր ընկաւ սենեկի տախտակամած յատակի վերայ։ Եւ ահա արկղի յատակը միջից երկու կտոր դարձաւ, բացուեցաւ, և—կտակը դրած էր հիացած Բերթայի աչքի առաջև։ Վե՛ր կալաւ նա թուղթը, և մեծագին յիշատակարանը նորա իշխանութեան տակ էր։

Ընմենից յառաջ, այդ մեծակշիռ թուղթը ապահովեց նա, թաքցրեց իւր հանդերձների տակ և զգուշութեամբ պահպանուէր նորան։ Ապա վեր թռաւ ցնծալով և պար էր գալիս սենեկի մէջ. երբեմն ծիծաղուէր նա երանական ուրախութենից, իսկ երբեմն թափվուէին աչքից հիացուցիչ խնդութեան քաղցր արտասուք։ Նորա միակ մտածութիւնն էր, թէ «ինչպէս կ'ուրախանայ Գէորգը»։

Ա՛յրջապէս մտածեց նա, թէ հարկաւոր էր իւր հետազօտութեան հետ-

քը ոչնչացնել։ Վասն որոյ նա դարձեալ փակեց արկղի երկմանեայ յատակը, թուղթերը դրեց իւրեանց առաջին կարգով և մղեց արկղը իւր առաջին տեղը։ Ապա աշխատեց դուրս գալ սենեկից, որ Կոմս Հուգօն յանկարծակի վերայ չհասանէ։ Բայց դուռը փակած էր և ոչ ոք լսեց նորա թակելը և ձայնարկութիւնը։ Նա դողայ երկիւղից, մի գուցէ դարձեալ խլեն նորա ձեռքից այն մեծակշիռ գիւտը (գտած բանը), և իւր երեխայական պարզմտութեամբ կարծուեր, որ Կոմսը նորա երեսից նկատելու էր, թէ գտել է կտակի թուղթը։ Եւ ինչ պիտի ծնանէր դորանից։ Ո՞չ ապաքէն նա ինքը իւր յատուկ ականջով լսել էր, որ Կոմս Հուգօն ոչնչացնելու էր դորան, եթէ նա ձեռք ձգէր դորան։ Բայց այսպէս չպիտի լինէր։ Թէպէտ և Բերթան մի փոքրիկ աղջիկ էր, բայց նորան ասուեր մի ուղիղ դաստիարակութիւն, որ բոլոր իրաւունքը Գէորգի կողմումն է և ոչ թէ քեռու կողմում։ Բերթան հաստատութեամբ որոշել էր թողուլ իւր կեանքը, քան թէ դուրս տալ իւր ձեռքից կտակի թուղթը։

Վերջապէս, երբ որ երկար մտածել էր, թէ ինչպէս դուրս գայ սենեկից, որոշեց նա բայց պատուհանից դուրս գալ դէպ ի բակիօնը և այն տեղից ցած թռչել կանաչ խոտի վերայ։ Նա յանձն առաւ այս գործը։ Թէպէտ երկիւղալի էր նորան բարձրութիւնը և նորա գլուխը պտտուեցաւ, երբ որ նայեց դէպ ի ցած, սակայն նա վստահացաւ իւր արդար գործի վերայ, վեր ելաւ վանդակապատի վերայ, փոքրիկ ձեռներով ամուր բռնեց նորան, մինչև որ իւր մարմնով կախուեցաւ օդի մէջ, փակեց աչքերը, մի փոքրիկ աղօթքի մէջ յանձնեց Հոգին Աստուծոյ ողորմութեանը և — բաց թողեց ձեռները։

«Ո՛հ, ա՛յ, այդ ինչ յիմարութիւն է քեզանից, Բերթա», կանչեց մի ձայն։ «Քո ճշմարիտ բաղդն է, որ ես դէպուղիղ այս րոպէիս անց էի կենում այս տեղ և քո փոքրիկ ոտերը տեսայ օդի մէջ խաղալով։ Դու ձեռք ու ոտք փշրած կը լինէիր, երեխայ, եթէ ես չվազէի և չբռնէի քեզ ձեռներիս մէջ»։

Բերթան նայեց իւր շորս կողմը և տեսաւ իւր անձը ծառաներից մինի գրկի մէջ, որ նորա անկման միջոցին բռնել էր նորան։

«Շատ ու շատ շնորհակալութիւն, Քրիստիան», ասաց աղջիկը։ «Ես ինքս կարծումեմ, որ դու ազատել ես ինձ մի սաստիկ անկմանից»։

«Հայց, ո՛վ երեխայ, այդ ինչ խելք է քո կողմից, ցած թռչել բալկօնից»։

«Ո՛հ, Քրիստիան, այլապէս կարող չէի ես կոմսի սենեկից դուրս գալ, որովհետև դուռը փակած էր։ Այժմ թո՛ղ գնամ ես դէպ ի իմ պաճուճապատանքը. ես կամիմ մի փոքր խաղալ»։

Քրիստիանը զգուշացրեց այդ փոքրիկ աղջիկը նմանապիսի հանդգնակ գործերից, ցած դրեց դորան դէպ ի գետին, առանց հարց ու փորձ առնելու նորանից—ինչպէս կարծումեր—մանուկի շարժուելիքը։ Իսկ Բերթան վազելով գնաց դէպ ի փոքրիկ սենեակը և նախ և յառաջ ամիսուիս կտակի թուղթը մի փակելի արկղի մէջ, ուր նա սովորաբար պահում էր

պաճուճապատանների հանդերձքը և իւր զարդերը։ Բանալին դուրս քաշեց և դրեց ծոցը։ Ապա դուրս վազեց նա որոնելու ախոռի սպասաւորը, որ Գէորգի ճանապարհի արկղը պիտի տանէր մօտակայ քաղաքը։ Նորան կամէր աղջիկը մի նամակ յանձնել Գէորգի վերայ, որ սորան տեղեկութիւն տայ անակնկալ գիւտի մասին։ Բայց ախոռի սպասաւորը արդէն գնացել էր և Բերթան տիպաւեցաւ յետ գալ իւր սենեակը, առանց գործ յառաջ տարած լինելու։

Այժմ ինչ պիտի առնէր նա։ Նա չհամարձակուեցաւ վստահանալ դէպ ի մի այլ ոք, որովհետև շատ լաւ գիտէր, թէ Գէորգը սիրելի չէր սպասաւորներին։ Նա երկիւղ ունէր, մի՛ գուցէ դաւաճանէին նորան։ Վերջապէս վեր թռաւ նա, դիմեց դէպ ի գրասեղանը և շարադրեց այսպիսի տողեր.

«Սիրելի Գէորգ,

Որովհետև մի մեծակշիռ տեղեկութիւն ունիմ տալու քեզ, վասն որոյ խնդրումեմ աղաչագին, որ վերադառնաս իմ մօտ դէպ ի ամբողջը։ Շտապի՛ր և մի՛ յապաղեր, որովհետև քո կեանքի բոլոր բաղդաւորութիւնը կախ է այս տեղեկութենից, որ ոչ ոք, բայց միայն քեզ կարող եմ տալ։

Քո, քեզ սիրող քոյր
Բերթա».

Նամակը կնքեց, գրեց նորա վերայ հասցէն և թաղդրեց նորան իւր գործելի գուլպայի մէջ։ Ապա ձգեց իւր փոքրիկ վերարկուն և ցած վազեց դէպ ի մերձակայ դիւղը, որոյ աշտարակի ծայրը կարելի էր տեսանել բակոնից։ Այն տեղ կենդանի մի կին, հին բարեկամը իւր լուսահոգի մօր, որ, ինչպէս աներկմիտ էր նա, ցուցանելու էր նորան այդ սիրոյ սպասաւորութիւնը, այսինքն գնալ դէպ ի քաղաքը և յանձնել աղնուատոհմիկ Գէորգին նորա գրուածը։

Բերթան շուտափոյթ գնացքից շնչակտուր հասաւ գիւղին և բաղդատորութեամբ տանը գտաւ իւր խնդրած կինը։ Սա յօժար էր լցուցանել Բերթայի տիպագին խնդիրը և իսկոյն ճանապարհ ընկաւ, իւր հետ առած նամակը։ Բայց երբ որ նկած էր քաղաք և երկար հարց ու փորձից յետոյ տեղեկացաւ, թէ ինչ հիւրանոցում իջևանած էր աղնուատոհմիկ Գէորգը, լուր տուեցին նորան, թէ խնդրած մարդը փոքր ինչ յառաջ սուրհանդակի կառքով ուղևորուած է դէպ ի մայրաքաղաքը։

Այնուհետև ոչինչ կարելի չէր առնել և պառաւ կինը տիպուած էր, առանց գործ յառաջացնելու, իւր արած ճանապարհը յետ չափել։

Յնդան, գիշերին հասաւ դա ամրոցը, ներս սողաց Բերթայի փոքրիկ սենեկի մէջ և գտաւ փոքրիկ աղջիկը տակաւին արթուն։

«Այհա, իմ՝ սիրելի», ասաց նա, «վա՛ր ելար դարձեալ քո նամակը։ Աղնուատոհմիկ Գէորգը գնացել է դէպ ի մայրաքաղաքը և արդէն շատ ու շատ հեռացած է մեզանից»։

Թէպէտ և փոքրիկ Բևրթային անչափ անախորժ էր այս լուրը, սակայն նա հարկադրուած էր զսպել իւր անձը և համարձակվում չէր ցոյց տալ չափազանց տհաճութիւն։ Նա առատաբար վարձատրեց պառաւ կինը, պրեց իւր նամակը և մեքուսը դրեց համրերութեամբ սպասել առաջին լուրերին Գէորգից, և ապա միտ դնելով դռցա, առնել իւր տնօրէնութիւնքը։ Նա որոշեց այս գաղտնիքը, որպէս և իցէ, պահել ամենայն զգուշութեամբ։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՑՕԴՈՒԱԾ.

ՈՒՆԱՑՆԱՑԱԾ ՑՈՑՍԵՐ.

Դեռ ևս Գէորգի մեծամտութիւնը ամենևին կոտրուած չէր, երբ նա ել. մայրաքաղաքում դուրս թռաւ սուրհանդակի կառքից, իւր սեփականութիւնը յետ պահանջեց և հեռացաւ։ Նա փափուկ քայլերով շրջումէր արձակ փողոցների մէջ և այնպիսի վստահ ու յանդուգն աչքերով նայումէր չորս կողմը, որպէս թէ այդ մեծ քաղաքի խուռն բազմութեան մէջ, ոչինչ կարող չէր պակասել նորան։ Ո՛չ ապաքէն ունէր նա ծոցուրը մի քանի հարիւր թալեր, և զգումէր իւր անձը զօրեղ, առոյգ և առոյգ։ Ի՛նչպէս հեշտ պիտի լինէր նորան մի պատշաճաւոր պաշտօն գտանել այն տեղ։

Գէորգը հետևեցաւ այն տղամարդին, որ նորա ճանապարհի արկղը մի սպլակի վերայ յառաջ էր շարժում, դէպ ի մի հիւրանոց, խնդրեց ցուցանել նորան մի սենեակ, հաց կերաւ և կազդուրեց իւր զօրութիւնքը և մի քանի օր ապրեց այն տեղ իշխանի պէս։ Նա մտածումէր վայելել իւր ազատութիւնը այնչափ, որչափ տակաւին հնարաւոր էր նորան և կարծումէր թէ նորա ձեռքում եղած արծաթը անվերջանալի էր։

Մի օր ըբօսնումէր նա մայրաքաղաքի փողոցներում և պատահմամբ մօտեցաւ կայսերական պալատին, որոյ փառաւոր շէնքը սկսաւ քննել մեծ ուշադրութեամբ և զարմացմամբ։

«Ա՛հ», ասաց նա քթի տակին. «արդարև սա մի ամենևին սքլ բան է, քան թէ իմ հանգուցեալ քեռու ամրոցը։ Եթէ նա ինձ ասած լինէր, թէ այս տեղ ամենայն ինչ այսպէս գեղեցիկ ու փառաւոր էր, գուցէ յօժարուած լինէի մնանել կայսերական պաշտօնի մէջ և սենեկապետի բանալին ղղեստիս յետքում կախ արած շրջել գահլիճների մէջ, որ, անտարակոյս, անլսելի փառահեղութեամբ պիտի գտանուէին այդ ապարանքի մէջ.

Այս րոպէիս մի մարդ կոծեց նորա ուսը, և Գէորգը շուռով շրջեց երեսը։ Մի արժանապատիւ, ալևոր տղամարդ կանգնած էր նորա քամակում։ Նա անչափ նուրբ և խստակ հագնուած էր և նորա խորշոմած դէմքը ցուցանումէր այնքան բարեսրտութիւն և սէր, որ Գէորգը յետ պահեց

այն սաստիկ խօսքերը, որ կամէր արդէն դուրս թափել բերանից, և նայեց ալևորի վերայ հպարտ ու յանդուգն հայեացքով։

Օտարականը ժպտեցաւ։ «Ես լսեցի, մանուկ դու», ասաց նա, «ինչ որ դու այս րոպէիս խօսումդիր քո մէջ, և արդարև մի գեղեցիկ բան էր իրև սենեկապետ ներս հնչել կայսերական ճոխութեան և փառաւորութեան օդը։ Բայց ամենից յառաջ պիտոյ էր սենեկապետ լինել։ Այնպիսի տղայը, որ պիսի դու ես, նախ և յառաջ կը կոխուին աղնուական մանկլաւիկների ի մէջ և կամաց կամաց, աստիճան առ աստիճան յառաջ կը խաղան, մինչև կը հասանէին այն բարձրութեանը, դէպ ի ուր ձգտումդիր նորա։ Այս ու այն տարին կը գայ ու կերթայ այդ բանի վերայ, և շատ ու շատ են նորա, որ երբէք չեն հասանում իւրեանց նպատակին։ Կայսերական ապարանների սենեակները և դահլիճները ունին շատ կոկ յատակ, և ով միանգամ սայթաքեց և վայր ընկաւ, նա շատ անգամ երբէք այլ ևս կարող չէ իւր անձը վեր ուղղել»։

«Այդ ի՛նչ խօսք է», ձայն տուեց Գէորգը լի մեծամտութեամբ։ «Ես կամիմ բաստ ձգել (մարջ բռնել), որ վայր ընկնելու չէի։ Ես սովոր եմ կոկ յատակների և վայ նորան, որ նենգաւորութեամբ կամէր իմ ոտս սահեցնել։ Իսկոյն կամէի գնալ և յայտնել յօժարութիւնս մտանելու մանկլաւիկների կարգը։ Դուք կը տեսանէք, ալևոր, այսօր, էգուց շողշողելով գլեստիս յետքում մի փոքրիկ սսկեղէն բանալի, այնպէս գեղեցիկ, որպիսի միայն ցանկալի էր կրել որ և է սենեկապետի»։

«Այ՛ թէ, իմ որդի, կամիս դու արդարև մանկլաւիկ դառնալ։ Արդեօք ուղի՞ղ է քո ասածը», հարցրեց զարմացած ալևորը, քննելով Գէորգին, փորձողական թա՛նգող աչքով։ «Ա՛յո՛, այո՛, քո կերպարանքը բաւական փառաւոր է, և եթէ դու ունիս կշռաւոր ջատագովներ և բարեխօսներ քեզ, ապա վատ չէր լինելու, եթէ պալատի մարշալը զգեստաւորէր քեզ ոսկի վերջաւորներով զարդարած, կարմիր, մանկլաւիկեան հանդերձով։ Իսկ եթէ այդ լինելու չէր, ապա ի սէր Աստուծոյ, հեռո՛ կաց այդ բանից և մի՛ համարձակուիր ներս խցկուիլ պալատի օդաշրջանի մէջ. պատճառ, նախատինքով ու խայտառակութեամբ և արհամարհութեամբ դուրս կը վարեն քեզ»։

«Չկարծեմ. ահա շուտով կը տեսանէք», խօսեց մեծամտութեամբ հպարտ պատանին և ուղիղ ճանապարհով քայլեց դէպ ի կայսեր պալատը։ Օտարականը կանչեց նորա կամակից, բայց երբ որ Գէորգը ոչինչ լսում չէր, շտապող քայլերով հետևեցաւ նորան. «Ահա, իմ որդի», ասաց նա, «տալիս եմ քեզ իմ կարտը և խնդրում եմ քեզանից գործ դնել նորան, եթէ դու կը գայիր պալատի մարշալին մօտ։ Գոնեայ դա աղատելու է քեզ նախատանքից, եթէ ասէիր թէ ես հոգսի մէջ եմ քո վիճակի մասին»։

Գէորգը վեր կալաւ կարտը, առանց շնորհակալ լինելու և անհոգութեամբ դրեց նորան իւր կողքի ծոցը։ Նա ընկատեց, որ դա իսկոյն վայր ընկաւ։ Անզգաստութեամբ անց կացաւ դորա վերայից։ Սակայն այդ փոքրիկ կարտը կարող էր նորան ազատել շատ անախորժութիւններից և հոգսերից։

Թայց Գէորգը մեծ կարծիք չունէր այն Թեոդոս, նուրբ և իտակ, բայց անշան հագնուած օտարականի մասին։ Նա միայնում չէր փառաւոր պալատական հանդերձի մէջ. նորա կուրծքը զարդարած չէր նշաններով։ Նա համարում էր նորան մի աննշան մարդ, որպիսիք հարիւրաւորներ ամէնայն օր սովոր են չափել կայսերական մայրաքաղաքի փողոցները։

Վստահութեամբ վեր ելաւ Գէորգը լայն մարմարիոնեայ սանդուղները, և խայտաճամուկ զգեստներով շողշողուն դռնապանից, որ հանդիստ, իբր պալատական պաշտօնական, ձեռնում անց ու դարձ էր առնում տաճարակի վերայ, հարցրեց պալատի մարշալի մասին։ Դռնապանը մեծ աչքերով նայեց պատանի մարդու վերայ, և առանց պատասխանելու նորա հարցմանը, հարցրեց, Թէ ո՛վ էր Գէորգը և ինչ կամէր պալատի մարշալից։ Հպարտ Գէորգի մէջ արիւնը վազեց դէպ ի գլուխը և դժուարութեամբ միայն զսպեց իւր անձը և յաղթեց իւր բորբոքուն բարկութեանը։ «Ես կարևոր գործերի մասին ունիմ խօսելու նորա հետ, որ ոչ ոք չպիտի իմանայ, բայց միայն պալատի մարշալը», ասաց նա։

Գէորգի հաստատ, հպարտ բնաւորութիւնը, նորա մեծամիտ կերպարանքը և նորա բովանդակ վստահ յանդիմանութիւնը երկիւղ բերեց դռնապանի վերայ և նա ցոյց տուեց տղային սանդուղքը, որոյ վերայով հասանելու էր պալատական պաշտօնակալի սենեակներին։ Զուարթ քայլերով Թռաւ Գէորգը դէպ ի վեր։ Ոչինչ դուշակութիւն որ և իցէ մեծութեան անհանդիստ արեց նորա սիրտը։ Նա կարծում էր, Թէ նորան պէտք էր միայն ասել իւր անունը, և իսկոյն կը ստանար իւր ցանկացած պաշտօնը։ Տակաւին երազում առաջին երջանիկ օրերը, երբ հարուստ, կարող կոմս Վալտերը եղած էր նորա պաշտպանը և առաջնորդը։ Նա մտածում չէր, որ ինքը կոմսի պատուին պարտական էր այն բոլոր կշիռը, ուշադրութիւնը և մեծարանքը, որ անցած օրերում ցուցանում էին նորան, այլ մտածում էր միայն, որ իւր անձնական պատուականութիւնքն էին, որով գտել էր նա յարգութիւն և հնազանդութիւն։

Գէորգը տակաւին շատ պատանի և շատ տմտմար էր։

Պալատի մարշալի նախասենեակը հասած, Գէորգին դադարեցուցին բազմաթիւ սպասաւորքը, հարցանելով նորա անունը, որ յայտնեն նորա գալստը պալատի մարշալին։ «Ինձ ասում են Գէորգ Փրանկենշտէյն», ասաց պատանին Հպարտութեամբ, «և իսկոյն ու անյապաղ պիտոյ է ինձ կարևոր բանների մասին խօսել պալատի մարշալի հետ։

Նոր ծառայքը տեղիք տուին երիտասարդի ամուր և վճռական ընթացքին, որովհետև Գէորգը արդարև ցուցանում էր մի ճշմարիտ մեծատնաբար դաստիարակուած երիտասարդի բոլոր քաղաքավարութիւնը և կերպարանքը։ Սպասաւորներից մինը իսկոյն նորա մասին տեղեկութիւն տուեց տիրոջը, և Գէորգը ներս Թողուեցաւ։ Վստահութեամբ ներս մտաւ նա պալատական մարշալի շողշողուն սենեակը և գտաւ նորան հանդիսաւոր զգեստի մէջ մի փափուկ, մետաքսեայ կերպասով յօրինած սօֆայի վերայ նստած։ Մարշալը առանց տեղից վեր կենալու և փոքր ինչ Թեքելով գլուխը, ըն-

դունեց Գէորգի ողջոյնը և հարցրեց քաղաքավարութեամբ, բայց կարճ. «Ի՛նչ կամիք ինձանից»:

Ընդարձակ և ամենամեծ վստահութեամբ, թէ յաջողելու էր նորա դիտաւորութիւնը, պատասխանեց Գէորգը. «Ես ցանկանում եմ ընդունուիլ կայսերական մանկլաւիկների մէջ»:

Պալատի մարշալը վեր թռաւ, որպէս թէ դիպել էր նորան մի եղեռնարար կան հարուած: «Ինչպէ՞ս», հարցրեց նա, «արդեօք ուղիղ լսեցի. կայսեր մանկլաւիկների դասակից կամիք լինել»: Եւ նա ծիծաղեց: «Դա ոչինչ վատ բան չէ», խօսքը յառաջ տարաւ հեգնաբար, «եւ մեք շատ բաղդաւոր կը համարենք մեր անձը ունենալով ապարանքում մի պատանի ձեր տեսքով ու կերպարանքով. բայց, ասացէք ինձ, խնդրեմ, ինչ արժանաւորութիւնների վերայ հաստատուած են ձեր ակնկալութիւնքը այդ խնդրած շնորհի մասին»:

Վէորգը կարմրեցաւ: Այդ ինչ արժանաւորութիւնք էին, որ հարկաւոր են: Իւր շփոթման մէջ կարող էր նա լոկ անկապ և անյօդ խօսքեր պատասխանել և թոթովեց. «Իմ քեռիս, իմ լուսահոգի քեռիս, կոմս Վալտերը — նա — նա կամէր — նա ասում էր — »:

Եւ Գէորգը լռեց դարձեալ:

Յենկապետի երեսը աւելի և աւելի ցոյց առաւ մի արհամարհական ժպտման և, երևումէր, թէ զմայլվում է երիտասարդի շփոթմամբ: «Ուրեմն», ասաց նա, «ուրեմն Ձեր քեռին կամէր — ասում էր: Ապա ի՞նչ կամէր նա և ի՞նչ էր ասում. և արդեօք ո՞ւր էր Ձեր քեռին»:

Վէորգը ժողովեց իւր զօրութիւնքը: «Իմ քեռիս էր կոմս Վալտեր Օթմենբուրգեան: Նա իւր կենդանութեան օրերում խոստացաւ այս տեղ ապարանքում մի պաշտօն հոգալ իմ համար: Այն միջոցին ես մերժեցի նորա առաջարկութիւնը: Բայց որովհետև նա կենդանի չէ աւելի, և նորա եղբայրը մի չար և վատթար մարդ է, ուստի որոյ թողել եմ Օթմենբուրգեան ամրոցը և եկած եմ այս տեղ, որ որոնեմ ինձ մի պաշտօն: Եւ այդպէս մի մանկլաւիկի պաշտօն երևեցաւ ինձ պատշաճաւոր»:

«Այո՛, հաւատում եմ այդ բանիդ, երիտասարդ», արհամարհաբար պատասխանեց պալատի մարշալը, «բայց այժմ դա յաջողելու չէ Ձեզ: Վերադարձէ՛ք — Աստուած ձեր հետ — դէպ ի Օթմենբերգ, հաշտուեցէ՛ք Ձեր քեռու հետ, որ գուցէ թէ հիմնաւոր պատճառ ունէր տհաճ լինելու Ձեզանից, և եթէ դա ցանկանայ այնուհետև, որ դուք նուիրեցէք Ձեր անձը կայսեր պաշտօնին, ապա, եթէ կամիք, յետ եկեցէ՛ք. մինչև կը լինի այդ, բարեաւ մնացէք»:

Ըստ այսմ շարժուելիութեամբ ակնարկեց պալատի մարշալը դէպ ի դուռը և շուտով շրջեց դէմքը: Գէորգը ցած էր կործանուած իւր բոլոր երանական յոյսերի երկնքից, և կանգնած էր այն տեղ կապած ու սառած: Նորա սիրտը դէպուղիղ այնպէս էր, որպէս թէ մի կայծակ պայծառ օդի միջից ցած իջած լինի նորա գլխի վերայ: Նա տեղից չշարժուեցաւ և ձեռներով ծածկեց ամեհիւց կարմրատակած երեսը: Վերջապէս պալատի մարշալը հնչեցրեց

ղանգակը և մի քանի սպասաւորք ներս մտան սենեկի մէջ։ «Դո՛ւրս տարէք այս երիտասարդը», ասաց պալատի մարշալը։ «Նա հիւանդ է։»

Սպասաւորքը մտնեցան Գէորգին, տարան նորան առանց ընդդիմադրելեան և թողեցին կանգնել այն տեղ։ Մի վայրենի հայեացք ձգեց նա դէպ ի փառաւոր ապարանքի վերայ և ապա հեռացաւ այնպիսի արագութեամբ, որչափ թոյլ էին տալիս ոտերը, որ միայն ազատուի ծառաների արհամարհական ծիծաղից և կծու հայեացքից։ Ամենևին ղէշացած և ջարդ ու փշուր եղած իւր սրտի ներսում, հասաւ նա հիւրանոցին և առանձնացաւ իւր սենեկի մէջ, և մի զուշակութիւն գալոց ցաւերի մասին ու ահարկու կերպով լուսացաւ նորա հոգու մէջ։ Նա փղձկուեցաւ դէպ ի արտասուք և նորա հին մեծամտութիւնը և հպարտութիւնը երևումեր ամենևին դէպ ի ցած գլորուած այն առաջին արգելքից որ փակել էր նորա ճանապարհը։ Կամաց կամաց միայն շունչ առաւ նա և ծանրութեամբ մտածեց, թէ այսուհետև ինչ պէտք էր առնել։ Նա համարեց իւր արծաթը։ Միայն մի փոքրիկ դումար մնացած էր նորա ձեռնումն։ Հաղիւ թէ այնքան, որ կարողանար մի շաբաթ ևս ապրել այնպէս, ինչպէս մինչև այժմ ապրած էր։ Նա խելամուտ եղաւ, որ նորան հարկաւոր էր ամենայն կերպով հոգաբարձու լինել, ուր և իցէ պատսպարան գտանել իւր համար։ Նա որոշեց միւս օրին փորձ փորձել իրրև աստիճանաւոր ներս մտանել թիկնապահ զօրախմբերի միևի մէջ։ Այս որոշմանից յետոյ հանգստացաւ նա, և քնեց դիշերը անխռով։

Գալոց առաւօտուն ճանապարհ ընկաւ նա, տեղեկացաւ թէ ուր էր հեծելազօրքի գնդապետի օթևանը, և դիմեց այն տեղ այնչափ կանուխ, որչափ ներումեր պատշաճը։ Ճանապարհին լի էր յուսով։ «Զինուորներ միշտ հարկաւոր են», մտածումեր նա, «և ուր պղբան լէյտենանտներ վազվզումն այս կողմ, այն կողմ, այս տեղ կը լինի տակաւին մի նորի համար ևս։ Բաւական վստահ վեր քայլեց նա սանդուղքի վերայից դէպ ի գնդապետի օթևանը. մի մօրուքաւոր պահապան զինուոր խմաց տուեց տիրոջը նորա գալուստը և ներս թողեց նորան։

Երբ որ նա ներս մտաւ սենեակը գնդապետի մօտ, սորան գտաւ արդէն լիովին զգեստաւորուած պաշտօնական հանդերձով և պատրաստ դուրս գրնալու։ Երևումեր, թէ նա շտապումէ. այս րոպէիս նա գօտևորվումեր իւր սրով և հարցրեց խոժոռութեամբ. «Ի՛նչ կամիք ինձանից»։

«Ես ցանկանումեմ մտանել Ձեր զօրախումբի մէջ, «պատասխանեց Գէորգը։

«Լա՛ւ է. ապա գնացէք, յայտնեցէք ձեր կամքը զօրախմբի ֆելդվերեբլին, և եթէ ձեր վկայագիրները կարգի են, դժուար լինելու չէր ձեզ հպատակեցնել զինուորի հանդերձ։ Մնացէք բարեաւ»։

Առանց աւելի ուշադիր լինելու Գէորգին, գնդապետը շրջեց երեսը և թողեց նորան կանգնած այն տեղ։ Գէորգը զարմանումեր գնդապետի կարճ ու խոժոռ խօսակցութեան վերայ, բայց նորա խօսքերից քաղեց այսքան, որ դժուար լինելու չէր շատ շուտով ներս կոխուիլ լէյտենանտի զգեստի մէջ և դորանով մխիթարվումեր։ Բաղաքավարութեամբ ողջունելով գնդապետը,

Թողեց Նորա սենեակը, տեղեկացաւ պահապան ղինուորից, Թէ ուր պիտի որոնէր Փելդվեբելին, և շտապեց դէպ ի կաղարման, ուր ցոյց էր տուել Նորան ղինուորը։ Փելդվեբելին հարցանելով, շուտ գտաւ նա։ Վստահութեամբ գնաց Գէորգը Փելդվեբելի հետևից դէպ ի Նորա, Թամբաքուի ծխից սևացած, կեղտոտ սենեակը։

«Ես գալիս եմ պնդապետի մօտից», ասաց նա վստահութեամբ, «ես ցանկանում եմ ղինուոր դառնալ և նա ուղարկեց ինձ ձեր մօտ, որ ստուգէք իմ վկայագիրները և ապա տաք ինձ ղինուորական զգեստը»։

Փելդվեբելը հարցաքննեց Գէորգի որպիսութիւնը և իմացաւ, որ նա աղատ և ինքնիշխան էր, և մտածումեր, Թէ ոչինչ գժուարութիւն չկայ մեր Գէորգը ընդունելու զօրախումբի մէջ։ Սակայն Փելդվեբելը ցաւակցական աչքով նայումեր երիտասարդի վերայ և զգուշացրեց Նորան մտանելուց ղինուորական ասպարիզի մէջ։

«Լաւ», պատասխանեց Գէորգը, «ես մտնում, քաջ և ամուր եմ. դէպուղիղ ղինուորական պաշտօն պատշաճ է իմ մարմնիս և իմ ախորժակիս»։

Փելդվեբելը շարժեց գլուխը։ Բայց որովհետև Գէորգը հաստատ մնաց իր կամքի վերայ անպատճառ ղինուոր դառնալու, վասն որոյ Փելդվեբելը կանչեց պահապանը և հրամայեց Նորան ղինուորական զգեստը բերել։ Սոլդատը գնաց և իսկոյն բերեց իր հետ մի բազմութիւն զգեստների։

«Պապա Թող այժմ տեսանենք, ո՛ր զգեստը յարմար էր», ասաց Փելդվեբելը, ամենևին այլ ոճ վեր կանչելով։ «Ցած դիր քո նուրբ զգեստը, բերո՛ւտ. ահա նե՛րս կոխիր մարմինդ այս պաշտօնական զգեստի մէջ»։

Գէորգը չշարժուեցաւ տեղից և անդարձ աչքով նայումեր այն նեղ և պոչը խուզած զգեստի վերայ, որ Փելդվեբելը առաջարկեց Նորան։

«Լաւ ի՞նչ բան է», ձայն տուեց Գէորգը հիացմամբ և զգուանքով։ «Մի՞թէ այդ կեղտոտ, պոչը խուզած, մի հասարակ սոլդատի հանդերձի մէջ պիտի սեղմեմ մարմինս։ Դուք արդարև խաղ էք առնում իմ հետ, Փելդվեբել։ Ես կամիմ օֆիցեր դառնալ, օֆիցե՛ր. գոնեայ լէյտենանտ։ Բերեցէք ինձ զարդարուն զգեստը օֆիցերական էպօլետներով, յետոյ կը խօսենք այլ բանի վերայ»

Փելդվեբելը և սոլդատը բարձրացրեցին մի մեծ ծիծաղ։ «Ահա, չասացի՞ ես», ձայն տուեց Փելդվեբելը, տակաւին պատերազմելով իր ծիծաղասիրութեան հետ։ «Զէ՞ի մտածում ես, որ մի այդպիսի բան պիտի ծածկած լինի սոլդատ դառնալու կամեցողութեան յետքում։ «Ո՛չ, իմ որդեակ, օֆիցեր դառնալ այս մեր աշխարհում այդպէս շուտով չլինի, և քեզ մի քանի տարի հարկաւոր էր դեռ ևս համբերել, մինչև կը տեսանէիր էպօլետները շողշողալով ուսերիդ վերայ։ Բայց դու այս կողմ, այն կողմ մի՛ ընկնիր, հապի՛ր սոլդատական զգեստը, դու արդէն ձեռք բերած րեկրուտ ես, և պիտի մտանես սաստի ու հրամանի տակ։ Մի՛ ընդդիմացիր. դու ինքդ ընտրել ես քեզ այդ վիճակը։ Ինչո՛ւ չլսեցիր ինձ, երբ որ զգուշացնում էի քե՛զ դորանից։ Այժմ անագան է յետ քարշուիլ»։

Այս խօսքերովս փեղկվեցաւ բռնեց Գէորգի մի ձեռը, սոլդատը միւս ձեռը, և երկուքը աշխատում էին նորա հանդերձքը խլել վերայից։ Բայց Գէորգը իւր շփոթմանից զգաստանալով, բարկութիւնը յաղթեց նորա ամէնին և պայծառ բոցերով վառուեցաւ նորա սրտի մէջ։

«Ինձ թողէք ինձ», ձայն տուեց նա, «ապա թէ ոչ, վատ կը լինի ձեզ»։

Սակայն սոլդատները ամենևին անհոգութ արեցին նորա աղաղակը և ամենայն հաստատութեամբ յառաջ տարեցին իւրեանց աշխատութիւնքը, Գէորգի վերայից բաց խլել նորա հին զգեստքը և կոխել նորան սոլդատական զգեստի մէջ։ Այնուհետև Գէորգը ժողովեց իւր բոլոր ջղութիւնքը, դուրս քարշեց ձեռը սոլդատի բռնող ճանկերից, կծկած ձեռնով զարկեց փեղկվեցելի դէմին, այնպէս որ նա շուարուեցաւ, սաստկութեամբ բացեց դուռը և որսորդներից հալածուած եղջերուի պէս փախաւ փողոցների միջով, յառաջ քան թէ արմացած պատերազմողքը զգաստացած էին այն թմրութենից, որոյ մէջ ձգել էր նորանց Գէորգի արագաշարժ գործողութիւնը։

Իւր տանջողներից ազատուած էր Գէորգը, բայց ոչ չարչարող մտատանջութենից իւր գալոցքի մասին, որ այժմ ալեկոծումէր նորա սիրտը։ Անմխիթար և անօգնական թափառումէր նա այժմ մայրաքաղաքի փառաւոր փողոցների մէջ, ասես թէ յիմարացած միանգամայն, և զգումէր իւր սրտի տրտմը հոգսերից և յուսերից։

Ի՛նչ պիտոյ էր նորան առնել։ Ի՛նչ բանի ձեռնարկել։ Մի բանի պէտք էր նորան յանձնառու լինել, եթէ չկամէր սովամահ լինել։ Ո՜հ, ի՛նչպէս ապաշաւումէր այժմ, որ իւր լուսահոգի քեռու խրատներին լսել չէր։ Փոխանակ այժմ հանդիպելու ծաղրի, արհամարհանքի, պատանութեան, խոշոր ընդունելութեան, այն ժամանակին վայելչութեամբ և ուրախութեամբ ընդունուած կը լինէր։ Նա անիծումէր իւր յիմար հպարտութիւնը, որ չէր կամեցած ծառայել, մինչ արքունական ծառայութիւնը պատիւ ու պարծանք էր։ Ի՛նչպէս փափագումէր այժմ անցած գնացած օրերին։ Ի՛նչպէս ապաշաւումէր նա, որ ճակատը դէմ էր դրել իւր քեռու հոգոյին։ Նորա մտ ունեցած կը լինէր գոնեայ օթևան, կերակուր և զգեստ և դուցէ ժամանակով յաջողուած կը լինէր նորան գտանել իւր քեռու շնորհը։ Նա հառաչեց և հոգոց հանեց, որճաղատ իւր մէջ այս և միւս շատ բաներ, և դիջումը, փորը էր մնացել, որ խորտակէր նորա սիրտը։ Անմխիթար վերադարձաւ նա գէպ ի իւր օթևանը, փակեց անձը իւր սենեկի մէջ, ինչպէս երեկեան օրին, և արտասուեց, ինչպէս երեկ, միայն թէ այսօր աւելի առատօրէն և դառնապէս թափփոփումէին այդ արտասուքը։ Նորա հոգին քանդուած էր և նա զգումէր իւր անձը անբաւելի թշուառ։ Եւ ահա միայնակ էր նա, առանց բարեկամի, առանց արծաթի, առանց կարեկից ծանօթների դուրս ձգած աշխարհի արձակ հրապարակի մէջ, և չգիտէր, թէ ի՛նչպէս ճար ու դեղ գտանէ իւր վրէին։

Յանկարծ միտ բերից նա այն տումնակը, որ նորան տուել էր անծանօթ

մարդը կայսերական ապարանքի Հանդէպ։ «Ա՛յդ մարդը, գուցէ կարող էր քեզ մի բարի խրատ տալ», մտածեց նա։ «Նորա կերպարանքը մեղմ և քաղցր էր։ Գուցէ նա ողբերմի քեզ և ցուցանէ քեզ Հնար ու ճանապարհ պատուաւոր կերպով ստանալու օրական Հացդ»։

Շուտով Գէորգը ձեռը տարաւ դէպ ի ծոցը և որոնեց բաղդ կամ գոնեայ մխիթարութիւն խոստացող տոմնակը։ Դա չկար։ Նա որոնեց իւր բոլոր ծոցերում, վեր ի վայր շրջեց նորանց, դատարկեց նորանց և չգտաւ տոմնակը։ Դարձեալ անիծեց նա իւր թեւեւամտութիւնը և զրեթէ յուսահատեցաւ։ Նա ձգեց իւր անձը անկողնի վերայ և ամենասև պատկերներ Հանդիսացան նորա Հոգու առաջև։

Երջումը, վերջումը միտ բերեց նա ամենաբարի Հայրը երկնքում, իւր Աստուածը և, ինչ որ նա իւր բաղդաւորութեան օրերում արել չէր, արեց այժմ. նա կցեց ձեռները և աղօթեց։ Ջերմեռանդութեամբ աղաչեց նա Աստուած, ուղարկել իւր օգնութիւնը, ուխտեց նորան դառնալ մի այլ և աւելի լաւ մարդ, Թողուլ իւր պակասութիւնքը և իւր գործի ու խօսքի մէջ միշտ մտաբերել նորան։ Այս բանս Հանգստացրեց նորան. դորա մէջ գտաւ նա խաղաղութիւն։ Ծանրութեամբ և անկեղծութեամբ մտածեց նա իւր անցած օրերի վարքը, ոչինչ չարդարացրեց, ոչինչ չծածկեց իւրմանից և զգաց, որ իւր կեանքի բոլոր միջոցում եղած էր մի շատ մեղաւոր և աներկիւղած մարդ։ Ամպէս խոր և անկեղծութեամբ խոստովանեց այս բանս, որ այժմեան վիճակը Համարումէր մի արդար պատիժ իւր անցած մեղքերի, և որոշեց անտրտունջ Համբերութեամբ ու Հեզամտութեամբ յանձն առնուլ այն բոլոր վիշտերը, որ Աստուած իւր իմաստութեամբ ուղարկելու էր նորան։

Ընդադրութիւնը չունել էր նորան մի աւելի լաւ մարդ, և նա այժմ, իւր չբաւորութեան և թշուառութեան մէջ, աւելի Հաճոյ էր Աստուծուն, քան թէ յառաջ իւր փառքի և անՀոգութեան մէջ։

Երբ յանկարծ վաստակածութենից փակուեցան նորա աչքերը, նա քնեց մինչև միւս առաւօտուն արևը ծագեցաւ նորա անկողնի վերայ։ Այնուհետև զարթեցաւ նա, վեր կացաւ տեղից և մի նոր աղօթքի մէջ կրկնեց իւր, երեկեան երեկոյին արած որոշմունքը և ուխտերը։ Ապա դուրս գնաց, որ տեսանէ, արդեօք դիպուածը կամ թէ նորա ճակատագիրը ցուցանելոց էր նորան մի ելք իւր տառապալից վիճակի միջից։

Երբ որ նա այսպէս խորհրդածելով շրջումէր մարդաշատ փողոցների մէջ, նկատեց մի գրօշ այսպիսի մակագրութեամբ. Դիւանատուն, ուր կարող են տեղեկութիւն ստանալ ամենևքեան, որ կամին գործ։ «Ա՛հ», մտածումէր Գէորգը, և նոր վստահութիւն ծնուեցաւ նորա Հոգու մէջ, «այդ է ահա իսկապէս, ինչ որ դու խզրտումէիր։ Դադարեցնումը ուղղել է քո քայլերը դէպ ի այս տեղ»։

Կայ ոտք կոխեց պիւանատան մէջ և գտաւ այն տեղ մի Հաստաւոր տղամարդ խորամանկ դէմքով և մի մեծ ակնոցով քթի վերայ։ Ա՛ա, պիւանա-

տան տէրը քրքրուէր թղթերի մէջ և, երեսուէր, հալիւ թէ նկատել էր ամչկոտ եկաւորը։ Գէորգը վերջապէս դարձուց խօսքը դէպ ի նա.

«Պարոն», ասաց նա. «ես տեսայ Ձեր դրօշը և եկած եմ խորհրդակից լինելու Ձեր հետ։ Ես որոնումեմ մի պաշտօն, ուր ես պատուաւոր կերպով կարող էի վաստակել իմ հացը։»

«Հապէ՞ս», պատասխանեց օտարականը, իւր թուղթերը յետ դնելով և սուր ու փորձողական աչքով չափելով Գէորգը գլխից մինչև ոտք։ «Ի՞նչ էք ուսել»։

«Ես տեղեակ եմ ձի հնծնելու և հրացան արձակելու և պիտեմ ինչ ինչ լեզուք», պատասխանեց Գէորգը, որ մեծ դժուարութեան մէջ էր, մտածելով, թէ շատ փոքր պիտանի հմտութիւնք ստացել էր իւր բաղդաւոր օրերի մէջ։

«Այդքա հացտու հմտութիւնք չէն», ասաց ծանրութեամբ դիւանատան տէրը, և ես մեծ յոյս չունիմ օգտակար լինելու Ձեզ։ Բայց ցոյց տուեցէք ինձ Ձեր վկայագիրքը։ Ես կը մտածեմ, թէ ինչ կարելի էր առնել ձեր համար։

«Ես վկայագիրք չունիմ», ասաց Գէորգը ահաբեկուած։ «Ես լաւ դերդաստանի որդի եմ և տակաւին ծառայել չեմ։

«Այո՛ւք և վկայագի՛րք չունիք, երիտասարդ», ձայն տուեց հասակաւոր տղամարդը։ «Ուրեմն հոգացէ՛ք ինքներդ ձեր համար. պատճառ, ես զրեթէ կամեի գուշակել, որ դուք յարմար չէիք և սպասաւոր կամ թէ լակէյ լինելու։ Մի այլ պաշտօն կարող չէի գտանել ներկայ հանգամանքիս մէջ։ Նե այդ ևս շատ դժուար և տարակուսելի կը լինէր։ Կամ թէ կամէի՛ք, որ ես աշխատէի որոնել Ձեզ մի այդպիսի պաշտօն»։

Գէորգը գունաթափուեցաւ իբրև մի մեռած, երբ որ լսեց այս խօսքերը։ Սպասաւո՛ր, լակէ՛յ. և սորա մասին ևս տակաւին անպէտ։ Նա, որ կարողացել էր հրամայել մի ապարանքի, մի կոմսութեան, բազմաթիւ ղուգած ծառաների, նա պիտի այսօր մի լակէյի հանդերձ վերան առնո՛ւր։ Չէ՛. այս կարող չէր նա։ Յուսահատութեամբ լի դուրս վազեց նա դիւանատանից դէպ ի արձակը, չպատասխանելով ոչինչ, բայց միայն արձակելով մի ճնշած ձայն ցաւի։ Դիւանատան հասակաւոր տէրը սառնութեամբ նայուեր նորա յետքից, ակնոցը, որ հետ էր քարշել ճակատի վերայ, դարձեալ ուղղեց, նոր ի նորոյ վեր կալաւ իւր թղթերը և քթի տակին խօսուեր այսպէս. «Ահա՛, դա երեսուէ ինձ մի ամենևին խորթաբարոյ տղայ, եթէ խաբերաները և վատթարները ձգեն դորան իւրեանց ճանկը, դա շուտով հասանելու էր կախաղանի։ Սուաճառութիւնը ցաւեցուցիչ է. եթէ այդ տղան չդողանայ, ապա չգիտեմ, ի՛նչպէս պիտի հաց ճարէ»։

Այսպէս ինքն իւր հետ խօսելուց յետոյ, դիւանատան տէրը դարձեալ խորասոյզ եղաւ իւր գործերի մէջ և իւր գրագրութիւնների մէջ թաղուած շատ շուտով մոռացաւ անբաղդ երիտասարդը, մեր Գէորգը։

Իբրև մի ուշաթափ դուրս վազեց այս տեղից Գէորգը, յուսահատ խեթկողութեամբ ճանապարհ բացից փողոցների մէջ լցուած ամբոխի մի-

ջով և շտապեց դուրս գալ քաղաքից դէպ ի արձակ բնութիւնը։ Այս տեղ ճոխ, գեղեցիկ աստուածային աշխարհից շրջապատուած, զարձեալ զգաստացաւ և աղաչեց Աստուած, ուղարկել նորան մխիթարութիւն և զօրութիւն իւր Հոգուց Սրբոյ։ Այդպէս դէպ ի ցած խորտակուած երբէք զգացել չէր իւր անձը, ինչպէս այս ժամերի մէջ. և նա արդարև կարօտ էր այն ամենատաւտ մխիթարութեանը, որ ազդեց նորա մէջ մի առաջնորդող նախախնամութեան մտածութիւն։ Յակաւին նա ոտքի վերայ էր, տակաւին յուսահատուած չէր, և նա զգում էր, թէ կարող չէր կործանուիլ և ամենևին կորչիլ, քանի որ ամուր բռնած ունէր իւր Աստուածը և նորա պատուիրանները։

ՏԱՍՆ ԵՒ ՄԻԵՐՈՐԴ ՀՕԴՈՒԱԾ.

ՓՈՐՁԱՆՔԸ.

Երեկոյեան լուսին, մի քանի շաբաթ վերեւում պատմած անցքերից յետոյ մայրաքաղաքի առաւել մարդաշատ փողոցների մինի մէջ, տների երկայնութեամբ, խիտ մեծ սողում էր մի երիտասարդ, ընայելով դէպ ի աջ ու ձախ անցաւոր մարդերի կամ թէ հպարտութեամբ արշաւող կառքերի և արքունական սայլերի վերայ։ Նորա երեսը գունաթափ ու մաշուած էր, հանդերձը քերուած ու տրորած, և սովածութիւնը նայում էր նորա աչքերից, երբ որ նա մօտից անց կենալով հայեացքը բևեռեց մի հացագործի առատալից խանութի վերայ։ Դժուար էր նորան հրաժարուիլ այս հրապուրիչ տեսարանից։ Նա դադարեց խանութի մօտին և հառաչեց։ «Հարկաւոր է, հարկաւո՛ր է», Հոգոց հանեց նա կամաց։ «Սովածութիւնը կըտրատուի աղիքներս, և ես զգում եմ իմ անձը զրկեմ ուշաթափ, տկարութենից և թշուառութենից։ Ո՛վ դառն, դառն բոպէ, որ տանջում ինձ, որ ստիպում ինձ գնալ մուրալու։ Ո՛հ, ո՛վ կարող էր մի քանի ամիս յառաջ դուշակել այս բանս»։

Երիտասարդը ոտք կոխեց խանութի շէմքի վերայ, դադարեց դարձեալ, ապա կրկին մի ոտք յառաջ կոխեց, դարձեալ ծեաց կանգնած և, ինչպէս կարելի էր տեսանել, յոդոդվում էր իւր դիտաւորութեան մէջ։ Հպարտութիւնը պատերազմում էր սովածութեան հետ մի ծանր պատերազմ, բայց սովածութիւնը յաղթեց վերջապէս։ Վստահութեամբ ներս մտաւ երիտասարդը խանութի մէջ և տեսաւ այն տեղ տանուտէրը, որ շարժուձեր արծաթը և, երեւում էր, թէ հաշիւ էր օրական վաստակը։

«Խնդրում եմ Ձեզանից մի կտոր հաց տալ ինձ», թոյլ ձայնով ասաց գունաթափ, այլանդակուած երիտասարդը։ «Ողորմեցէ՛ք ինձ։ Քանի օր է ահա, որ մի պատառ հաց բերանս դրել չեմ»։

Հացագործը վեր նայեց։ «Հեռացի՛ր», ձայն տուեց նա խոժոռութեամբ։ Այս տեղ մուրալու տեղ չէ»։

Աբրիտասարդը սարսափեցաւ, բայց չվեռացաւ։ Շատից դուրս հրապուրիչ էր սիրուն, կարմիր թխած հացերի տեսութիւնը և շատից դուրս ըզգայլի էր նորա սուվածութեան ցաւը փորի մէջ։ «Խնդրում եմ ձեղանից, միայն մի կտոր, մի կտոր հաց տալ ինձ, տէր։ Դուք կը փրկեք ինձ սովամահ լինելուց. ապա թէ ոչ, Ձեր խիղճը պիտի տանջէր ձեղ մարդասպանութեամբ»։

Կատաղութեամբ նայեց հաստամարմին հացագործը աղաչաւորի վերայ։ «Շատ գործ պիտի ունենայի», աղաղակեց նա, «եթէ պիտոյ էր ինձ ամեն մի մուրացկան տղայի, ամեն մի ծոյլ, անպիտան մարդու հաց կտրել։ Իմ խանութը պիտի շուտով դատարկուէր այդպէս։ Գնացէք, վեռացէք, ապա թէ ոչ, կը կանչեմ իմ կարօն, որ ձեղ դուրս հալածէ։ Աշխատեցէք, և կ'ունենաք ուտելու հաց»։

Գէորգի սիրտը դող ընկաւ, երբ որ լսեց այս անգութ խօսքերը. մի աւելի սաստիկ, մի օտարատեսիլ գունաթափութիւն պատեց նորա երեսը, կծկողաբար ձգձգուեցան նորա երեսի ջիղերը, և մի անհասկանալի, ցաւով դուրս ճնշած ձայն արձակուեցաւ նորա շրթունքից։ Այնու ամենայնիւ հաստատ մնաց նա իւր բոլոր ցաւի մէջ և դուրս չգնաց հացագործի խանութից»

«Տէր», ասաց նա, «ամբողջ շաբաթներ ահա վազումեմ այս մեծ քաղաքումս փողոցից փողոց, որ աշխատանք որոնեմ, բայց ոչինչ տեղ չգտայ։ Ամենայն տեղ կարծեցին, թէ կամ անչափ տկար էի զօրութեամբ, կամ թէ չհաւատացին ինձ իբրև օտարականի և գուցէ համարեցին ինձ խաւարասէր անգամ։ Իմ արծաթի պաշարը վերջացաւ — երեկ չէ, միւս օրը գնեցի ինձ վերջին կտոր հացը — այժմ ոչինչ չունիմ, բայց միայն սուվածութիւն, մի կատաղի սուվածութիւն, և ես ղգումեմ, որ պիտի մեռանիմ, եթէ շատով օգնութիւն չհասանի ինձ»։

«Այո՛ւտ ես ասում և խաբեայ ես», կատաղութեամբ ձայն՝ արձակեց հացագործը։ «Հեռացէ՛ք։ Խսկո՛յն։ կամ թէ կը տեսանէք, թէ ինչ հնարք գործ կը դնէի ես»։

Գէորգը չհեռացաւ։ Գուցէ նա ամենևին լսել չէր հացագործի սպառնալիքը և ասած խօսքերը, որովհետև նորա հոգու բոլոր զօրութիւնքը ուղղեցուցած էին իւր շրջակայ լուութիւնների վերայ։ Հացագործը սուլեց։ Հաչելով դուրս թռաւ մի մեծ շուն։

«Խո՛նիր նորան ահա», ձայն տուեց հացագործը։

Կատաղութեամբ թռաւ գազանը Գէորգի վերայ, բռնեց նորա ոտից և պատառեց նորա վերայից մի կտոր հանդերձ։ Մի աղաղակ կէս մի ահարեկութենից, կէս մի կատաղութենից և ցաւից յառաջացած, դուրս արձակեց Գէորգը, բռնցի ղարկից շան քթի վերայ այնպէս սաստիկ, որ շունը ցած խորտակուեցաւ և Գէորգը դուրս փախաւ, առանց յետ նայելու վազելով փողոցի երկայնութեամբ։

Լաւ էր, որ մինչ այս, մինչ այն, երեկոն ամենևին մթնացել էր և

և մարդիկը կարող չէին նկատել Գէորգի գունատ, այլանդակուած և խորթ դէմքը։ Նոքա ահաբեկուած կը լինէին դորանից։

Գէորգը ցաւից ու սոված տանջանքներից մօտ էր խելագարութեան, և այս բանս նկարմամբ նորա երեսի վերայ, խօսումէր նորա փոս ընկած վառուն աչքերի միջից։

Փոքրիկային հողմը շարժուած էր և մի նրբաշնորհ, բայց սառուցի պէս պաղ անձրև ձիւնի հետ խառն, թափվումէր երկնքից։ Փողոցները, մինչև այժմ մարդերով և աղմկով լցուած, հետ զհետէ դառնումէին աւելի անապատ։ Հազիւ թէ այս կամ այն մարդը շտապով անց էր կենում սալայատակի վերայ։ Գէորգը ուշադիր չէր այս բաներիս։ Նա զբաղում չէր ոչ հոգու պաղութիւնը, ոչ անձրևի խոնաւութիւնը, որ թափանցումէր նորա հանգերձի միջից, և նկատում չէր, թէ որպէս փողոցները աւելի և աւելի անապատանումէին։ Նորա միակ մտածելիքը էին իւր խոնարհեցուցած վիճակը և իւր սովածութիւնը։ Այնուհետև նա շեղեց իւր ընթացքը դէպ ի մի փողոց, ուր բացել էին իւրեանց շաղշղոն և ճոխ խանութները բազմաթիւ ականատրծներ և ոսկերիչներ։ Այդ խանութներից մինի մօտ դադարեց նա. խանութը ներսից լուսաւորած էր, և Գէորգը կարող էր լայն ու բարձր ապակեղէն պատուհաններից մանրամասնաբար նկատել բոլոր ծանրագին, փայլակնացայտ զոհարները, որ ձեռքի համար շքեղութեան, արժանաւորութեամբ անգին, սիրուած էին նորա առաջև։

«Գոցանից մի հատը ձեռք ձգած, մի հատը միայն, և դու կը փրկուէիր», մտածումէր իւր մէջ Գէորգը։

Ա՛խ կոտութեամբ նայումէր նա իւր ջրոտ կողմը և ականջ էր դնում։ Ոչինչ տեղ չնկատեց նա մի կենդանի արարած, ոչինչ տեղից լսելի չէր մի մարդու ոտնաձայն կամ թէ ձիերի սմբակաղարկ։ Գէորգը տեսաւ, որ միայնակ էր։

«Ես ինչո՞ւ պիտոյ չէր ինձ վէր առնուլ», մտածումէր նա, «որովհետև դա միակ հնարն է իմ կեանքս փրկելու։ Ոչ ոք տեսանում չէ ինձ, ոչ ոք լսում չէ ինձ, և երկիւղը կը տայ զօրութիւն։ Մինչև մի մարդ տնից դուրս կը թռչէ բռնելու ինձ, վաղուց փախած ու պրծած կը լինեի ես։ Հա՜. և մինը այս քարերից լաւակոն էր, ամիսներով ապահովել իմ ապրուստը։ Տըխմար կը լինեի ես, եթէ ձեռք չզարկէի։ Շուտո՛վ դէպ ի գործ. ոչ ոք տեսանում չէ»։

Եւ վախկոտութեամբ հայեացքը չորս կողմ մանն ածելով, նորա մատները արդէն ձգտումէին դէպ ի փայլակնացայտ պատուական քարերը։ Եւ ահա՛ զգաց նա մի խայթ հոգու մէջ և մի նեղքին ձայն բարբառումէր դէպ ի նա. «Քո Աստուածը երկնքում տեսանում քեզ և նորա բարկացող աչքը կը կործանէ յանցաւորը։ Խեղդն Գէորգը յետ քարշեց արդէն ձգտած ձեռը և փախաւ ու հեռացաւ այնպիսի արագութեամբ, որչափ թոյլ կը տային նորա ոտերը։ «Ո՛չ, ոչ!» ձայն արձակեց նա. «այնու ամենայնիւ լաւ է անմեղութեամբ մեռանիլ, քան թէ ապրիլ յանցանքով»։

Նա գնաց հեռի և իւր սրտի ալեկոծութեան մէջ փոքր միջոց մոռացաւ

կրծող, մաշող սովածութիւնը, որ լափում էր նորան։ Ապա հասաւ նա մի կամրջի, որ ձգած է այն սրընթաց գետի վերայ, որ անցանում է մայրաքաղքի միջով, և մի անպատմելի վաստակածութիւնից յետոյ նստաւ կամրջի դուրս ցցուած վանդակապատի վերայ, որ հանդիստ առնու։ Այժմ կրկին վերադարձաւ սովածութիւնը և պատառում էր նորա աղիքները։ Սառուցի պէս պաղ անձրևը ողողում էր նորա երեսը և շառաչող փոթորկային հողմը սարսափեցրեց նորան։ Թշուառ, անպատմելի թշուառ զգում էր իւր անձը անբաղդ Գէորգը։ Նա մտածում էր.

«Երանի՜ թէ մեռած լինէի», հառաչում էր նա։ Երանի՜ թէ դրած լինէի պաղ գերեզմանի մէջ հօրս և մօրս մօտին, փոխանակ այս տեղ, այս անգութ, չար աշխարհիս վերայ թափառելու։ Գոնեայ գերեզմանի մէջ հանգիստ կայ և խաղաղութիւն մահու մէջ։ Մի մեռած չունէր համբերելու սովի և չունէր տանելու մարդերի վատթար հանդիպմանը և արհամարհանքին։ Երանի՜ թէ մեռած լինէի»։

Եւ իրրև թէ պատասխան նորա մելամաղձոտ և յուսահատութեամբ լի խօսուածքին, յանկարծ շառաչեց այժմ գետը ցածից դէպ ի վեր, և ալիքների զարկողութիւնը լսելի կերպով հնչեց դէպ ի Գէորգի ականջը։ Անդադար կապատի վերայից ցած թեքուեցաւ նա և նայեց խռոված ալիքների վերայ, որ մեռթ գոռնով կամրջի կամարի տակից հոսելով վազումէին։ Ո՛չ իրրև մի զգուշացուցիչ ձայն հնչում էր նորա ականջին ալիքների խոխոջիւնը. ո՛չ, այլ իրրև մի հրաւէր որ ցած էր քարշում նորան դէպ ի անդադար յառաջընթաց հեղեղը։ Մի ահաւոր մտածութիւն անց կացաւ նորա գլխից։

«Այի ոտիւն, և ահա պատ ես դու», այսպէս էր նա մտածում։ Մի կարճատև խորհուրդ, մի կտրողութիւն հնչի, մի ցնցիւն անդամների — այնուհետև աւարտուած էր քո բոլոր չարչարանքը, քո բոլոր տառապանքը, քո բոլոր հոգսերը։ Մահով մեռանում է սովը և հոգածութիւնը»։

«Գէորգը արդէն խոր և աւելի խոր դուրս էր թեքել գլուխը կամրջի վանդակապատից և տարածել էր ձեռները, որպէս թէ խնդրելով գերեզմանի ալիքների մէջ. և ահա թուեցաւ նորան, որպէս թէ մի շառագոյն, ցաւալից երես ջրի միջից դուրս է բարձրանում, և այնպէս էր թուում նորան, որպէս թէ տեսանում էր իւր յուսահոգի մայրը, որ ընդդիմանալով և ակնարկելով տարածում էր ձեռները դէպ ի նա և կիսով չափ սպառնալից աչքով դէպ ի վեր էր նայում։ Մի սարսուռ դղրդեց նորա անդամքը և նա յետ քարշուեցաւ։ Ուշը դարձնել ևս վերան և դորա հետ միասին խոստովանութիւն այն անապաշխարելի մեղքի, որ կամէր նա գործել։

«Ո՛չ». ձայն արձակեց նա։ «Այսպէս չպիտի վերջանայ կեանքը, որ իմ ստեղծողը հաւատացել է ինձ։ Նա պարգևել է ինձ այդ կեանքը, նա ևս թող առնու դորան ըստ իւր հաճոյքի և իւր սուրբ կամքով։ Ինչ ցաւ և տառապանք ևս կը դնէր նա իմ վերայ, դոցա կը համբերեմ ևս աձնառութիւնամբ, համբերութեամբ և իմ խոնարհեցուցած, բայց անմահ հոգու բոլոր զօրութեամբը։

Եւ Գէորգը ձեռները կցելով, աչքը աստուածանուէր և երկիւղած սրտով դէպ ի մութ երկինքը վերուղղած, աղաչումեր Հայրը վերևում ներել այն չար մտածումները, որ գոյացել էին նորա սրտի մէջ, և խընդրումեր նորանից պարգևել իւրեան համբերութիւն և զօրութիւն այն ցաւերի մէջ, որ տակաւին գուցէ թէ ճնշումին նորան։

Եւ իսկապէս այնպէս էին, երբ որ նա իւր հանդարտ աղօթքը աւարտել էր, պատառուեցաւ ամպերի թանձր քօղը, որ ծածկումեր երկինքը մի վարագուրի պէս, և մի հատ մեծ, փառահեղ փայլակութեամբ շողշողուն աստղ ճեղքելով դուրս եկաւ թանձր խաւարի միջից և մի րոպէ ճառագայթեաւէտ ցած նայեց Աստուծոյ փորձած, բայց ընտիր գտած արարածի, Գէորգի վերայ։ Ամպերը դարձեալ պատեցին երկնքի հրաշափայլ փառահեղութիւնը, և մթնացաւ այնպէս, ինչպէս յառաջ։ Բայց Գէորգը հնազացաւ այն տեղից մխիթարուած։ Մի քաղցր, սուրբ խաղաղութիւն եկած էր նորա վերայ, և նա այնպէս էր զգում իւր մէջ, որպէս թէ տեսել էր սուրբ Աստուծոյ անմահ աչքը, որպէս թէ դա օրհնելով դադարած էր նորա վերայ։

Նա չէր զգում ոչ ցուրտ, ոչ սով, ոչ վաստակաժուութիւն։

Մի ևկեղեցու դրան ծածկոցի տակ տարածուեցաւ նա հանգստանալու համար և քնեց, թէև մահիճը կոշտ էր, մեղմ և ամուր քնով։ Նորա խիղճը հանգիստ էր և Աստուծոյ հրեշտակները հովանաւորումին նորան։

ՏԱՆՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ.

ՉԻԱՎԱՀԱՒՈՒԼ։

Երբ որ Գէորգը միւս առաւօտուն զարթնել էր, տակաւին կանուխ էր և արեգակը դեռ ևս ցած կանգնած էր հորիզոնի տակ։ Զարկոցութիւնը և կռանահարութիւնը մի քանի որմնադիրների որ ոչ հեռի նորա քնատեղից նորոգումին մի վնասուած պատուհան, հալածեցին քունը նորա աչքերից։ Նա աղօթեց, ապա վեր կացաւ իւր կոշտ անկողնից և մօտեցաւ աշխատաւորներին, որ այս րոպէիս իւրեանց գործիքը ցած դրած, նստել էին շրջակայ քարերի վերայ, որ ուտեն իւրեանց չքաւոր նախաճաշիկը։ Գէորգը նայումեր նոցա, և արդարև նորա աչքը կարօտով գադարումեր այն ղօրեղ հացի և գեղին իւղի վերայ, որ կերակուրը ախորժակով ուտումին որմնադիրքը։ Աստ ամենայնին Գէորգը չհամարձակուեցաւ խնդրել այդ մարդերից մի պատառ հաց։ Նա դեռ ևս մոռացել չէր երեկուան օրի խոնարհեցուցիչ անցքը և կոշտ մերժողութիւնը։

Եւ ահա աշխատաւորներից մինի աչքը դիպուածով ընկաւ ամբոխած, հեռուում կանգնած երիտասարդի վերայ, և նորա զարհուրելի գունատութենից և հայեացքից խելամուտ եղաւ, որ դա մերժելու չէր մի պատառ հաց,

Եթէ մարդասիրութեամբ առաջարկէր նորան։ Որմնադիր աշխատաւորի մէջ զարկուածը մի կարևկից սիրտ։ «Զկամիք մնա գալ, երիտասարդ», ասաց նա քաղցրութեամբ Գէորգին։ Ձեր կերպարանքից երևում է, որ դուք այսօր նախաճաշիկ արել չէք։ Եկեցէք և բաժանորդ եղէք իմ հացիս, որ բաւական է Ձեզ և ինձ միասին»։

Ինչպէս մի ձայն երկնքից, այնպէս հնչեցին Գէորգի ականջում այս սիրալից խօսքերը պարզ որմնադրի, և Գէորգը առանց երկմտութեան մօտեցաւ, որ ընդունէ նորա մատուցած հացը։ Շտապով բերանը դրեց հացը և նորա ուրախասիրայր աչքերից կարող էր նկատել որմնադիրը, թէ օրպիսի բարերարութիւն էր ցուցել օտարականին իւր մի պատառ հացով։ Գէորգը չխօսեց, մինչև մի քանի լաւ պատառներով իւր դատարկ փորը հանգստացրել էր։ Ապա զարձաւ նա դէպ ի որմնադիրը և խօսեց գիմաշարժ և շնորհակալու ձայնով. «Աստուծոյ օրհնութիւնը Ձեր վերայ։ Երէք օր է ահա, որ այս առաջին պատառ հացն է, որ դրեցի բերանս, և Դուք կարող էք մտածել, թէ ինչպէս ախորժելի պիտի լինէր դա ինձ։

Արտի շարժողութիւնը խեղդեց Գէորգի ձայնը։ Բայց որմնադիրը և նորա ընկերքը վեր թռան և կարևկից սրտով շրջապատեցին Գէորգը և հարցանուն։ Մին թէ ինչպէս հասել էր նա մի այդպիսի թշուառութեան։ Գէորգը պատմեց ամենը ճշմարտութեամբ, և նորա պարզ խօսքերը, որ կրում էին իւրեանց վերայ անկեղծութեան կնիքը, խորին տպաւորութիւն գործեցին պարզամիտ գործաւորների վերայ, և ամենեքեան մատուցին նորան իւրեանց կոշտ ձեռները և սեղմեցին նորա ձեռը, և առաջինը, որ մասնակից էր արել Գէորգը իւր հացին, ասաց իսկոյն. «Այսուհետև մի բաժանուիք մեզանից, երիտասարդ. քանի որ Դուք չունէք օթևան և հաց, հացակից և ընկեր լինէք ինձ. իմ հացս, թէև պարզ էր, բայց ոչ պակասաւոր. դա կը հերիքանայ երկուսիս միասին»։

Գէորգը առանց երկմտութեան ընդունեց այս առաջարկութիւնը, որովհետև զգում էր, որ դա բղխում էր անկեղծ, մարդասէր սրտից։

«Լաւ», ասաց նա, «Ես կամիմ Ձեր մօտ մնալ։ Գուցէ կը գայ մի ժամանակ, երբ կարող էի փոխարինել ձեզ։ Եթէ կարող չէի, Աստուած կը հատուցանէ Ձեզ երկնքում։ Բայց ես կամիմ այժմ գնալ և նայել, արդեօք յաջողուելու չէր լինէ այսօր աշխատութիւն և վաստակ գտանել։ Այժմ զարձեալ զգում եմ հպիս, ըստ որում տեսանում եմ, թէ կան աշխարհիս մէջ և բարի ու կարևկից մարդիկ։ Ապա թող գնամ և փո՛ր ձ փորձեմ»։

Որմնադիրը չարգելեցին Գէորգին և խնդրեցին նորանից, որ կէսօրին դարձեալ գայ նոցա մօտ։ Ապա հեռացաւ Գէորգը և շրջումէր, ինչպէս անցած օրերում, փողոցների մէջ, անց ու դարձ առնելով։

Տակաւին մի ժամ բաժանուած չէր իւր նոր բարեկամից, և ահա ոսկ կոխեց նա հրապարակի մէջ և մնաց կանգնած, երբ որ տեսաւ այն տեղ մի ձիաթարման սպասաւոր որ իւր բոլոր զօրութիւնը գործ էր դնում սանձահարելու մի մանուկ, վերօրինակ գեղեցիկ, բայց վայրենի և անհնազանդ երիվար։ Ձիու տէրը, որ ճանաչելի էր իւր հեծելական զգեստից և յետ

ծալած լայնաշուրթն կօշիկներից, որպէս և իւր երկար մտրակից որ բռնած ունէր ձեռնում, տաք տաք խօսում էր երկու օֆիցերների հետ որ երևում էր, թէ կամք ունէին գնել այդ ձին, միայն թէ վախենում էին նորա անսանձելի վայրենութիւնից։ Այդ աղնիւ անասունը մեծ մեծ ոստիւններով թռչտում էր հրապարակի մէջ. երկար չտևեց, և ահա ձիավարման սպասաւորը չկարողանալով զսպել ձին, վայր ընկաւ դէպ ի գետին, իսկ ձին արշաւում էր այն տեղ, խրխնջում էր չափազանց, և մեծ դժուարութեամբ դարձեալ բռնեցին նորան։

Օֆիցերքը տեսանելով այս բանս, կորցնում էին իւրեանց յոժարութիւնը գնելու ձին, և արդէն կամէին հրաժարուիլ ձիավաճառից, և ահա Գէորգը մօտեցաւ սորան և առաջարկեց թէ նա կը հեծնէր այդ ձիու վերայ և կը կառավարէր նորան։

Գէորգը, ինչպէս յայտնի է մեզ, քաջահմուտ ձիաւոր էր և նա զգում էր թէ կարող էր սանձահարել այդ ձին։

Ձիավաճառը շատ ուրախացած էր Գէորգի առաջարկութեան վերայ։ «Այո՛», ասաց նա, «Դուք երևում է ինձ մի սիրուն քաջ երիտասարդ։ Բարի է, հեծէք ձին, և եթէ սանձահարէք դորան, Ձեզ անշնորհակալ լինելու չէի»։ Ցետոյ դարձուց դէմքը դէպ ի օֆիցերքը և ասաց ուրախութեամբ ծիծաղելով, «Այժմ ուշադիր եղէք» պարոններ։ կը տեսանէք, որ ես Ձեզ սուտ չասացի, հաւատացնելով, որ այդ ձին առանց պակասութեան էր, Միայն մի աջողակ հեծնող պիտի նստի նորա վերայ։

Օֆիցերքը ծիծաղին և երևումէին ակնկալութեամբ լի, թէպէտ նոցա ծաղրական կերպարանքը յուցանումէին, թէ նորա շատ ու շատ տարակոյս ունէին գործի յառաջադիմութեան մասին։

«Կը տեսանե՛նք, կը տեսանե՛նք», ասացին կարճ։

Ա՛ինչ այս, մի՛նչ այն, Գէորգը մօտեցաւ ձիավաճառին և խնդրեց նորանից մի փոքր հաց, որ դորանով կերակրէ, հանգստացնէ և ընտանեցնէ ձին։ Ձին մօտ բերեցին, և Գէորգը վստահութեամբ մօտեցաւ ձիուն։ Նա շոյեցոյց նորան, փայփայելով շօշափեց նորա վիզը, քորեց նորա ականջների մէջ և քաղցրութեամբ խօսեց նորա հետ, մօտեցնելով հացը ձիու բերանին։ Ձին ինչպէս երևումէր, հանգստացած էր, և երբ որ նա սկսաւ ուտել Գէորգի ձեռից, այնուհետև թէ ձիավաճառը և թէ շրջակայ ախոռաճառայքը շատ ուրախացած էին, և ոչոք, բաց ի օֆիցերներից, երկմիտ էր, թէ Գէորգը կը սանձահարէ ձին։

Եւ այժմ Գէորգը, տակաւին փայփայելով ձին, կամաց ու զգուշութեամբ հեծաւ նորա վերայ։ Ձին արից մի մեծ ոստիւն, մի ոստիւն, որ բոլոր հանդիսականքը յետ փախցրեց — իսկ յետոյ կատարեց իւր բոլոր տեսակ տեսակ ընթացքը, մինը միւսից յետոյ, այնպիսի թեթևութեամբ և հանդարտութեամբ, որպէս թէ երբէք ունեցած չէր այլ հեծնող իւր վերայ, բաց ի Գէորգից, կամ որպէս թէ լինէր ամենամեղմ ձին աշխարհիս վերայ։ Գէորգը պահեց իւր համարձակ գործը նորանով, որ այդ աղնիւ անասունը երեք անգամ մի բարձր ցանգի վերայից թռցրեց. ապա հան-

դարտուղեամբ դարձեալ արշաւից դէպ ի հանդիսականքը, յած դալով ձիուց, ձգեց սանձերը դէպ ի սպասաւորը և դարձեալ միանգամ փայփայեց անասունի բարակ վիզը, և կամեր հեռանալ։

Ձիավաճառը հիացած այն գերազանց ճարտարուղեան վերայ, որ ցոյց էր տուել Գէորգը, չթողեց նորան հեռանալ։

«Պասեցէք մի փոքր, սիրելի երիտասարդ», ասաց նա, քաղցրութեամբ չօշափելով նորա ուսը։ Մեք ունինք հետց մի քանի խօսք միմեանց հետ խօսելու։ Թո՛ղ նախ աւարտեմ վաճառարկութիւնը այն պարոնների հետ»։

Գէորգը տեղիք չունէր շտապելու և սպասեց։ Ձիավաճառը օֆիցերները դարձեալ մօտեցան յառաջուց չհատանած ձիուն, ամենայն կողմից տեսան և քննեցին նորան, նկատեցին նորա սմբակները, չոշափեցին նորա սրունգները, փորձեցին նորա օդափողը և վերջապէս աւարտեցին գործը ձիավաճառի հետ։ Սա վեր կալաւ իւր արծաթը, ձին տարան և օֆիցերքը հետևեցան յառաջընթաց սպասաւորներին։

«Լաւ՛ժ, իմ բարեկամ», ասաց ձիավաճառը Ստուքս անուն, դարձուցանելով դէմքը դէպ ի Գէորգը։ «այժմ թո՛ղ աւարտուն մեր գործը։ Ահա Ձեզ այս տեղ չորս լուիդօր այն սպասաւորութեան համար, որ Դուք առել էր ինձ։ Խնդրեմ ընդունել այդ արծաթը, որ ձեր արդար վաստակն է, որովհետև Դուք և ոչ ուրիշ մարդ վաճառել էր իմ ձիս։ Առանց ձեր ճարտարութեան գուցե տակաւին երկար պիտի պահած լինէի նորան իմ ախոռումս»։

Գէորգը դրեց չորս լուիդօրքը ծոցը։

«Լաւ պա՛ժ, իմ սիրելի», խօսքը յառաջ տարաւ պարոն Ստուքսը, «ասացէք ինձ, արդեօք չկամիք պաշտօն յանձն առնուլ իմ մօտ։ Խնամպէս այդպիսի երիտասարդ, որպիսի Դուք էք, կարող է պիտանի լինել ինձ։ Դուք կը լինիք գլխաւոր վերակացուն իմ ախոռների վերայ, կը վարժէիք իմ ձիանքս և բացի ս որանից ոչինչ գործ չունէիք։ Ես տալիս եմ ձեզ տարեկան թոշակ երկու հարիւր թալեր և կը վարուիմ Ձեր հետ քաղցրութեամբ։ կամիք ընդունել իմ առաջարկութիւնը»։

Գէորգը ամենևին ուրախացած այս առաջարկութեան վերայ, հաւանութեան նշան տուեց։

«Ուրեմն գործը աւարտած է, պատուելի երիտասարդ», բարձրաձայն աղաղակեց պարոն Ստուքսը և առ ի սրտէ շարժեց նորա ձեռը։ «Ուրեմն մնացէք այս տեղ, որչափ ձեզ հաճոյ է, և յարմարութեամբ տնօրինեցէք ձեր կեցութիւնը իմ մօտ»։

Յետևեալ Գէորգը ցոյց տուեցաւ ախոռի ծառաներին իբրև նոցա հրամայողը և լաւագոյն վերակացուն, և Գէորգը մտաւ իւր պաշտօնի մէջ, երբ որ իւր փոփոխուած վիճակի մասին տեղեկութիւն էր տուել ամենից յառաջ այն մարդասէր օրմեաղիրներին։ Այս անկեղծ աշխատասիրքը ուրախացան Գէորգի բարեբաղդութեան վերայ և դարձեալ առաջարկեցին նորան վերադառնալ իւրեանց մօտ, եթէ մի օր ուրախութեան արևը նըսեմնալու էր։ Գէորգը խնդրից ասել իւրեան անունը այն օրմեաղրի որ

իւր հայրին մանկակից էր արիւնորան, և ապա վերադարձաւ դէպ ի իւր նոր տէրը։ Այսպէս ահա Գէորգի մծտակայ գալոցքը ապահոված էր, և նա գոհանումէր իւր ստեղծողը, որ այդպիսի գիտութեամբ առաջնորդել էր նորան։

Այլ ինչ պիտի ասած լինէր Գէորգը, եթէ մի տարի յառաջ, երբ որ նա տակաւին կապած ու կաշկանդած էր իւր հին հպարտութեան և մեծամտութեան մէջ, առաջարկած լինէին նորա այժմեան պաշտօնը։ Ախ միջոցին պիտի արհամարհութեամբ մերժած լինէր դորան, բայց այժմ դորա համար գոհաբանումէր նա երկնային տեսչութիւնը անկեղծութեամբ և ջերմեռանդութեամբ։ Անբաղդութեան հարուածները շինել էին նորան աւելի բարի և աւելի խոնարհ։

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՑՕԴՈՒԱԾ.

ՎԵՐՋԱԲԱՆ.

Երդարև կէս տարի Գէորգը երջանիկ և գոհունակ ապրեց իւր նոր վիճակի մէջ և հաղիւ թէ փափագումէր մի աւելի լաւ վիճակի։ Նորա տէրը սիրումէր նորան և երբէք ասում էր նորան ոչ մի կոշտ խօսք։

Այսպէս օրերում պատահեց միանգամ, որ Գէորգը մի մուրհակային գիշեր գործի պատճառով քաղաքից դուրս ճանապարհորդութենից վերադառնումէր դէպ ի մայրաքաղաքը։ Առջի քայլերով յառաջ էր գնում նա, և թէպէտ նա մէջքին կապած ունէր մի առատալից արծաթի պարկ, սակայն երկիւղ չունէր նա։ Նա գիտէր որ ինքը Աստուծոյ ձեռնումն է. այլև իւր գօտիկի մէջ կրումէր նա երկու լաւ լցրած թափանչէք։ Արդէն մօտ էր նա մայրաքաղաքին, և տեսանումէր մի մի ճրագների փայլողութիւն, և ահա դադարեց և ականջ էր դնում։ Նա կանգնած էր մի բարձր, մայլատեսիլ շինութեան մօտ և լսեց այն տեղից մի ճնշուած ձայն, որ օգնութիւն էր խնդրում։ Ձայնը կրկնուեցաւ և Գէորգը երկար միջոց չերկմտեց, այլ ուղղեց քայլերը դէպ ի այն տունը։ Դուռը ծածկած էր միայն։ Նա մտաւ գաւիթը և փայլողութեամբ մի նուազ լոյս, որ վերևից դէպ ի ցած, մի քանի ճառագայթներ արձակումէր խաւար մթի մէջ, նկատեց մի լայն սանդուղք։ Անյապաղ և աներկիւղ վեր գնաց արագութեամբ։ Անդադար հնչող, բայց աւելի և աւելի նուազող ձայնը, որ օգնութիւն էր խնդրում, ցոյց տուեց նորան ճանապարհը որ պիտի ընտրէր, և նա շուտով հասաւ այն դրանը ուստի դուրս էր հնչում աղաղակը։ Նա խթեց դուռը և բացեց, և տեսաւ այս տեղ երկու մօրուքաւոր տղամարդ որ կամէին մի հասակաւոր մարդու ձեռք ու ոտք կապել և անպաշտպան թողուլ։

Այս երկու տղամարդերի չար դիտաւորութիւնը գողանալու, եթէ ոչ սպանելու, անտարակուսելի էր։ Գոցանից մինը բարձրացրել էր մի լայն սուր և ահ էր տալիս թէ կը սպանէ իւր ղօնը, եթէ չկամէր նա լուռ և հանդարտ մնալ։ Բայց տանուտէրը կրկնապատկեց իւր, օգնութիւն խնդրող ձայնը, և այնուհետև մօտեցաւ աւազակը, որ զարկէ սրով։ Մի րոպէ, և ահա սպանութիւնը կատարած էր։ Բայց այժմ Գէորգը խոկոյն հանեց

Թափանչէն, ուղղեց դէպ ի նպատակը, բաց Թողեց Հրացանի ոտքը և դընտակովը չարդուխշուր արեց չարագործի սպառնագին բարձրացրած բազուկը։ Թնդաց մի ցաւի ձայն, և երկու գողերը, որոց այդպէս անակնկալ վերայ էր հասած փրկողը, հողմի արագութեամբ փախստական եղան։ Գէորգը վազեց նոցա քամակից, միւս Թափանչէն արձակեց նոցա քամակից, ինչպէս պատահեցաւ, նկատեց մի երկրորդ աղաղակից, որ և այս հարուածը դիպել էր։ Սորանից յետոյ տան դուռը սաստկութեամբ փակուեցաւ, և փախստական յանցաւորների բայլափոխքը հեռանալով անլսելի դարձան։

Այժմ Գէորգը վերադարձաւ դէպ ի տանուտէրը, որոյ կեանքը իւր քաջութեամբ և վստահութեամբ փրկել էր, և գտաւ նորան ծունր խոնարհեցուցած և Աստուծուց գոհանալով նորա ուղարկած անակնկալ օգնութեան համար։ Երբ Գէորգը ներս մտաւ, տանուտէրը վեր կացաւ և գրկախառնեց նորան ջերմ օրհնութեամբ և բարեմաղթութեամբը։ Երկար տևեց, մինչև նա դարձեալ կարող էր կազդուրել սիրտը յետ իւր կրած երկիւղին և մահու չափ ահաբեկութեանը որ ազդել էին նորա մէջ աւազակները։

Երբ այլևս տանուտէրը սուր աչքով նայեց իւր փրկողի երեսին և նորա տեսիլ զարմացք նկարուեցաւ նորա դէմքի վերայ։ «Մեք արդէն տեսել ենք միմեանց», ասաց նա, «և ինձ յիշելի է նոյնպէս թէ ուր։ Դուք այն երիտասարդը չէք, որ մի ժամանակ աշխատութեր կայսերական մանկլաւիկի պաշտօն գտանել։ Ձտուեցի՞ ես Ձեզ իմ տունակս։ Այդպէս չէ՞»։

Այս Գէորգը ճանաչեց այժմ հին օրերի պարոնը, որ այն ժամանակը զգուշացրել էր նորան փորձելուց իւր բաղդաւորութիւնը կայսերական պալատում, և ամենայնապատուած ու կարմրացած թշերով ցած Թողեց աչքերը։ Ալևորը քաղցրութեամբ շփեց նորա կարմրատակած թշերը և ասաց «Ձեզ ամենևին պիտոյ չէր ամաչել։ Մեք ամենևքեանքս փորձել ենք անհնարին փորձեր և տեսել ենք, Թէ ոչ ամենայն ցանկութիւնք կատարվումեն։ Նստեցէք և պատմեցէք ինձ ձեր գլխի անցքը, սկսեալ մեր առաջին հանդիպմանից։ Ես չեմ հարցանում նորասիրութեամբ, այլ պատրաստ եմ օգնական լինել գործով և կեանքով, եթէ որով և իցէ կարող էի սպասաւորել ձեզ»։

Գէորգը յաղթեց ամօթի պզտաղութեանը, որ պարթել էր նորա հոգու մէջ և անկեղծութեամբ ու բարեխոնջութեամբ պատմեց իւր կեանքի բոլոր անցքը։ Նա ոչինչ չծածկեց, ոչինչ չգաղտցրեց։ Երբ որ Գէորգը լուեց, ալևորը սեղմեց նորա ձեռը և ասաց, սիրտը շարժուած. «Դու, իմ որդի, կրել ես ծանր յաւելը, և երկնային տեսչութիւնը քո անցած օրի սխալանքների համար պատժել է քեզ խստութեամբ, բայց արդարութեամբ։ Բայց դու համբերել ես փորձանքին, և ինձ երևումէ, որպէս Թէ Աստուծոյ ողորմութեան արևը դարձեալ ծագել է քո գլխի վերայ։ Այսուհետև դու իմ որդիս ես և չպիտի հեռանաս ինձանից։ Ես հարուստ եմ և ոչ անկշիռ մարդ։ Թող ինձ հոգաբարձու լինել, գուցէ կը կարողանամ ես յորդորել քո քեռի Հուգօն դէպ ի հաշ-

տուեալն քո հետ։ Իսկ այժմ թող գնանք դէպ ի անկողին և հանգստանանք այս գիշերի ահաբեկութենից։ Էգուց աւելի շատ այս մասին»։

Գէորգը հնազանդեցաւ առանց հակառակութեան և գնաց հանգստանալու։ Նա քնեց ամուր և խաղաղ քնով մինչև միւս առաւօտը։

Ամբողջ պարոնը, որոյ կեանքը փրկել էր Գէորգը, ասվումէր Բէդլիխ և իւր երիտասարդութեան օրերում եղած էր ականատես իրաւագէտ մայրաքաղաքի մէջ։ Երբ որ նա աշխատասիրութեամբ և մեծահոգի գործունէութեամբ ստացել էր մի մեծ գոյք, հրաժարուեցաւ գործերից և գնեց իւր համար այս մեծ փառաւոր տունը, ուր անցեալ գիշերին յարձակուել էին նորա վերայ, և ապրումէր այն տեղ մի խաղաղ և ներանձնական կեանքով։ Նորա կարիքը այնքան սակաւ էին, որ նա չէր պահում անգամ մի սպասաւոր, և ոչ ոք բացի ի նորանից և իւր աղախնուց չէր լինում այդ տունում։ այս աղախինը քնած էր գողերի յարձակման սենեկից շատ հեռի, քան թէ պարոն Բէդլիխի, օգնութիւն խնդրող աղաղակը կարող էր լսել, ուրեմն յանցաւորներին, եթէ Գէորգը վերայ հասած չլինէր, անպատճառ յաջողուելու էր կողոպտել և սպանել ամբողջ մարդը։ Այս բանս զգումէր պարոն Բէդլիխը և շնորհակալ էր այդ մասին։ Նա որոշեց չդադարել, մինչև Գէորգին կը հասուցանէր նորան արդարութեամբ հասանելին, և պարտ ու պատշաճ համարեց անյապաղ, միւս օրին, իւր վրկողի հետ ուղևորուիլ դէպ ի ամրոցը Օմթենբերգ։

Գէորգը պատրաստ էր հետևել պարոն Բէդլիխի կարդադրութեանը. միայն թէ նախ գնաց նա տիրոջը, ձիավաճառ Ստուբսին յանձնելու արծաթի պարկը և իմաց տալու նորան իւր հանգամանքի փոփոխութիւնը։ Պարոն Ստուբսը, թէև ցաւումէր, որ պիտի հրաժարուէր Գէորգից, այնու ամենայնիւ ուրախացաւ նորա բարելաւութեան վերայ և մաղթեց նորան յաջողութիւն և օգնութիւն ճանապարհի վերայ։

Մի ժամ յետոյ պարոն Բէդլիխը և Գէորգը նստած էին չորս ձիով լծած սուրհանդակի կառքի մէջ և սրընթաց արշաւանքով շտապումէին դէպ ի Կոմս Հուգոյի օթևանը, փառաւոր ամրոցը Օմթենբերգ։ Միւս օրին հասած էին նոքա ուղևորութեան նպատակին և կառքը դադարեց դարպասի առաջև, որ Գէորգը ողջունեց իբրև այն դուռը որ բացվումէր դէպ ի իւր ընտանի հայրենիքը։

Կոմս Հուգօն՝ գտանվումէր որսում և պիտի վերադառնար ամբողջ ժամերից յետոյ։ Փոքրիկ Բերթան լսելով Գէորգի գալուստը, ուրախութեամբ ցնծալով մօտ վազեց և արտասուեց երանական խնդութենից, երբ որ կախուել էր իւր անցած օրերի խաղընկերի վզից։

«Ո՛նպէս երջանիկ եմ, որ դու վերադարձել ես, Գէորգ», ձայն տուեց նա։ Արի՛ հետս, ես ունիմ ցուցանելու քեզ մի մեծահաճոյ բան։

Ու շուտով յառաջ վազեց նա դէպ ի իւր սենեակը։ Պարոն Բէդլիխը և Գէորգը կամաց դնումէին նորա քամակից։ Երբ որ ներս մտան նորա սենեակը, Բերթան արդէն դուրս էր որոնել խորհրդաւոր կտակը և մատուց Գէորգին, որ ամենուրախ զարմայքի բացագանչութեամբ ընդունեց թուղթ

թը։ Պարոն Բէպլիսը մասնակից եղաւ իր մանուկ բարեկամի ուրախութեանը և չյապաղեց իսկոյն հոգարարձութիւն առնել, իր որդեգրի իրաւունքը պաշտպանելու։

Նոյն ժամին ուղարկուեցաւ մի պատգամաւոր դէպ ի մօտակայ գատարանը, հրաւիրելու նորա պաշտօնակիցները դէպ ի ամրոցը։ Նոքա տեղ հասան, յառաջ քան թէ Հուգօն վերայ էր հասած, բացեցին կտակը հարկաւոր ծէսերով և հրատարակեցին Գէորգը իրրև օրինաւոր և անհակառակելի տէր Բօթենլերգեան ամրոցի։

Երբ որ Կոմս Հուգօն վերադարձել էր ոտից, առաջարկեցին նորան կտակը և հրատարակեցին նորան, որ նորա իշխանութիւնը վերջացել է։ Նա չհամարձակուեցաւ ոչինչ ընդդիմախօսութիւն առնել, այլ առանց հակառակութեան յետ քարշուեցաւ դէպ ի իւր հին լեռնապատ ամրոցը, ուր աւելի խոժռուած և մռայլուած, քան թէ երբ և իցէ, անցուցանում իւր կեանքի օրերը։ Բայց Գէորգը վճարումէր նորան տարեկան թոշակ, և որովհետև իւր բաղդաւորութեան մէջ թոյլ չտուեց դոյանալու իւր սրտում որ և իցէ վրէժխնդրութեան խորհուրդ, աշխատումէր, ինչքան կարելի է, ամենայն կերպով թեթևացնել իւր քեռի Հուգոյի համար այն մեծ իշխանութեան ցաւելի կորուստը։ Բայց Կոմս Հուգօն անտես արեց այդ բանը և իւր կոշտ կերպով անիծումէր իւր քոյերորդին, ամենայն տեսակ նզովք կարդալով նորա վերայ։

Մեր պատմութեան վերջը շուտով կարելի է տեղ հասուցանել։ Գէորգը, թէև այժմ հարուստ և երջանիկ էր, սակայն երբէք չմոռացաւ այն իւր բարի խորհուրդները, որ իւր Թշուառութեան մէջ յղացել էր իւր սրտում։ Նա մնաց հեզ և բարի, զարձաւ հայր իւր հպատակների և մեզմասիրտ տէր դէպ ի իւր ծառայքը։ Պարոն Բէպլիսը, որոյ վճռական գործունէութիւնը փութացուցել էր նորա բաղդաւորութիւնը, մնաց Բօթենլերգ ամրոցում և չբաժանուեցաւ իւր մանուկ բարեկամից, մինչև մահը փակեց նորա աչքերը։ Փոքրիկ Բերթան աճելով և զօրանալով զարձաւ մի նազելի օրիորդ և մի քանի ժամանակից յետոյ զարձաւ Գէորգի ամուսին։ Վերջապէս այն որմնադիրը, որ Թշուառութեան օրերում, իւր հացին մասնակից էր արել անօգնական Գէորգը, սա բերել տուեց իւր մօտ և կարգեց նորան ամրոցի կառավարիչ և քանի կենդանի էր, վարուեցաւ նորա յետ իրրև բարեկամ բարեկամի հետ քան թէ իրրև տէր ստորադրեալի հետ։

Տակաւին ապրումէ Գէորգը իւր փառաւոր ամրոցի մէջ, երջանիկ իւր ամուսնակից պատուական հնոցով և նազելի զաւակներով, որ և մեծաւիթով դաստիարակումէ նա Աստուծոյ երկիւղի, խոնարհութեան և բոլոր միւս քրիստոնէական առաքինութիւնների մէջ։ Նա ինքը տալիս է նոցա ամենալաւ օրինակը, ամենայն ղգաստութեամբ հսկելով իւր վերայ, որ միւս ևս չընկնի իւր անցած օրերի սխալանքի մէջ։

Ս. Նազարեանց.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ.

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱՂԱՆ.

I.

Երբ որ մեր աղան Ապրումէր ուրեմն,
Եւ չունէր պատճառ հաւաչելու ճիւ.
Ամենայն բարի գործ նորա համար
Զո՛ւր և ոչինչ էր.—նա միշտ, անդադար
Ծաղրով ասումէր —
«Աղջ դատարկ բան է»։

II.

Ձքաւորը Թո՛ղ հաշուէր կօպէկը,
Թո՛ղ դառն վաստակէր նա իւր վաստակը.
Բայց արծաթի հոգս այդ Աղան չունէր,
Միայն իւր վերայ գլուխը ո՛ղջ լինէր.—
Նա միշտ կրկնումէր,
«Աղջ դատարկ բան է»։

III.

Փառք գտանել Թո՛ղ հոգար քաջ մարդը,
Ազնիւ լինէին Թո՛ղ բարեգործները,
Բարի գործելով. բայց մեր մեծ Աղան
Սիրում չէր ստանալ փառք բարոյական.
Պատճառ, ասումէր,
«Աղջ դատարկ բան է»։

IV.

Թո՛ղ գլքերի հետ ուսումնականը
Միշտ պարապելով մաշէր իւր կեանքը.
կարդալ, մտածել Աղան չիմէր,
Միայն իւր տեղում գլուխը ո՛ղջ լինէր.
Պատճառ, ասումէր,
«Աղջ դատարկ բան է»։

IV.

Թո՛ղ ազգասէրը իւր ազգի համար
Գիշեր ու ցերեկ որոնէր մի ճար.
Թո՛ղ ազգի համար նա միշտ չարչարուէր,
Բայց Աղան այդ բան խնդիր համարումէր,
Ասելով այսպէս.
«Ողջ դատարկ բան է»։

VI.

Հայժմ ձեզ պատմեմ կեանքը Աղայի.
Դա ունէր քարեայ տուն երեք յարկի,
Վերնայարկերը գեղեցիկ դիրքով
Շողշողումէին ծաղկանկարով.
Վանդակապատ էր բակը շուրջ կողմից,
Դրռները շքեղ հիւսած երկաթից.
Ողջ քարայատակ բակը արձակ, լայն,
Նորա մէջ տեղում զարկող շատրուան.
Խոլոր անկիւնները զուգած փառհեղ,
Եւ վարագոյրներ կային, դրռների տեղ։
Եւ գիշեր ցերեկ միշտ այցելութիւն
Առնումէր նորան մի մեծ բազմութիւն.
Ն'րան պաշտումէին, որպէս մի աստուած
Իրաւացնելով նորա բոլոր ասած.
Բազմաթիւ ծառայք նորա սենեկում
Պատրաստի էին, կամքին սպասում.
Մինը նոցանից ընդունում էր հիւր,
Միւսը Աղային շուտ բերումէր լուր,
Իսկ խոհարարներ ամեն օր անգամ
Պատրաստումէին ճաշեր քաղցրահամ։

VII.

Կինը Աղայի նայումէր զմայլուած,
Ձորս կողմը արծաթ և ոսկի սփռած.
Իւր բազդի վերայ երբեմն ժպտումէր,
Պատճառ, աշխարհում փառքով ապրումէր։
Երբեմն սորան, երբեմն նորան
Արհամարհ հայեացքը կերպով ծաղրական,
«Ո՛վ է», ասելով։
Նա միշտ հաղնումէր մանուածոյ, ծիրանի.
Տեսնողն տալիս էր նորան երանի.
Աղախիններըը նորա շուրջ պատած,
Ծառայումէին նորան ապշտուած,

Նստեցնելով, կռներից բռնած,
Շրքեղ կառքի մեջ չորս ձիով լծած։
Իսկ ձիաները ահ֊ի՛ղ, գերապանծ,
Կ'ասէիր, առիւծք սանձի տակ դրած.
Իրրև թևաւոր դոքա վիշապներ,
Թռցնումէին սայլը վեր ի վեր։
Ա՛յսպէս տիկինը փառաւորապ֊ս
Երթումէր յաճախ պիշերահանդէս,
Ուր ընդունվումէր պատուով դէպ ի վեր,
Իւր վրայ գրաւելով ամենայն աչքեր.
Այն տեղ լռութիւն թագաւորումէր,
Մանաւանդ երբ նա ինքը խօսում չէր.
Իսկ երբեմն նա այդպէս հանդիսում
Կեղծաւորութեամբ տաղտուկ էր յայտնում.
Կանանց ժողովում սիրում չէր նստել,
Կամ թէ նոցա հետ խօսակից լինել.
Տղամարդերի հետ սիրումէր րոմանս
Խօսել, և խաղալ լօն փիլ, պրօֆերանս....

VIII.

Լ֊ւ նորա այրը, պատուելի Աղան
Այս իւր վիճակով դեռ չէր բաւական.
Ուրիշ շա՛տ բաներ ունէր իւր սրտում,
Մինչ մեծ փառքերի էր նա սպասում.
Կը ցանկար լինել մեծ կալուածատէր,
Այլև ստանալ բարձր աստիճաններ.
Հպարտ ու գոռոզ ներում չէր Նորան,
Ով իւր պատուի դէմ կը խօսէր մի բան.
Կամեցած կ'լինէր յաւիտեա՛ն ապրել
Եւ աշխարհի մէջ միշտ փառք վայելել։

— Սագերը զրպա՛րել ես կամենում չէ՛մ,
Բայց ճշմարտութիւն ես միշտ սիրել եմ.
Հա՛րկ կայ իմ վերայ դրչով կամ խօսքով,
Ինչ որ ղգումեմ, ասել պարզ սրտով.
Ներեցէ՛ք ապա խեղճիկ պոյէտին,
Որ կամի միայն օգուտը աղքին։

IX.

Տեսանենք, Աղան ի՛նչպէս վաստակեց,
Արծաթ և ոսկի լեռնաչա՛փ դիզեց...
Արդեօք Աստուծո՞ դրած օրէնքով,
Արդար, անապատ իւր աշխատանքով.

Ո՛չ։ Ամէ անօրէն գործքով գարշելի
Խաբուէր մարդիկ վասն իւր օգտի.
Նա մշակների վարձը կըտրուէր,
Զքաւորների ցաւին անփոյթ էր.
Նա խարդախութեամբ հաշիւների մէջ,
Ծածկուէր արծաթ, բանալով սուտ մէջ.
Կամ հոգարարձու անտէր որբերի,
Ցուցանուէր նա քաւորդ գոյքերի,
Կամ բռնութենով, արծաթի ուժով
Խլուէր կալուածք խեղճ պրիների։
Եւ իւր գործքի մէջ ներհակողներին
Ան էր տալիս նա վճասից սաստկագին.
Փակուէր ոսկով ազատ բերանքը,
Ցետոյ կատարում իւր սրտի կամքը,
Դէպ ի դատաստան միներն ակնարկում,
Միւսին դէպ ի բանդ անխնայ քարշում.
Եւ մի ուրիշին մահ պատրաստելով,
Դէպ ի գերեզման ղրկուէր շուտով։
Դեռ արդար էին Աղայի գործքը,—
«Նա կատարուէ Աստուծոյ օրէնքը»—
Ասուէին նրա չար կուսակիցքը
Եւ հարստութեան երկրպագուքը։
Նա ընդունուէր դռոյա ժողովում
Եւ նախոջոյնը և նախաթոռը.
Նորա դէմ ոչ ոք չէր վստահանում
Բերանից հանել գէթ մի խօսք դառը։

X.

Ահայց ահա մի օր Աղայի համար
Այն տեղ, միւս կողմում պատել էր խաւար...
Ջուր էր և ջուր ջանք Աղան յանձն առել
Իւր դիզած գանձով ուրախ կեանք վարել,
Աշխարհի վերայ դնելով յոյսը,
Որ յաւաջ տանէ միշտ իւր չար կամքը։
Պիտոյ էր նորան վերջապէս կեանքին
Եւ նորա բոլոր պատուին ու փառքին
Խարեայ մնա ասել, հաշիւն աւարտել,
Ցաւաջ դիմելով մի աշխարհ մեծին,
Ուր մեռյալապատ վարագուրի տակ
Պատրաստ էր մի խոր վիրապ անյատակ.
Պիտոյ էր Աղան, այն տեղին հասած,
Նորա մէջ իսկոյն գլորուէր խոր ցած։

Ուր պիտի կլանէր ծեր կառնոսը
Եւ նորա կեանքը, — որպէս կլանում
Աշխարհի բոլոր ծնած սեռերը։

XI.

Եկաւ այն օրը... և անհետացաւ...
Նորա հետ ևս Աղան չքացաւ...
Չքացան բոլոր նորա գանձ ու գոյք,
Միւսերին հասան տուն և տան գահույք։
. . . . . .
. . . . . .
Մոլի որդիքը ցից գարձան տան մէջ,
Աւծաթի մասին բացնչին կռիւ, վէճ.
Ստացան ամէնքը առանձին բաժին,
Մի քանի տարում՝ և այն վատնեցին...
Եւ այնուհետև այդ պատանիքը
Չգացին գառնապէս կեանքի կարիքը։
Ա՛յո՛ դժուար է, վաստակել չուսած
Մարդը գտանէ իւր օրական հաց։
Նոքա և ապա իւրեանց որկորը
Լցուցանումէին միւսերի գրանը.
Եւ նոցա մայրը, վիւիկասուն պլրին,
Երանումէր միշտ անցած օրերին.
Նորա վիճակը գառն էր քան թէ թոյն,
Երբ կորուսել էր իւր հարստութիւն.
Գուցէ նա յայնժամ մուրանումէր հաց.
Բայց ի՞նչ հարկ կայ ինձ այս տեղ ասել բաց, —
Աշխարհիս օրէնքն այդպէս է կարգած.
«Մինը բարձրանում՝ միւսն ընկնումէ ցած.
Կամ ինչ որ այսօր մարդ սերմանումէ,
Վերջապէս անշուշտ և այն հնձումէ»։

XII.

Ինչո՞ւ գատումիս այդպէս հակառակ,
«Մինէն իւր կեանքից մի կերպ յիշատակ
Աղան չթողեց։ Մինէն չհնձեց
Նա ոչինչ բաժին իւր հարուստ գանձից։
Մինէն և այնչափ անարժան էր նա,
Որ լաց, արտասուք չեղան նորա վրայ.
Ո՞չ ոք ցաւելով և ուղարկաւոր
Չնղաւ մեռածին. մեծ աշխատաւոր».

Ա՛յսպէս, ընթերցող, հարցանելու ես,
Հաշիւ պահանջել այս կարո՞ղ ես,
Ահա իմ արդար և պարզ պատասխան.
«Ցիրաւի՛, անմնան չմնաց մեր Աղան.
Ստացաւ շատ յարգանք և իւր մահուց յետ.
Պատուել փարթամը, աշխարհը չէ տգէտ.
Երբ որ Աղայի անշնչացած դին
Դրած էր ի մէջ շքեղ դագաղի.
Երբ նորա վերայ ճոխ ամպհովանին
Սարքած,—թխադղեստ ձիանք ամէհի
Տանուամբին նրան դէպ ի գերեզման,
Ուր պիտի հանգչէր Աղան յաւիտեան,—
Ահա մի մեծ խումբ փարթամ մարդերի
Գնացեր յետքից,—և ցաւակցական
Թափուամբ խօսքեր մեռելի համար,—
Այդ նոքա էին, որ շատ տարիներ
Անցուցել էին նորա հետ յարմար:—
Դարձեալ և մի խումբ այն տեղ, միւս կողմով
Երթուամբ տխուր, Աղան գովելով.
Սոքա ևս էին այն կարգ մարդերից,
Որ յոյս ունին դեռ, շահուիլ հարստից.
Այլ ևս մի խումբ սև գլեստներով
Նաշի առաջև շարժվուամբ կարգով,
Խնկով, լուրվաւով մեռելին մեծ շուք,
Ջևրմ՝ ընծայուամբ հոգու ալէլուք.
—Դարձեալ մի այլ խումբ հերթով հետևակ
Երգուամբ ուժեղ մի տխուր նուագ...,
Մինչև ի շիրիմ՝ այս փառքի հանգէս
Ստացաւ մեռելը իւր մասը ճոխապէս.
Բայց յետոյ. յետոյ անցաւ ամենայն,
Աղային մնաց շիրիմը միայն...
—Այլևս ոչի՛նչ: Ա՛յ մի այլ բան—
Մարմարիոնեայ փառաւոր արձան,
Որ այսօր ևս, մի լոկ յիշատակ,
Ցցուած է այն տեղ, տխուր ու մենակ.
Ոսկի տառերով փորուած անունը,
Այլև անցուցած կեանքի տարիքը,
Այլևս ոչինչ. . . . . :

XIII.

Ուրեմն ննջեց քնով յաւիտեան.
Աղան չստացաւ ոչինչ դատաստան.

Բայց ոչ. ոչ մի մարդ, առանց դատուելու
Ըստ իւր գործերի, երբէք չէ մնալու.
Պատճառ, բիւր բերանք բաց են մարդու վրայ,
Դատումեն թէ լաւ, թէ վատ, ինչ որ կայ.
Հարկաւ և Աղան այս օրէնքի տակ
Պիտի ենթարկուէր, մի օր, ժամանակ։
Եւ այդ օր հասաւ,—դատաստանի օր,
Մի առողջադատ, խոհեմ անցաւոր
Տեսնելով փայլուն, շքեղ արձանը
Եւ կրակի պէս վառուն տառերը,
Իսկոյն արձանին կանգնելով հանդէպ,
Կարդաց փորուածքը պարզ և անվրէպ.
Նա խոր հառաչեց... գլուխը շարժելով,
Իւր դատակնիքը այսպէս դրոշմելով.
—«Դու քո կեանքի մէջ կեանք չաշխատեցիր,
Եւ բարի գործքից դատարկ մնացիր.
Դու խեղճ մարդերից յափշտակութեամբ
Լոկ կեր ու խումի գանձ ժողովեցիր.
Ապա, վերջապէս գանձդ թշուառ, ղուր
Միւսել ին դարձաւ որս և կերակուր.
Եւ սակաւ օրեր ամեն վայելքը
Ստացաւ աշխարհում քո անյագ կամքը.
Բայց երբ որ քո մօտ, քեզնից օգնութ՛ւն
Խնդրելու համար, գալիս էր քո տուն
Ահի քո վշտացած եղբայր չքաւոր,
Կոյր, կաղ մուրացկան և պակասաւոր.
Քո լիութենից չտուեցիր բաժին
Անհաց և անջուր, անյոյս աղքատին։
Վատաբաղդներից Դու հեռի խախար,
Ձօղնեցիր ոչ ում անցաւակցաբար.
Հաղարի վերայ բարգեցիր հազար,
Ագահ, աչքածակ, դու հարուստ տխմար.
Ահա քո վերջին հանգիստ օթևան.
Երկիր քայլաչափ քեզ հող ու սահման.
Դու այդ տեղ կը մնաս մի նեխած մարմին,
Պարարտացուցիչ կեր ճճիներին,
Մինչև երկնքում դատաւորն արդար
Կոչէ քեզ ատեան, տալու քո համար.
Դու այն ժամանակ կը տաս պատասխան
Անհեղ Դատողին կացած յանդիման»։
Այսպէս խօսից նա, այն մարդ անցաւոր—
Այսպիսի խօսքեր սաստիկ ու խոշոր.

Եւ ապա երեսը մահու արձանից
Շրջից, հեռացաւ խավդն այն տեղից.
Նա չկամեցաւ այլևս յետ նայել,
Եւ այդ գերեզման կրկին նկատել,
Նա տուեց դորան խոր մոռացութեան
Իբրև մի անպէտ յիշատակարան։

Ց՝ՎՀԱՆՆԷՍ ՔՈՒՉՔԵՔԵԱՆՑ։

1863 ին.

Ե... Գ... ԱԼԲՈՒՄԻՑ

I.

Քո կեանքի մէջ, աղնիւ աղջիկ,
Շատ կայ գարուն գեղեցիկ.
Դեռ շատ անգամ կը տայ բարև
Քեզ մայիսեան արևիկ։

II.

Շատ կը տեսնես ոսկի օրեր
Եւ պատուական րոպէներ.
Բայց գիտացիր, շուտ են անցնում,
Եւ թողումն լոկ հետքեր։

III.

Կը գայ մի օր, երբ քեզ փնտան
Կ'առնու իւր հետ յաւիտեան.
Այնուհետև ինձ կը յիշես,
Պաշտողիդ քեզ, անմահն,

IV.

Բայց խնդրում եմ, այս իմ տողեր
Այն ժամանակ ընթերցիր,
Քո անցուցած ոսկի օրեր
Կարդալ քո մէջ նորոգիր։

Ց. Ք.

1862.

Ս... գիւղում։

ՆԱՊՈԼԵՈՆ·

ՄԻ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ ՆԱՊՈԼԵՈՆԻ ՎԵՐԱՑ·

Ֆրանսիական Բևեղևւցիայի դաղափարների և իրողութիւն-
ների մէջ չափահաս դարձած, նորա յանցանքներից խստակ պահ-
ուած, մի քայլ իմացականութեամբ մարդ, որ հասկանում էր
նորա թէ ճշմարտութիւնը և թէ մոլորութիւնը, Նապոլէոնը
նիլքին և արտաքին խառնակութեան միջոցներում դարձել էր
Ֆրանսիայի ազատիչ և, երևումէր, թէ կոչուած է լինելու այն դա-
րաս մեծ հնձի ժողովողը, Եւրոպայի բարերարը, մի նոր ազատայ
կարգի հիմնադիրն: Ընչհարկէ հաստատումէր, թէ նա կարող է
լրացնել այդ կոչումը, բնչն էս հաստատումէր դորան: Նրթէ միա
դնենք այն խօսքերին, որ նա ինքն ասել է, երբ որ հաշվումէր իւր
կեանքի դումարը, նորա ջանքն ու վայրթը եղած է, միջնորդ լինել
իշխանների և նոցա ժողովուրդների մէջ, ազատ քաղաքական կար-
գեր լծակցել միապետական կարգերի հետ, անդադանալի փակել
բեվոլեւցիական վոլքանիկների աղբիւրը, անցած ժամանակների
փառաց որպիսութիւններին վերջ դնել, նորազոյն ժամանակի բո-
լոր առաղջ քաղաքական կանոնները գործնեայ կացուցանել և վե-
րսին ծնած Եւրոպայում հաստատել «բանականութեան թա-
գաւորութիւնը»: Պատահական անցքերի, զոր օրինակ տարերքի
թշնամութեանը Ռուսաստանում, ընծայումէր նա մեղքը, նրթէ
չհասաջնցաւ այս վերածնութիւնը: Նրթէ նա կարողացած լինէր
արդարամտութեամբ նայել իւր յաւուրս սրտի մէջ, ապա խոստո-
վանած կը լինէր, որ ոչ թէ այն դիպուածքը, որ սրտիկը եղան նո-
րան, ունայնացնելով նորա խորհուրդները տարան նորան դէպ ի
կործանումն, այլ նոյն իսկ ընտրած ճանապարհները: Նրթէ նա
իւր հայրենիքում սրձանացրած լինէր մի մեծ օրինակ դատաիա-
րակութեան դէպ ի ազատութիւն և բարօրութիւն, իւր օրէնս-

տուժութեան բարիքի հետ կապակցելով մի անթիւրելի հրաման օրինքի, կառավարութեան կարգերի հետ թագաւորութեան անդամների ինքնահոդողութիւնը և ազատ շարժողութիւնը, եթէ նա կամեցած լինէր Ֆրանսիայի կաղողութիւնը հիմնել մի բարեյաջող ղարդացման վերայ ժամանակի մէջ, իսկ իւր յատուկ անմահութիւնը ժամանակի ներքին յառաջաշարժութեան վերայ, այս նորա ձեռով արձանացրած օրինակը արդարև կը լինէր Եւրոպայի համար մի մանկավարժութեան աւետիք: Այլ, երբ որ այս բարիքը պիտի բռնութեամբ և սոսկանքով իրագործուէին, երբ որ Նապոլէոնը իւր փառքը դրեց կենքի մէջ և Ֆրանսիայի բաղդաւորութիւնը Եւրոպայի սիրապետութեան վերայ, այս մի հատ սխալանքով այն մեծ խորհուրդները—եթէ դորա միանգամայ չդղացած են—ոչ թէ միայն ունայնացած էին, այլև վերացուցած: Պատճառ, այս շարժի վերայ կարող չէր ոչինչ հաշտութիւն յառաջանալ ժողովրդի և հրամայողի մէջ, հին պատակառութիւնը կարող էր միայն և աւելի ընդարձակուիլ. այսպիսի կերպով կարող չէին առաջին ժամանակի փառած որպիսութիւնքը բժշկուիլ, այլ միայն և առաւել վախլ. բոլոր յատկութիւնքը թէ ժողովրդի և թէ նորա առաջնորդի, բարոյականքը, խնայասիրանքը, քաղաքականքը պիտի բարձի թողի լինէին կամ թէ վաճառասանային: Ժողովրդական բարիքի հին ապականութիւնը, որ կերակուր էր ստացել Ռուբբոնեանց պալատների օրինակից, նոցա վայրենախոհութիւնը որ Ռևոլուցիոնի չարագործութեամբք և առաւել զօրացել էր, այս պիսի ձանապարհով կարող չէին առողջանալ. թագաւորութեան անցքերի մէջ, որ մի պլուս պատճենող տարապայման ձևանարկութենից դէպ ի միւսը անխորհուրդ և անհանդիստ տարուբերվում էին, կարող չէին ազել անշուք հարատած առաքինութիւնքը ընդհատական և քաղաքացի կեանքի: Եւ ինչպէս բարոյական, նոյնպէս և խնայական յառաջադիմութիւնքը, այդ տեղ անկարելի էին ժողովրդին: Նոյն ինքն Նապոլէոնի ասած խօսքն է, թէ ով որ ձնշումն գաղափարները, աշխատում ինքն իւր անձը կործանել. նա ինքն ապացուցել է այս խօսքի ճշմարտութիւնը իւր յատուկ գործերով: Նա ամենայն տեղ արհամարհել է գաղափարը, ուր դա հաւեմատ չէր իւր կամեցողութեանը. նա չթողեց ճարտարութեանը այլ ասպարէզ, քան թէ շողոքորթութիւն, գիտութեանը ոչինչ գործ, բայց ի ծառայելուց նորան. նա չէ յար-

գիր, այլ անապրիկ է և ձնշել է նոցա ամէն մի ինքնիշխան շար-
ժողութիւնը դպրոցի, մատենագրութեան, ընկերութեան մէջ և
առեւնաբանական բնի վերայ: Պատճառ, և քաղաքական հասկա-
ցողութիւնը ժողովրդի կարող չէր ձեռնտու լինել նորան իր
շահի վերայ. նորան հարկաւոր էր միութենական գործադրու-
թիւն իր կարողութեան, և նա կարող չէր կամենալ, որ ժողովրդի
փոխանորդների հասարակութիւնքը իշխանութիւն ունենայնի նո-
ր կարողութեան հնարների վերայ: Այս հարկաւորութեան մէջ
նորա մղելով իր անձը, որոնումէր իր ճնշողութեան համար
դեղերիկ պատճառանք. այսինքն թէ Ֆրանսիայոյ փոփոխակէր
թիթեւամտութեանը պակաս է պահպանողական հաստատութիւնը
Անգլիայու, պայմանը մի ազատ քաղաքական կեանքի. Ֆրան-
սիացին հոգեւորուած էր միայն ընտրողական պատասխանա-
թեամբ և ոչ թէ մի ճշմարիտ ազատասիրութեամբ: Այս արդարև
այս պատճառանքը երեւումէր նորա աչքին օրէ օր մի լիակատար
ստուգութիւն սրտի վկայութեամբ, այո մի աւելի ակնյայտնի ըս-
տուգութիւն. նա սկսաւ վարուիլ այնպէս, որպէս թէ մի փառա-
սաւոր գործ էր, ժողովրդի ստրկական կարծեցած հոգին ևս ա-
ռաւել ստրկացնել: Նա կործանից հետ գհետէ բոլոր պօլիտիկա-
կան առացուածքը Ֆրանսիայի: Նա Բեվօլիւցիայի փոխանակ դրեց
մի բռնակալ իշխանութիւն, աղգայնութեան փոխանակ մի սին
գերազանց իրաւունք, ազատ տէրութեան փոխանակ մի իշխանա-
կան տուն, որ իր սիեվերատալական իրաւունքը ածանցումէր Աս-
ծոյ շնորհս, ազատութեան փոխանակ դրեց ժառանգական և
պարգևական ազնուականութիւն, ժառանգութեան բաժանման
փոխանակ անդրանկութեան իրաւունք և անվաւեր ժառանգու-
թիւնք. այն դատարկութեան մէջ, որ թողել էր արտաքսած նան-
րահատութիւնը, մէջ բերից դաշնադրութիւնը հռոմէական
պապի հետ, որ ասէումէ Կոնկորդատ, ժողովրդի ընդհանուր կամքի
փոխանակ միութենական գործունէութիւնը նահանգապահների:
Տան ու դերդաստանի մէջ բռնութեամբ միջամուխ եղաւ նա և
շրջափակեց նորանց լրտեսներով և մանիչներով: Նախակարգ
մարդիկը այն ժողովրդի, որ նա ինքը արբեցուցել էր փառքով, խո-
նարհեցրեց նա իր անարժան ընթացքով նոցա հետ և նուաս-
տացրեց նորանց մինչև կոյր գործիք: Նոյն ինքն Տիբերիոսին գը-
ղըձելի էր սուրկական նուաստամտութիւնը իր ծերակուտի, բայց

Ֆրանսիական կայսերը երևումէր միայն հաճելի ու շատ ստորաքարշ խոնարհութիւն։ Բայց ո՛չ, մինչև ո՛ր աստիճանի մեծամիտ ինքնասիրութիւն, այդ դէպ ի աշխարհակալութիւն ձգտողութեան մէջ, պլանդակուեցաւ վերջապէս Նապոլէոնի յատուկ բնաւորութիւնը, նորա ընդարձակ բարձրամտութիւնը և հոգու հպարտութիւնը։ Ո՛ւչ անդունդ կար զօրապետ Նապոլէոնի (որ Յաղթականը կարող էր նկարագրել իրրև հաւէտ մնալու կը ժամանակի, հայրենիքի, Եւրոպիոյ և նորան իւր հինաւրեայ պարզութեան, իւր դէպ ի աւելցայն սոխրտական սրտաբին բանիւ արհամարհութեան համար գովասանել երես առ երես) և կայսր Նապոլէոնի մէջ, որ փառաց անցածի անձկաշակ պալատական շուքը դարձեալ նորոգել էր, որ մի ասիական իշխանի զեղխութեամբ (ինչպէս Պարսիկը իւր խմելու ջուրը) իւր սիրած գինին մինչև Մոսկուա բերել էր իւր հետ, որ արդէն մի ռազը գահավիժութեան մէջ, համարձակուեցաւ ասել, Թէ նա ինքը աւելի հարկաւոր էր Ֆրանսիային քան Թէ Ֆրանսիան նորան, որ այո՛ հաւատաւորէր իւր ամենագիւրաընդունակութիւնը և անսխալականութիւնը և որոյ՛ճառայքը անբզդամ երեսով պահանջուէին մարդերից «նորա կամքը համարել իրրև նախասահմանութիւն»։ Բայց և մարդերի առաջինքը չեն երբեք սահմանուած լինելու ձախատագիրների իշխանքը, այլ միայն նոցա ստրատուորքը։ Այս կԹէ Նապոլէոնը այն խորհրդներով, որ նա զինի իւր անկման աւերատուականութեամբ ընծայուէր իւրեան իրրև սեփականութիւն, դուցէ կարող էր ասուիլ ձախատագրի ստատուր, սակայն նախախնամութիւնը այն ահարկու յեղափոխութիւնքը, սկսեալ 1789 թուականից, որպարև բերել էր Բուրբոնեանց վերայ այն միւս խորհրդներով, որ բարձրացրած Նապոլէոնը գործով և արդեամբ կամենուէր յառաջ տանել։ Նա մտածուէր իւր աշխարհի պլանքը լրացանել յարելցնելով նորան մեծութեամբ և փառքով։ Նա յօժար կը լինէր — այդպէս ձևացնում էր նա յետոյ Ֆրանսիայի աչքում — բոլոր եւրոպական ազգերը միախառնել իրրև մի ազգ Ֆրանսիական դիրագոյն իշխանութեան տակ հաւասար հնազանդութեան, մի օրինքի տակ, մի ամբիւիտեանեան դասատասանի տակ. նա յօժար եղած կը լինէր փարիզը շինել աշխարհի մայրաքաղաքը և Ֆրանսիան մի նորահրաշ ՀՈՌոմ։ Բայց այս պօլիտիկան նոյն իսկ կուրացած Ֆրանսիայինն երեսում էր «ասողջ քաղաքական հիմքեր», և ոչ իսկ մի

«Թագաւորութիւն բանականութեան». դա չէր համարվում գին այն աշխատութիւնների և պատահարների որ եղած էին 20 տարու միջոցում. ոչ փոխարէն այն հինգ հազար միլիոն արծաթի (այսքան բազկացնում էին ծախքը պատերազմների 1802 ից մինչև 1814, Ֆրանսիայի համար միայն) և ոչ իսկ փոխանակ այն 3 միլիոն մարդկի կեանքին որ 1804 ից մինչև 1814, ղոհուած էր մի հատ մարդու պատուասիրութեան, վրկուելով միայն դորա վեցերորդ մասը: Բայց եթէ համաշխարհական տիրապետութեան պարծանքը և օգուտները անդամ՝ կարող չէին լուսցանել Ֆրանսիական ազգի կամքը, դորա հակառակ թշուառութիւնը և աճեթը մի ձնշողական լծի տակ խոնարհութեան, վեր կացրեց բոլոր Եւրոպան ընդդէմ իւր հարստահարողին: Մի իշխանական տուն միւսից յետոյ պիտի խոնարհէր նորա ազգականների տիրակալութեան տակ. մի տէրութիւն միւս տէրութենից յետոյ պիտի դառնար Ֆրանսիայի գաւառ, ամբողջ ազգերի ցեղերը պիտի զբկուէին իւրեանց ազգային հարաշատութենից, որ կազմեն Նապոլէոնի կամեցած մեծ թագաւորութիւնը. ծովերը ազատելու համար, Ֆրանսիան պիտի տիրապետէր բոլոր աշխարհներին. Ֆրանսիայի յաղթութիւնը ընդդէմ իւր ժառանգական թշնամուն ապահովելու համար, պիտի Եւրոպան խոնարհուէր Ֆրանսիայի գերադոյն իշխանութեանը և այն բռնակալութեամբ դրած արձ գիլքին, որ ասէումէ ցամաք հողի փակումը ընդդէմ անգլիական նաւերի (կօնտինենտալ սիստեմ), եւրոպական աշխարհամանի հաւասարակշռութիւնը խախտուեցաւ. և այս հերիք չէր. Ընդլիայի և գաղթական տէրութիւնների վերայ յարձակուելու համար, վերջապէս շատ յանգուգն դիտաւորութիւն չերևեցաւ, յաղթահարելի Ռուսաստանի և քայքայելի Տաճկաստանի վերայով յառաջ խաղալ դեպ ի Ասիա մինչև արևելեան Հնդկաստան: Բայց այս յանդգնութեան վերայ, որ է չարդ ու փշուր առնել ազգերը, խորհրդաբար արհամարհել տարածութիւնքը և ժամանակները, և մի մարդկային կեանքի պայմանի մէջ խցկել ու ձնշել կամենալ հարիւրաւոր տարիների գործել — այդպիսի յանդգնութեան ապառաժի վերայ խորտակուել էին արդէն աւելի մեծ տիրապետողք և աւելի մարդասէր քաջագործք, քան թէ Նապոլէոն էր: Ազգային կիրքը ճնշուած և ահի տակ գտնուած ազգերի մէջ զինուորեցաւ նորա ընդդէմ. և դորանից յաղթուեցաւ

նա, երբ որ առաջին հարուածը ռուսական պատերազմի մէջ պըղըտել էր հաւատը նորա միապաղաղ բաղդի վերայ: Ոչինչ կայր պատահումն յաղթել չէ Նապոլէոնին. նորան կործանել է իւր յաւուրս ամբարտաւանութիւնը, չափազանց լարողութիւնը իւր և օտարի զօրութեան: Նա ինքն ասել է միանգամ. մի մեծ անիրաւութիւն պատերազմի մէջ նշանակումէ միշտ մի մեծ պարտաւոր. սորանով տուել էր նա իւր յաւուրս դատաւճիռքը: Տարապայման լարողութեամբ զօրութեան վերջապէս խորտակուելոյն նեցուկները միմեանց քամակից, կաղացան շարժարանները իրեարու հետևից: Հ՚ահաստատագութիւնը այլ ևս ոչինչ պրաւիչ բան չունէր դաշնակիցների համար, բռնակալութիւնը իւր տան մէջ չունէր այլ ևս ոչինչ ահագուչիչ զօրութիւն, ջանահնարութիւնը օրինակ էր տալիս այլ ևս: Կործիքը առանց իւրեանց յաւուրս շարժարիթներն, գած ընկան նորա ձեռքից. ժողովուրդը իւր յաւուրս դործունէութենից հրաժարեցրած լինելով, այլ ևս չլսեց նորա հրաւիրական ձայնին, մինոտաւրների փոքրոգութիւնը պաշտօնի մէջ, մինիստրների դաւաճանութիւնը պաշտօնից դուրս, սիրականների կոպիտ ապերախտութիւնը, վայելքով յաղեցած զօրապետների թուլութիւնը, ամեն բան վերջապէս միաբանուել էր ընդդէմ հրամայող տիրոջը: Նորա մէջ յաղթուածի յուսահատութիւնը և խոնարհութեան դառն ճաշակը յետ այնքան շատ ամբարտաւանութեան, պատերազմումէին մինչև վերջը հպարտութեան խրոխտանքի և առաջին բաղդի վերայ վստահութեան հետ: Քաղաքական դահավիժութիւնը զղջեցուցիչ էր, մարդկայինը ևս աւելի զղջեցուցիչ եղաւ: Նապոլէոնի հոգու հպարտութիւնը ազդել էր նորա մէջ մի խորին արհամարհութիւն դէպ ի մարդիկ. նոյն արհամարհութեան տխուր փորձը վերջապէս սիրտ առնուր ինքն իւր վերայ. նորա հոգու հպարտութիւնը նոյնպէս նեղչնչել էր նորա մէջ այն կարծիքը, իբրև թէ նա ունէր ամենախորին մարդագիտութիւն. և այդ մասին սիրտ բացուէին նորա աչքը իւր դառն մոլորութեան վերայ: Նորա զօրախտերը թէպէտ ստորին կարգերի մէջ մնաց դէպ ի նա ըղձալի և զարմացման արժանի կերպով հաւատարիմ մինչև վերջին փորձութիւնը. բայց որչափ դէպ ի վեր, նոյնքան աւելի բացուէին դարձաւ ապստամբութիւնը նորանից: Նստաւել քաջերը բարձի թողն արեցին նորան վերջին րոպէում. նախորդաւիւ ընտրածքը չքացան և դաւաճանեցին նո-

լան, սուրբ Հակառակ վշտացեալ ծերը և նուաստացեալ ստուգ-ուեցան իրրև առաւել ազնուամիտքը. ապստամբքը Խաչիւմ անձ-յոյս եղան կամ թէ հեռացան նորանից. մերժուած ամուսին կինը մի քանի շաբաթ միայն կենդանի մնաց ղինի իւր դերամեծար ամուսնա-կցի կործանման. զորս Հակառակ, կառավարող կայսերուհին բաշ-ձի թողն արեց իւր մայրաքաղաքը, իւր ամուսնակից սյրը, իւր իշ-խանական արժանաւորութիւնը. և շուտով իւր յաւուրկ անձը և իւր կանացի արժանաւորութիւնը. որդուն հանդիպեցաւ սպասե-կական վիճակը Աստիանաքսի, որ երևումէր հօրը բոլոր վիճակնե-րից ահաւորագոյնը:

Ս. Նալբեանց:

ԲՆՈՒԹԻՒՆ ՕԼԸՆՔՆԵՐՈՒ ԸՍՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՄԸՐԿՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԱՋՄՈՒԱԾ ՎԵՐԱՑ ՆԻ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ.

(Ընթերնակութիւն՝ Տե՛ս Հիւսիսափ. Ամսագիր 5. 306—319.)

Ա՛յժմ, եթէ դարձուցանենք մեր դէմքը Ասիայէն և Եվրոպայէն դէպ ի նոր աշխարհը, ապա կը գտանենք նոր ապացոյցներ վերեւում յառաջ բերած կարծիքներուն: Միակ բաժիններդ Ամերիկան, որ Նոյեմբերեան եկատորութենէն յառաջ փոքր ի շատէ քաղաքակրթուած էին, են Մէքսիկո և Պերու. գուցէ թէ կարող էինք կցորդել դոցա և այն երկրին ուր նախ հոդաստանները, որ Մէքսիկոյի հարաւակողմից տարածվում մինչև Պանամայի պարանոցը: Ա՛յս աշխարհում, որ այժմ յայտնի է իբրև միջին Ամերիկա, երեւում թէ բնակիչքը հողի պտղաբերութեան ձեռնտուութեամբ, ինքնուրոյն սոսկել են մի որոշեալ քանակութիւն տեղեկութիւնների. պատճառ, մինչև այժմ հնացած աւերակները վկայում են, թէ դոքա ունեցել են մի մեքենական և ճարտարապետական աշխատակութիւն, որ աւելի նշանաւոր էր, քան թէ կարող էր պատկանել մի ամենևին բարբարոս ազգի: Ոչինչ աւելի յայտնի չէ նոցա պատմութենից. բայց ծանօթութիւնքը, որ ունինք մեք Աստանի, Պալենքէի և Ուքսմալի շինուածներից, շատ և շատ հաւանական են կացուցանում, որ միջնաւայրեան Ամերիկան է հին օթեւան մի քաղաքակրթութեան, որ բոլոր կատեան մասներով համեմատ էր հնդիկականին և եգիպտականին, այսինքն անհաւասարապէս բաժանեալ հարստութիւնը և կարողութիւնը և այն սորկութեամբ բազմութեան, որ յառաջանում է դորանից:

Բայց մինչ բոլոր վկայութիւնքը միջնաւայրեան Ամերիկայի նախնական վիճակի մասին անհետացած են, մեք աւելի բազդաւոր

ենք Մեքսիկոյի և Պերուի մասին: Կան տակաւին ծանրակշիռ և և վաւերական աղբիւրներ, ուսանի կարող ենք մեք մի գաղափար ստանալ, թէ ինչպէս էր եղած այդ երիու աշխարհների նախնական վիճակը և նոցա քաղաքագործութեան չափ ու կշիռը: Բայց, յառաջ քան թէ խորամուխ կը լինինք այս խնդրի մէջ, պատշաճ էր ծանուցանել այն բնական օրինքները, որով այդ տեղերը սահմանուեցան իբրև օթևանք ամերիկական քաղաքագործութեան, կամ թէ ինչպէս եղաւ, որ այս կողմերում միայն ժողովուրդը կազմակերպուեցաւ իբրև մի որոշ և կարգաւոր ամբողջութիւն, մինչ միւսացած մասը բնակաւորուած էր վայրենի և բարբարոս ազգերով. մի հետաքննութիւն, որ ստուգուելու էր իբրև ամենամեծ ուշադրութեան արժանի, որովհետև տալու էր մեզ այլ ապացոյցներ այն գերօրինակ և միանգամայն անընդդիմանալի ազդեցութեան, որ բնութեան կարողութիւնքը ունեցել են մարդկութեան ճակատագրի վրայ:

Առաջին հանգամանքը, որ պիտի դրաւէ մեր ուշադրութիւնը, այն է, որ Ամերիկայի, որպէս և Ասիայի և Աֆրիկայի մէջ, բոլոր նախնական քաղաքագործութիւնքը ունեցել են իւրեանց օթևանը ջերմ աշխարհներում: Բոլոր խոհական Պերուն գրած է հարաւային արևադարձի ներսում, իսկ բոլոր միջնավայրեան Ամերիկան և Մեքսիկոն հիւսիսային արևադարձի ներսում: Թէ ինչպէս կլիմայի ջերմութիւնը ներգործել է Նեղկաստանի, Դպիրապետի ընկերական և քաղաքական կարգերի վերայ, աշխատեցի ցոյց տալ և և յուսով եմ, որ ապացուցի, թէ այդ ազդեցութիւնը յառաջացաւ ժողովրդի պիտոյքի փոքրանալով և նորա հետևանքով, այսինքն է անհատական բաժանումը հարստութեան և կարողութեան: Բայց ի դորանից կայ դեռ ևս մի այլ կերպ, որով մի աշխարհի միջակային եղանակը ազդում նորա քաղաքագործութեան վերայ, մի այլ կերպ, որոյ բացատրութիւնը մինչև այժմ յետ եմ ձգել, որովհետև դա Ամերիկայի մէջ կարող էր աւելի յայտնութեամբ ցոյց տալ քան թէ այլ տեղ: Նորա աշխարհի մէջ ազդում բնութիւնը աւելի մեծ չափով քան թէ հին աշխարհում, նորա գոյութիւնքը շատ աւելի յաղթահարող են այն տեղ, քան թէ այս տեղ. և այսպէս լուսափայլ էր, որ բնութեան ազդեցութիւնքը ճանչուի վերայ կարող են այս աւելի պարզութեամբ ուսումնասիրուիլ քան թէ այն տեղ, ուր բնութիւնը աւելի տկար է, ուրիմն

և նորա գործունէութեան հետեւանքը աւելի փոքր ընկնումն աչքի տակ։

Ընթերցողը կը մտաբերէ, որպիսի ահագին ներգործութիւն ունեցել է սովորական կենսական հնարների առատութիւնը, և այդպէս կարող էր հեշտ խելամտել թէ ընդհ՚ր բնական յայտնութիւնների ստիպանքի տակ Ամերիկայի քաղաքագործութիւնը հարկաւ պիտի սահմանափակուած լինէր այն կէտերի մէջ, ուր գտան նորան նոր աշխարհի բացողքը։ Պատճառ, եթէ բայ թողնենք հողի քիմիական և երկրագիտական զանազանութիւնքը, ապա կարող ենք ասել թէ այն երկու պատճառքը, ուստի կախ է մի աշխարհի պտղաւէտութիւն, են ջերմութիւնը և խոնաւութիւնը. ուր նոքա առատութեամբ գտանվում են, այն տեղ հողը լինելու էր արդասաւոր. ուր նոքա պակաս են—անպտղաւէտ։ Ընդարձակ, այս կանոնը իւր գործադրութեան մէջ ենթարկուած է բացառութիւնների, որ յառաջանում են բնական, նորանից անկախ պայմաններից, ապա թէ ոչ, այդ կանոնը, հաւասար պայմանների տակ, անփոփոխելի ուղեղ է։ Եւ այն նշանաւոր առաւելութիւնը, որ սկզբում հաւասարաջերմ գիծերի յառաջելութենից մեր տեղեկութիւնքը տնտեսական աշխարհագրութեան մասին առաջել են, տալիս է մեզ կարողութիւն տրան դուրս գնել իբրև մի բնական օրէնք, որ ապացուցուած է ոչ թէ միայն հիմամբք, որ առած էին տնտեսական փիլիսոփայից, այլև մի զգուշաւոր ուսումնասիրութեամբ այն համեմատութիւնների, որով բուսականքը ստուգութեամբ մտնաւորած են զանազան աշխարհների։

Աչքի տակ պարունակելով Ամերիկայի ցամաք հողը, կը բացատրուի այս օրէնքի կապակցութիւնը մեր քննելի նիւթի հետ։ Եթէ նախ միտ դնենք հողի ուռգմանը ջրով, կը տեսանենք, որ նոր աշխարհի բոլոր մեծամեծ գետերը գտանվում են արևելեան ծովեղերքի վերայ, ոչ մինը արևմտեան ծովեղերքի վերայ։ Ա՚յս, ուշադրութեան արժանաւոր իրողութեան պատճառքը անյայտ են. բայց Ամերիկայի ոչ հիւսիսում և ոչ հարաւում որ և իցէ նշանաւոր գետ թափվում չէ խաղաղ ովկիանոսի մէջ, մինչ Հանդիպակայ կողմում անհամար գետեր կան, մի քանիքը գերօրինակ մեծութեամբ, բոլորը մեծակշռ, զոր օրինակ Նեգրո, Լա Պլատա, Սան Ֆրանցիսկո, Ամազոնեան գետը, Օրինոկո, Միսիսիպպի, Ելամբա, Սանկտ Ջ՚օն, Պոտոմաք, Սուսկուհաննա, Դելավարէ,

Հուպօն և սուրբ Լաբրենտիոսի գետը: Այս ջրերի մեծ համալարգութեամբ հողը դէպ ի արեւելք ջրվում միշտ. սորա հակառակ դէպ ի արեւմուտք հիւսիսային Ամերիկայում կայ մի արժանաւոր գետ միայն, որ է Օրեգօն, մինչ հարաւային Ամերիկայում սկսեալ Պանամայի հողանեղուցից մինչև Մագելլանի ջրախողոցը ոչ մի հատ մեծ գետ թափվում չէ խաղաղ ովկիանոսի մէջ:

Սորա հակառակ ամենևին այլապէս է ձևանում պաղաբերութեան միւս գլխաւոր պատճառը, այսինքն ջերմութիւնը հիւսիսային Ամերիկայի մէջ: Այդ տեղ գտանում հողի ոռոգումը ջրով արևելքում, իսկ ջերմութիւնը արևմուտքում: Հետևական է, որ այս զանազանութիւնը եղանակի երկու ծովեզերքի մէջ յառաջանում մի մեծ օդաբանական օրէնքից. պատճառ, բոլոր հիւսիսային կիսագնդում ցամաք հողերի և կղզիների արևելեան կողմը աւելի ցուրտ է քան թէ արևմտեան կողմը: Բայց թէ որպիսք սա յառաջանում մի մեծ, պարունակ պատճառից, կամ թէ ամեն մի պատահումը ունի իւր յատուկ պատճառը, կարելի չէ վճռել, միա դնելով մեր այժմեան գիտութեան սահմանին. բայց իրողութիւնը հաստատ է և նորա ազդեցութիւնը Ամերիկայի ամենահին անցքերի վերայ շատ արժանի է մտադրութեան: Այդ պատճառով, այն երկու մեծ պայմանքը պաղաւէտութեան ոչինչ տեղ ցամաք հողի վերայ, Եվրոպիոյի հիւսիսում չեն հանդիպած միասին. Մի կողմի աշխարհներին պահասել է ջերմութիւնը, միւս կողմի աշխարհներին ոռոգումը ջրով: Այդպէս գժուարացել է հարբսութեան բազմապատկութիւնը և ընկերութեան յառաջդիմութիւնը արգելուել է: Ու յառաջ քան թէ 16 դարումը Եւրոպայի կրթութիւնը ազդող գտանուեցաւ Ամերիկայի մէջ, չկայ ոչինչ օրինակ որ և իցէ ազգի, որ 20 երորդ լայնութեան աստիճանից դէպ ի հիւսիս հասած լինէր գոնէ լոկ մի այնպիսի անկատար լուսաւորութեան, որին հասած էին Նոկայիք և Եգիպտացիք: Միւս կողմից, ցամաք հողը, սկսեալ 20 երորդ լայնութեան աստիճանից, յանկարծ փոխում իւր կերպարանքը, ամիսոփվում և պատնում մի նեղ հողաշերտ, մինչև հասանում Պանամայի երկրանեղուցին: Այս նեղ հողատահմանը էր միջնաւայրը Ամերիկայի քաղաքագործութեան և մեր վերևում յառաջ բերած պատճառներից հեշտ իմաստասիրելի է, թէ ինչու պատահել է այդպէս: Հողի առանձին կազմութիւնը հաստատել է նորան մի շատ լայնար-

ձակ ծովեզերեայ տարածութիւն և այսպէս տուել է հիւսիսային Ամերիկայի հարաւային մասնին մի կզզւ բնաւորութիւն։ Դառնրանով յառաջացաւ միևը այն տատանձին յատկութիւններից մի կղզեական կլիմայի, այսինքն տաւտս խոնաւութիւն այն ջրային շոգիներով, որ բարձրանում են ծովից։ Ա յսպէս, Մեքսիկոն Նկուսաոլի մեծաս որութեամբ տաւտյաւ ջերմութիւն, իսկ հողի ձևաւորութեամբ խոնաւութիւն, որովհետև սա միակ մասն է հիւսիսային Ամերիկայի, ուր այս երկու պայմանքը զուգաւորուած են, վասն որոյ և դա էլ մի հատը, որ առհասարակ քաղաքագործուելյաւ։ Տարակուսի տեղիք չկայ որ, եթէ Կալիֆորնիայի կամ թէ հարաւային Ամերիկայի աւազուտ դաշտերը այրուած չլինէին յաճախութենից, այլ ոռոգուէին արևելքի ջրերով, կամ, եթէ աւելցքի գետերը արևմուտքի ջերմութենից օգնականութիւն գտած լինէին, մի այդպիսի զուգախառնութեան հետևանքը լինելու էր այն արգասաւորութիւնը հողի, որ նախընթաց է եղել ամեն մի վաղեմի քաղաքագործութեան, որին ծանօթ է պատմութիւնը։ Այց որովհետև պատահութեան երկու արմատական պայմաններից միևը ամեն տեղ 20 լայնութեան աստիճանից դէպ ի հիւսիս պակաս էր, վասն որոյ քաղաքագործութիւնը չգտաւ իւր համար օթևան, մինչև այս գծի սահմանից ոտքը դուրս չէր դրել. և գտանուած չէ ոչ մի հետք, այլև գտանուելու չէ, որ թէև մի հատ ժողովուրդ այս մեծ ցամաքահողի վերայ կարողացած լինէր նշանաւոր յառաջադիմութիւն գործել կամ թէ կարգաւորուիլ իրրև տնաւորուած և սեռղական ընկերութիւն։

Այսքանս բաւական լինի այն բնական զօրութիւնների մասին, որ վճռահատել են հիւսիսային Ամերիկայի ամենակարևոր վիճակը։ Հարաւային Ամերիկայի մէջ հանդիպ են մտանում այլ տեսակ տեսակ իրողութիւնք. պատճառ, այն օրէնքը, որոյ հիման վերայ արևելեան ծովեզերեայքը տեղի տան են քան թէ արևմտեան ծովեզերեայքը, ոչ թէ միայն չէ գտանում պիտաութիւն հարաւային կինսատնդի վերայ, այլ նորա փոխանակ հանդիպ է մտանում մի այլ, դէպ ուղիղ ներհակ օրէնք։ Նկուսաոլից դէպ ի հարաւ, արևելքը տեղի ջերմէ, քան թէ արևմուտքը. բայ ի դորանից ունի նա իւր մեծ ժողովը դետերի, և այսպէս ակնյայտնի տեսանվում հարաւային Ամերիկայի մէջ այն համապատկութիւնը ջերմութեան և խոնաւութեան, որ պակաս է հիւսիսային Ամերիկա-

յուր: Ա՛սան որոյ և հողը իւր պաղաւէտութեամբ նշանաւոր է և ոչ թէ միայն արևադարձներէն սահմանուած, այլև մի բաւական մեծ տարածութիւն դէպ ի այն կողմը: Խրազիլեայի հարաւային կողմը, այլև Պարագուայի մի մասն իսկ վայելումեն մի այգեստանոցութիւն, որպիսի չէ գտանվում հիւսիսային Ամերիկայի ոչ մի աշխարհում, մի նմանատիպի լայնութեան տակ:

Այս հիման վերայ պիտոյ էր ապասել, որ հարաւային Ամերիկայի արևելեան ծովեզերեայքը բնութեան առատաձեռն պարգևատուութեամբ եղած էին մի այնպիսի քաղաքագործութեան օթևան, որպիսի միւս աշխարհամասներում նմանատիպի պատճառներով յառաջացած էր: Բայց մեք աւելի ճիշտ նկատողութեամբ կը զբաղանինք, որ վերևում դրած ծանօթութիւնքը երբէք բովանդակում չեն բոլոր ֆիզիքական աղբիւրութիւնքը, որ և մեք ունիմք ուշադիր լինելու մի երրորդ իրողութեան ևս, որ կարողացել է նպաստաւոր կացուցանել երկու միւսերը և յետ պահել բարբարոսութեան մէջ բնակիչքը մի աշխարհի, որ այլապէս գարձած կը լինէր առաւել ծաղկեալը նոր աշխարհի մէջ:

Այս երրորդ կարողութիւնը է վաստաեան հողը *), մի օրատրոի յայտնութիւն, որ, ինչպէս յետոյ կը ցուցանուի, ունի ցել է մեծ և վեհագոյն նեղղորդութիւն բոլոր, եւրոպիականից յառաջ եղած, քաղաքագործութեան վերայ: Այդ հողը շրջափակում ոչ պակաս քան թէ 56 աստիճանք լայնութեան, այսինքն 28° հիւսիսակողմում և 28° հարաւակողմում Եկուատորի: Այս մեծ հողագահնակի մէջ, ուր դրած են մի քանի շատ պաղաւէտ աշխարհներ, վաստաեան հողը վիճակ բոլոր տարին կամ հիւսիսակողմեան արևելքից կամ թէ հարաւակողմեան արևելքից: Այս կանոնաւոր փոփոխութեան պատճառները այժմ բոլորովին ծանօթ են. պիտոն, որ դա կէս մի յառաջանում օդի անօսպանալոյ Եկուատորի տակ, և կէս մի երկրի շարժմանից: Յուրաք օդը բևեռներէն կողմից անդադար փոխում դէպ ի Եկուատորը և յառաջացնում հիւսիսային հողմեր հիւսիսային կիսագնդում, և հարաւային հողմեր հարաւայինում: Սակայն, այս հողմերը իւրեանց բնական հոսանքից խոտորվում են երկրի շարժողութեան պատճառով, երբ որ դա արևմուտքից դէպ ի արևելք թափվում իւր

*) Մի տարօրեակ հողմ, որ մի և նոյն ուղղութեամբ փչում արևադարձների մէջ:

լեռնի չոլս կողմով։ Եւ որովհետև երկրի ընդհանակութիւնը Երուսաղէմի տակ կատարվում է աւելի սաստկութեամբ, քան թէ ուրիշ տեղերում, վասն որոյ շարժողութիւնը Երուսաղէմի տակ լինում է այնպէս սրընթաց, որ նա բևեռներին մօտ եղած տեղերի շարժողութեան առաջքը կտրում է, նորան քարշում ու ձգում է այլ ուղղութեան մէջ և այդպէս յառաջացնում այս արեւելեան հոսանքը, որոյ ասում են փոսատեան հողմեր։ Բայց այս տեղ մեր դիտաւորութիւնը չէ այնքան, որ փոսատեան հողմերը բացատրէինք, այլ, որ ցուցանէինք այս մեծ բնական յայտնութեան կապակցութիւնը հարաւային Ամերիկայի պատմութեան հետ։

Փոսատեան հողմը վիճում է հարաւային արևելեան ծովեզերքում, գալիս է անցանում ասլանտեան օվկիանոսի վերայով. ուրիշն հասանում է հողին բեռնաւորուած խոնաւութեամբ, որ ժողովել էր իւր ճանապարհի վերայ։ Այս խոնաւութիւնը հասանելով ցամաքահողին, թանձրանում է իբրև անձրև պարբերական միջոցներով. այնուհետև այս հողմերը իւրեանց ճանապարհի վերայ դէպ ի արևմուտք արգելք գտանելով Անդեան մեծ սարագօտու երևից, ըստ որում կարող չէին անցանել միւս կողմ, իւրեանց բոլոր խոնաւութիւնը թափում են Ամազոնկայի վերայ, որ և դորանով շատ անգամ ենթարկվում է մեծապէս ազատանող ջրհեղեղների։ Այս ձոխ ու աւազան ողողումը գալեհաղ նպաստ գտանելով արևելեան Ամերիկայի մեծ ջրերի ժողովից և միաւորուելով ջերմութեան հետ, պէտք է հողը դէպ ի այնպիսի պտղաբերութիւն, որ ոչինչ տեղ աշխարհումն չունի իւր նմանը։

Ամազոնկան լինելով գրեթէ անչափ մեծ, ինչպէս բոլոր Ամերիկան, պատած է մի անկարծելի ձոխ անտիական հարաւութեամբ։ Տնկականների աճողութիւնը այնպէս զեղուն ու պարարտ է, որ սակս թէ բնութիւնը իւր զօրութեան անասնձ լիութեան մէջ շուայտում է։ Մի մեծ մասը այս լայնատարած աշխարհի լցուած է թանձրախիտ անտառներով, որոց ամենու ծառերը ծաղկում են անզուգական գեղեցկութեամբ, հիացուցիչ են հաղար տեսակ գոյներով և անապատելի առատաձեռնութեամբ թափում են իւրեանց պտուղները։ Նոցա կատարների մէջ կախուած են թռչուններ փոսատոր փետուրներով, որ բնութագրուել էին նոցա հովանաւոր և բարձրաբարձր տերևապատկների մէջ։ Սկզբում նոցա աբ-

մասքը և բուները պատած են թուփերով, պատատուներով, անհամար օտարակեր բուսականներով, որ բոլորը լցուած են շընչաւորների բազմութեամբ: Իւր հաղարաւոր միջատներ, առնական տեսակ սողունք խորթ և առանձին կերպարանքով, օձեր և խլեզներ խայտաձամուկ վտանգաւոր գեղեցկութեամբ. դրա բոլորիքեան գտանուածն իւրաքանչ մնուածը ի մէջ այս ահագին դործատան, այս շանմարանի բնութեան: Եւ որպէս չի ոչինչ պակաս չլինելը այս հրաշալից աշխարհին, նորա անտառները ընդարձակուած են ահագին մարդագետիններով, որ գողջուկք են արձակում ջերմութենից և խոնաւութենից և կերակուր են հասուցանում վայրի անասուններին անհամար բազմութեան, որ պարարտ արօտների մէջ դիրանում են, մինչ սահմանակից դաշտերը լճանում են մի այլ կեանքով և բնակարան են դիւրաշարժ ու վայրենի յարիշտակող գազանների որ պատատուում են միմեանց և որոց բնաջինջ առնելը անհասանելի է մարդկային կարողութեան:

Այսպէս մեծ է կեանքի գեղեցն և թարմաղուն լուսիւնը, որով Ալտայեան երկրի բոլոր աշխարհներից գերազանց է: Այդ այս բոլոր վտանգեղութեան մէջ չէ մնացել մարդուս համար ոչինչ տեղ: Նա այն մեծավայելչութեան ձեռքով, որ նորան շրջապատում է, նուաստացել է մինչև մի անհնչան կերպարանք: Կարողութիւնքը որ նորան ընդդիմանում են, այնպէս զօրաւոր են, որ նա երբէք կարողացել չէ ձակատը դէմ դնել նոցա, երբէք կարողացել չէ ոտքի վերայ բարձրանալ նոցա միաբանուած ճանրութեան ներքից: Ալտայեան, թէև քան երևութին մի աշխարհ շատ ու շատ պատուականութեամբ, սակայն ահռոմպէս մնացել է անքաղաքակրթած. նորա բնակիչքը են թափառական վայրենիք և կառող չեն արդելք դէմ դնել այն խաչընդոտանիներին, որ նոյն իսկ բնութեան լուսիւնը դրել է նոցա ճանապարհների վերայ. պատճառ, երկրագիքը, ինչպէս ամենայն ժողովրդ իւր տգիտութեան մէջ, չունին ոչինչ ձեռնարկութեան հոգի, անճանաչ են այն հրամ տութիւններին, որով բնական արգելքները հեռացվում են ճանապարհի վերայից. նորա երբէք չանձնառու եղած չեն պատերազմելու այն գժուարութիւնների հետ, որ կաշկանդել են նոցա բնական կեանքի յառաջադիմութիւնը: Այս գժուարութիւնքը արդարև այնպէս ծանր են, որ եւրոպական կրթութեան բոլոր ձեռնտու հնարները երկար տարի անօգուտ դործ են դրուած,

դորանց հետացնելու պատճառով: Իրապիհայի ծովեզերեայքի կլիմայնութեամբ նման է բերուել Եւրոպայից մի տեսակ քաղաքակրթութիւն, որ անհատանելի եղած կը լինէր երկրացիների յատուկ ձգնողութեամբ: Այլ այս քաղաքակրթութիւնը, որ ինքն բնա ինքեան շատ անկատար է, խորամուխ եղած չէ աշխարհի նեղսը, ուր տակաւին թագաւորում նոյն կարգը, ինչ կարգ որ հնուց եղել է այն տեղ: Ժողովուրդը ապէտ է և անառնական, առանց կարողանալու սանձահարել իւր անձը, չունի ոչինչ օրինք, այլ սովորութիւ իւր հին սրմռատացած բարքերուն մէջ: Կնութեան զօրութիւնքը այս աշխարհումն այնպէս գործունեայ են և սպրդուած այնպիսի վտանգաւոր բռնութեամբ, որ մինչև այժմ անհնար է եղել նոցա միաբանուած ազդեցութեան հետևանքից ազատ մնալ: Երկրագործութեան յառաջադիմութիւնը խոչընդոտուած անանցանելի անտառներ և հողնձը ապականուած անթիւ ու անհամար ճճիներ: Սարերը շատ ուղիղ բարձր են, քան թէ կարելի էր դէպ ի վեր ելանել, գետերը այնքան լայն, որ կարելի չէր նոցա վերայ կամուրջներ ձգել. բոլորը այնպէս է պատրաստուած, որպէս զի մարդկային հողին յիւր ինայ և նորա ձգտողական զորութիւնը ճնշուի: Ս. յատկէս ահա բնութեան կարողութիւնը կաշկանդել է մարդուս հողին: Ոչինչ տեղ դատնմում չէ մի այնպիսի ցանկացիչ ներհակութիւն բնութեան ուժութեան և հոգեկէն աշխարհի փոքրութեան մէջ, ինչպէս այս տեղ: Մարդկային իմացականութիւնը, այս անհատատոր պատերազմից վախեցած, ոչ թէ կարողացել չէ յառաջ գնալ, այլ առանց օգնութեան դուրսից, յիւր գնացած կը լինէր: Պատճառ, այժմ իսկ, թէպէտ անգործ ուղի ուղիղ լաւ կարգեր Եւրոպայից ներս են բերվում, չենք տեսանում ոչինչ նշանք յառաջադիմութեան. թէպէտ և բազմաթիւ եւրոպացի գաղթականք մշակուած հողը, այնու ամենայնիւ հազիւ թէ մշակագործուած է աշխարհի $^1/_{30}$ մասը: Երկրացիների բարք ու վարքը այնպէս բարբարոսական են, ինչպէս միշտ եղած են. և ուշադրութեան արժանի է, որ Իրապիհան լինելով ահագին բնական ճոխութեամբք զարդարած աշխարհ, ուր պտուղքը և անասունքը անչափ առատ են, ուր հողը ջրվում ամենագիւղիկ գետերով—որ այս մեծ աշխարհը, 12 պատիկ աւելի մեծ քան թէ Գրանատան, ունի միայն 6 միլիոն բնակիչք:

Ա՛յս նկատողութիւնքը բացայայտուելն ըստ բաւականին, թէ ինչ պատճառով բոլոր Իւրազիլեայի մէջ ոչինչ յիշատակարանք չեն գտանվում և ոչ իսկ մի շատ թերի քաղաքագրծութեան յիշատակարանք. չկայ ոչ մի նշան, որ բնակիչքը երբ և իցէ բարձրացած լինէին այն կացութենից, որոյ մէջ գտել են նոքանց Ամերիկայի յայտնագրծողքը: Ասայց պէտք վնդիր Իւրազիլեային պրած է մի այլ աշխարհ, թէպէտ նոյն լայնութեան աստիճանի տակ և նոյն ցամաքահողի վերայ, բայց այլ բնական պայմաններով տակ, և այդպէս գարձել է ամենևին այլ ընկերական հետևանքների տեսարան: Ա՛յս է հնչակատու թատրերութիւնը Պերուի, որ պարմակութեր բովանդակ հարաւային Ամերիկայի, ամենևին բնականաբար էր միակ կէտը հարաւային Ամերիկայի, ուր կարելի էր հաստանել քաղաքագրծութեան: Իւրազիլեայի մէջ ջերմութեանը լծակից էր երկու տեսակ ջրոզութիւն. նախ, արևելեան ծովեզերքի մեծամեծ գետերով, ապա, այն առատ խոնաւութեամբ, որ վառատեան հողերը ցած են իջուցանում: Ա՛յս զուգահասնութենից յառաջացաւ այն անզուգական պտղաբերութիւնը, որ խոտհանութեր մարդու խորհուրդները և իւր չափազանցութեամբ կաշկանդում յառաջադիմութիւնը, որին ձեռնտու լինելու էր իւր աւելի չափաւոր քանակութեամբ: Պատճառ, ինչպէս մեք տեսել ենք, երբ որ բնութեան ծնուցիչ զօրութիւնը անցել է մի որոշեալ սահմանից, անբաղաքագրծ մարդու անկատար գիտութիւնը կարող չէ ընդդիմանալ նորան, կամ թէ որ և իցէ կերպով զործ դնել նորան դէպ ի իւր օգուտը: Ասայց եթէ, տրա հակառակ, այդ զօրութիւնը շատ զործունեայ է, և այնու ամենայնիւ միանգամ գտնուն մի սանձահարելի յառաջադիմութեան մէջ, այնուհետև յառաջանում պրպիտութիւնը, ինչպիսիք հանդիպեցան մեզ Ամերիկայում և Ասիայում, ուր բնութեան հարատութիւնը փոխանակ արգելք լինելու ընկերական յառաջադիմութեանը, ձեռնտու եղաւ նորան, յաջողութիւն տալով հարատութեան բաղմազատկութեանը, առանց որոյ անկարելի է յառաջադիմութիւն:

Արևմն եթէ մեք հաշիւ ձգենք նախնական քաղաքագրծութեան բնական պայմանքը, պիտի է մեզ ոչ թէ միայն միտ դնել հարատութեանը, այլև, այսպէս ասենք, բնութեան սանձահարութեանը. այսինքն մեք պիտի քննենք այն թևթևութիւնը, որով նպատակ հնարները կարող են պէտք ածուիլ, այլև այս նպատակ

հնարների նոյն իսկ քանակութիւնը: Եթէ մեք այս բանս վերա-բերենք դէպ ի Մեքսիկո և Պերու, մեք կը գտանենք այն տեղ այն աշխարհները Ամերիկայի, ուր այս ղեկդպրութիւնը եղած է շատ յաջող: Թէպէտ նոցա նախաստող հնարները չէին այնպէս բազմա-թիւ, որպէս Եգիպտացիքն, սակայն շատ աւելի հեշտութեամբ չա-փի ու սահմանի տակ դնելի էին, մինչ միանգամայն և ջերմու-թիւնը հանդէս է բերել այն օրէնքները, որ, ինչպէս ցոյց տուե-ցինք, մեծապէս ներգործումն ամենայն նախնական քաղաքագոր-ծութեան վերայ: Այս մի շատ արժանի ուշադրութեան իրողու-թիւն է, և կարծեմ, որ դա մինչև այժմ անտես է արուած, որ նոյն իսկ ըմպութեան մասին, այժմեան սահմանը Պերուի դէպ ի հարաւ, համաձայն է Մեքսիկոյի սահմանին դէպ ի հիւսիս. և բաւական արժանի է մտադրութեան, բայց ամենևին հասկանալի չէ, որ երկու սահմանքն էս վերջանում են, յառաջ քան թէ ան-ցած էին Ընտադարձները: Մեքսիկոյի սահմանը է 21 դրադուս հիւսիսային լայնութեան, իսկ Պերուի $21^1/_2$ դրադուս հարաւային լայնութեան:

Մի շատ զարմանալի կանոնաւորաշարժութիւն ցուցանում է մեզ պատմութիւնը, եթէ վենում ենք նորան բաւական ընդարձա-կութեամբ: Մեքսիկան և Պերուն համեմատելով հին աշխարհի այն պատահմունքի հետ, որոց մասին խօսել ենք արդէն, կը գտանենք, որ նոցա ընկերական որպիսութիւնքը, ինչպէս բոլոր քաղաքագործու-թիւնների մէջ, որ յատ աղքնթաց են եւրոպականին, կախ են բը-նական օրէնքներից: Նախ, աշխարհի անունքը նոյնպիսի էր իսկա-պէս, ինչպէս գտել ենք Ասիայի և Աֆրիկայի ամենամաղկեալ աշ-խարհների մէջ: Պատճառ, թէպէտ հին աշխարհի ուտելի բու-սականներից սակաւք միայն գտանում են մեք նոր աշխարհում, բայց, դոցա փոխանակ, կան այլ բուսականք, որ բրնձին և արմաւին բոլորովին համեմատ են, որ և նոյնչափ իսկ առատ են, նոյնչափ հեշտ աճում են և նոյնչափ պտղաբերութիւն ցուցանում են, և այդ պատ-ճառով յառաջացնում են նոյն ընկերական ներգործութիւնքը: Մեքսիկոյի և Պերուի մէջ սմինդրը եղած է միշտ առաւել մեծա-կշիռ սննդական հնարներից մինը, և մեք պատճառ ունինք մտա-ծելու, թէ նա եղած է Ամերիկայի ցամաքահողին սեփական *):

*) Կարծիք եղած է, թէ սմինդրը ընիկ բուսական է Ասիայի, բայց վերահասու-թեամբ առուգուած է, որ նա անյայտ էր Ամերիկայի յայտնագործութենից յառաջ: Ինչ որ

Ամինդրը, որպէս բլրինձը և ալմաստը, իսկապէս մի ջերմ կլիմայի բոլք է, և թէպէտ նա, ինչպէս ասում են, ամէնամէ աւելի քան թէ 7000 ոտնաչափ բարձրութեամբ ծովի վերայ, սակայն սակաւ է պատահում, որ նա ամէնը 40 վրտադուս հիւսիսային լայնութենից դէպ ի վեր, և նորա պտղաբերութիւնը սրընթաց քայլերով նուազում եղանակի ջերմութեան փոքրանալովը: Այսպէս ահա, նորը Կալիֆոլնիայում նորա միջակային պտղաբերութիւնը հասնում 70ից մինչև 80 պատկի, բայց իսկական Մեքսիկոյի մէջ 300 — 400 պատկի, և շատ յաջող հանգամանքի մէջ այո՛ 800 պատկի:

Մի ժողովուրդ, որ իւր ապրուստը ստանում այդպիսի անչափ պտղաբեր բուսականից, չունէր տեղիք շատ աշխատեցնելու իւր վաստակաբարական զօրութիւնը. նոյն միջոցին ունէր նա աւելորդ կարելի հնարաւորութիւն բաղմանալու և այդպէս յառաջացրեց այն ընկերական և քաղաքական ներգործութիւնքը որ նշանակում են նոցա, որ գտել ենք մեք Եդիպատոսում և Հնդկաստանում: Բաց ի գոյանից կային և այլ ապրուստի հնարներ նոյն տեսակից: Պետեախնձորը (կարտօֆիլ) որ Իրլանդիայում յառաջացուցել է մի այնքան վեհաստակաւ, չափից դուրս բազմութիւն ժողովրդի, ինչպէս ասում են, բնիկ է Պերուի մէջ, և թէպէտ սորան հակառակ է մի մեծակշիռ դիտնականի (Հումբոլդի) վկայութիւն, սակայն անտարակոյս է, որ այդ աշխարհի առաջին յայտնագործութեան միջոցին Եւրոպացիք գտել են այն տեղ առատ գետնախնձոր: Մեքսիկոյում անճանաչ էր կարտօֆիլը Սպանիացոց եկատրութենից յառաջ, բայց թէ Մեքսիկացիք և թէ Պերուացիք լսած մեծի մասին ապրումներին Նանան Ծառի պտուղներից. դա մի այնպիսի անչափ պտղաբեր տունկ է, որ շատ արժանահաւատ վկայութիւններով հիման վերայ միայն կարող ենք ընդունել դորա մասին ստացած տեղեկութիւնքը: Այս արժանի ուշադրութեան տունկը շատ մօտ կապակից է Ամերիկայի մէջ կլիմայի բնական օրէնքների հետ, որ թոյլ չեն տալ դորա սերմերի ապրուստի համար դառնում մի պիտանաւոր հոգաբարձութեան նիւթ, երբ եղանակի ջերմութիւնը անց է կենում մի սահմանեալ (24) աստիճանից: Նորա մեծագիւղ նիւթը այնչափ

Մեքսիկանացի պատմագրան Հքտալբրաօխիալը իւր գործի մէջ Histoire des Chichimeques այս տեղ ու այն տեղ ասում Ամինդրի մասին, յուշանում, որ նա Սպանիացոց եկատրութենից յառաջ ընդհանուր գործածութեան մէջ եր իրրև անդական հնար:

առաջ է, որ մի օրավար հող բանանեան տունկերով կարող է սը-
նուցանել 50 հոդի, մինչ մի օրավար ցորեան Եւրոպայում մնու-
ցանում է 2 մարդ միայն: Հաշուել են, որ, հաւասար հանգամանը-
քի մէջ, Բանանի պաղաբերութիւնը 40 պատիկ աւելի մեծ է քան
թէ կարտօֆիլի պաղաբերութիւնը և 133 պատիկ աւելի մեծ քան
թէ ցորենի:

Այժմ պիտի լուսաբանենք, թէ ինչ պատճառով գլխաւորա-
պէս Մէքսիկոյի և Պերուի քաղաքագործութիւնը աւերեցին նման
էր Հնդկաստանի և Եգիպտոսի քաղաքագործութեանը: Այս չորս
աշխարհների մէջ և հարաւային Ասիայի և միջնաբերեան Աֆ-
րիկայի ինչ ինչ մասերի մէջ եղած է մի տեսակ պիտութիւն, որ
արհամարհելի է, եթէ չափենք նորան եւրոպական չափով, բայց
շատ արժանի ուշադրութեան, հաւեմատելով այն խոշոր ազիտու-
թեան հետ, որ թագաւորութիւն գրացի և համաժամանակեայ ազ-
գերի մէջ: Բայց աւերեալներն դարձ հաւասարապէս անկարող էին
սոյն իսկ չնչին լուսաւորութիւնը աւելի հետի տարածել. բոլորի-
ցուն մէջ հաւասարապէս պահում էր մի և նոյն բանը, այսինքն մի
հասարակապետական հողի, և թագաւորութիւն մի և նոյն բռնա-
կալ զօրութիւնը վերին դասակարգերի և մի և նոյն արհամար-
հական հնազանդութիւնը ստորին դասակարգերի: Պատճառ, ինչ-
պէս տեսանք, այս բոլոր ձևերը քաղաքագործութեան կախ էին
պրշհալ բնական օրէնքներից, որ թէպէտ ձեռնտու էին հարաս-
թեան բազմանալուն, բայց վնասակար էին նորա օրինաւոր բաժա-
մանը ժողովրդի մէջ: Եւ, մինչ մարդերի աճելութիւնը տակա-
ւին իւրեանց տպաւորեան մէջ էին, կարող չէին նորա պատճ-
բազմել ընդդէմ այն բնական ներգործութիւններին և չկարող նո-
ցա յառաջացնել մի ընդհանրական կարգադրութիւն որ ևս փոքճ փոր-
ձեցի նկատողներս: Որպէս Մէքսիկոյի, նոյնպէս և Պերուի մէջ
հիմնադրծվում էին մեծ պաղաբերութեամբ այն ճարտարութիւնքը
մանաւանդ, որ ծառայում էին հարստահարների գեղեցութեանը:
Մեծատուների տուները լի էին զարդարանքով և առանին կարա-
սիքը պատուական կերպով յօրինած, նոցա անուանները փառաւոր
օձոդներով պատած, նոցա հանդիպքը և պաճուճանքը անհաւա-
տալի թանգագին. նոցա գոհարները տակաւորիւա և բազմերիւնակ
կերպարանքով և տպաւորածով. նոցա ճոխ և փարթամ պղեստները
հաղուստիւա փետուրներով զարդարած, ինչպէս դրքա ժողոված

էին տէրութեան ամենահետաքրքրական աշխարհներում: Այս բոլորս ցուցանում էր թէ ոչնչի անտարաքրքիր հարստութեան տէր էին և որպիսի անտարբերութեամբ վատնում էին նորանց:

Անմիջապէս այս դասակարգի իշխանութեան տակ դանուում էր ժողովուրդը և որպիսի կացութեան մէջ: Պերուի մէջ հաստատակ մարդիկը պիտի վճարէին բոլոր հարկերը. մեծատունքը և հողատէրերի դասը բոլորովին ազատ էին: Եւ որովհետև մի այդպիսի կացութեան մէջ կարող չէր ժողովուրդը ոչինչ սեփականութիւն ստանալ, վասն որոյ պարտ էր նոցա տէրութեան ծախքը վճարել իւրեանց անձնական աշխատութեամբ, որ բոլորովին ստորադրած էր տէրութեան հրամանի տակ: Միանգամայն և շատ լաւ հասկանում էին աշխարհի իշխողքը, որ մի այդպիսի կարգի հետ անվիաբանելի է անձնական ազատութեան զգացողութիւնը. վասն որոյ նոքա զրկեին օրէնքներ, որով ստորադրեալների ընթացքը, մինչև ամենաչնչին բաները, դատավճռէր հսկողութեան տակ: Ժողովուրդը այնպէս կաշկանդած էր, որ առանց տէրութեան թոյլ տալուն կարող չէր փոխել ոչ իւր բնակութեան տեղը և ոչ իւր հանդիպմունքը: Ամեն մինին որոշուէր օրէնքը այն վաստակը որ պիտի առնէր նա, այն հագուստքը որ նա պիտի կրէր, այն կինը որ նա պիտի առնուր, և այն զբօսանքը որ նա պիտի վայելէր: Սորա նման էր իրերի ընթացքը և Մէքսիկացոց մէջ. մի և նոյն բնական պայմաններքը ունէին նոյն հետևանքը: Գալեաւոր բանի մէջ, այսինքն ժողովրդի որպիսութեան մասին, Մէքսիկոն և Պերուն քոյր ու եղբայր էին միմեանց: Թէպէտ այս կամ այն էնէին զանազանութիւնքը, երկուքն ևս համահաւասար էին միմեանց այն բանի մէջ, թէ կային միայն երկու դասակարգ, այսինքն մի վերին դասակարգ, որ բաղկանում էր բռնակալներից, և մի ստորին, ճատանելից բաղկացած: Այս կացութեան մէջ էր Մէքսիկոն, երբ դա յայտնապործուեցաւ Եւրոպացոց ձեռով, և պէտ է այդ նպատակը պիտի նա ձգտած լինի սկզբից: Եւ արդարև, այս անիրաւութիւնը դալարել էր այնքան անտանելի, որ, ինչպէս յայտնի է մեզ շատ ստոյգ աղբիւրներից, ժողովրդի ընդհանուր ատելութիւնը էր մինը այն պատճառներից, որ հեշտացուցին Ապանիացոց յաղթադրութիւնը այդ հողի վերայ և փութացուցին մեքսիկանական տէրութեան կործանումը:

Ս. Նալբանց:

(Շարունակութիւնը յետոյ.)

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ.

Վերապատիւ Տէր,

«Ա՛սեաց Աղաւնին» մարտի 15ին հրատարակած լուրերի 89 երեսում նուիրում ընթերցողներին մի ինքնաստեղծ լուր Ախալքալաք քաղաքի ուսումնարանի բարձրապատիւ վերատեսչի վերայ Ստեփանոս Ասագ քահանայի Դէմիրճօղլեանց, որպէս թէ նա Գրիգոր Սրբազանի հետ եղած էր Էջմիածին և ստացած վեհափառ Կաթողիկոսից եպիսկոպոսական մնտանի։

Տարակոյս չկայ, թէ «Աղաւնին» այդ անլոյս պտուղը հնձել է նահանձի բոցերով կայծակուած սև պարտէզից, միամտութեան քօղով ծածկած... (խորամանկութիւնը)։ «Աղաւնին» իրրև աղաւնի (հանդերձով), միամիտ հաւատում ամենայն ձայնի և հնչմունքի. «Աղաւնին» ի սրտէ չէ սիրում նորանց, որոնք առանց դիմակի ծառայումեն ազգին. այլ հեգնօրէն ծաղր է առնում նոցա, կատակում է, վհատեցնելու նորանց. «Աղաւնին» ոչ թէ միայն սուտ է խօսում, չստացողը (Ստեփանոս ասագ քահանայն) ծաղրելու, այլև պարգևողը զրպարտելու։ Ահա նորա սրբապղծութեան նպատակը։ Թէպէտ նամակիս կարդացողներից ոչ սակաւներին ծանօթ են բարձրապատիւ վերատեսչի ազգօգուտ աշխատութիւնքը թէ ուսումնարանի և թէ եկեղեցու մասին, այլև այն գովանի վաստակները, որ յուսալի են նորա հայրենասիրական աշխատասէր հոգուց։ Ուրեմն մի այդպիսի արժանաւոր անձին վարձատրութիւնը եպիսկոպոսական մնտանիով վեհափառ կաթողիկոսի կողմից, մահու մեղք համարելու չէինք, թէև արդէն իսկ անբաջալեր չէ թողել նորան, սրբազան Առաջնորդաց վկայութեամբ և ժողովոդոց խնդրանօք շնորհելով նորան զանազան քահանայական պարգևք։

Ուղիղ գտեցէք, գերապատիւ ընթերցողք. երբ «Աղաւնին» այս ինքնաղիւտ լուրը ստացաւ, արժանն էր նորան միամտութեան դիմակով կեղծաւորուիլ և զրպարտել ազգի հոգևոր հովանապետը և ծաղրել ազգի մի փոքրիկ անդամը, փոխանակ առ ի սրտէ ուրախանալու այդ բանների վերայ։ Մեք կը ներկենք նորան, եթէ ունենար մի բառ գոնէ ճշմարիտ արտասանած. որովհետև վերոյիշեալ Ասագ քահանայն ոչ Գրիգոր եպիսկոպոսի հետ Էջմիածին է եղած, և ոչ եպիսկոպոսական մնտանի է ստացել վեհափառ կաթողիկոսից։ Ուստի,

Այս նամակի գրողը խնդրում գերապատիւ Հիւսիսափայլից հրատարակել այս փոքրիկ նամակը Հիւսիսափայլի գերապատիւ ընթերցողներին, լուծանելու այդ մասին եղած կարծիքները և խափանելու յղացած խորհուրդները։

Խորին յարգանօք

Գերապատուութեան Ձերոյ

Մնումեմ խոնարհ ծառայ ախալքալաքցի

Աղէքսանդր Բաբաղեանց.